Վասն արդարութեան

2 / 2006

Բուն Հայոց 4498 ամի

For the Sake of JUSTICE

2 / 2006

Core Armenian 4498

(57)

Գլխավոր խմբագիր
ԴԱՎԻԹ ԳՅՈՒԼԶԱՏՅԱՆ

Գիտական խմբագրական խորհուրդ

ՌՈՒԲԵՆ ԱՎԱԳՅԱՆ
Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՍԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, փիլիսոփայական գիտությունների դոկտոր

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՄԱՆՈՒԿ ՄԿՐՏՉՅԱՆ
ՌԴ սոցիալական և մանկավարժական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ

ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների դոկտոր

ՄԵԼՍ ՍԱՆԹՈՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԳԱՐԻԿ ՔԵՌՅԱՆ
Քաղաքական գիտությունների դոկտոր

Editor-in-Chief
DAVID GYULZATYAN

Scientific Editorial Board

RUBEN AVAGYAN
Doctor of Law, Professor

SEN AREVSHATYAN
Academician of the RA National Academy of Sciences, Doctor of Philosophy

HOVHANNES HOVSEPYAN
Doctor of Law, Professor

MANUK MKRTCHYAN
Associate Member of the RF Academy of Soci Pedagogical Sciences

GEVORK POGHOSYAN
Doctor of Philosophy

MELS SANTOYAN
Doctor of Philology, Professor

GARIK KERYAN
Doctor of Politology

Խմբագիրներ
ՍՈՖՅԱ ԲԱԲԱՅԱՆ
ՍԹԻՎ ԲԼՈՒՄ

Համակարգչային ձևավորող
ԱՐՄԵՆ ՕՍԻՊՈՎ

Editors
SOFIA BABAYAN
STEVE BLOOM

Designer
ARMEN OSIPOV

«ՎԱՄՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ» հանդեսն ընդգրկված է ատենախոսությունների արդյունքների տպագրման համար ընդունելի ամսագրերի ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ցուցակում:

FOR THE SAKE OF JUSTICE is included in the list of reviews appropriate for theses results publication of THE RA HIGH QUALIFICATION COMMISSION.

Журнал “ВАСН АРДАРУТЕАН” (“Во имя справедливости”) включен в список допущенных ВЫСШЕЙ АТТЕСТАЦИОННОЙ КОМИССИЕЙ РА для публикации результатов диссертационных работ.

ՀԱՍՑԵՆ՝ ՀՀ, ք. Վանաձոր, Շիրակացու I նրբ., 2
Հեռ. (+374 322) 2-29-67, Հեռ./ֆաքս (+374 322) 4-47-81
էլ. փոստ vasn@acrpc.am
URL http://www.acrpc.am

ADDRESS: 1 Shirakatsi Lane, Building 2, Vanadzor, RA
Tel. (+374 322) 2-29-67, Tel./Fax (+374 322) 4-47-81
E-mail: vasn@acrpc.am
URL: http://www.acrpc.am

ՀԻՄՆԱԴՐՎԵԼ Է 1989թ.
FOUNDED IN 1989

Գրանցված է ՀՀ Արդարադատության նախարարությունում
Գրանցման վկայական՝ թիվ 1016

Ստորագրված է տպագրության 24.03.2006
Ծավալը՝ 6.5 տպագր. մամուլ, տպաքանակը՝ 200

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

ՀԱՆՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Ա. Քաղաքական վերլուծության տեսական և կիրառական հայեցակետերի մասին 4

ԽԱՉԱՏՐՅԱՆ Ն. Չարիքի դրսևորման առանձնահատկությունները արդի հասարակությունում 13

ՎԱՐՏԻԿՅԱՆ Ա. Պետական միգրացիոն քաղաքականության և հայաստանյան միգրանտի կենսական պլանների զուգահեռման հեռանկարները 17

ԱՎԵՏՅԱՆ Ն. Ինչից պետք է սկսել կարիերիայի պլանավորումը 24

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒԼԶԱԴՅԱՆ Դ. Մեր վերջին զանգահարը (Ս. Կապուտիկյանի «Վերջին զանգ» ժողովածուի ուրվագծային քննություն) 27

ՀԱՄԲԱՐՅԱՆ Ա. Նատյուրմորտի ժանրը գեղանկարիչ Կառլոս Աբովյանի արվեստում (Նույնատիպ գործերի վերլուծություն) 36

ՄԱԿ-ի էջ 40

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ Գ. Դեռահասների՝ մարզական գործուն պարապմունքների ներգրավման հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները 42

ԲԵԺԱՆՅԱՆ Ս. դասղեկների կողմից բարձր դասարանցիների մեջ բարոյական արժեքների դաստիարակման ուղղությամբ կատարված փորձարարական աշխատանքների գործընթացը և հիմնական արդյունքները 44

ՆԱՍԻԼՅԱՆ Է. «Կառավարման սոցիոլոգիա և կոնկրետ սոցիոլոգիական հետազոտություններ» առարկայի դասավանդման մեթոդիկայի ուրվագիծ 49

ՄԻՆԱՍՅԱՆ Ս. Հասարակական գործուն դպրոցը համայնք - դպրոց համակարգում 51

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԵԼԻ ԴԵՄՔԵՐ

ԲԻՇԱՐՅԱՆ Հ. Մկրտիչ Խրիմյանը՝ հայ հասարակական մտքի գնահատմամբ 58

ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Երևանի պետական համալսարանի քաղաքագիտության ամբիոնի հայցորդ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԻ ՄԱՍԻՆ

Քաղաքական վերլուծությունը՝ որպես մասնագիտություն, համեմատաբար երիտասարդ է, և դրա հետազոտումը, առավելապես այն երկրներում, որտեղ քաղաքական վերլուծությունը դեռ ձևավորման և կայացման փուլում է, ունի կարևոր տեսական և հատկապես կիրառական նշանակություն:

«Վերլուծություն» բառը թարգմանական համարժեքն է հունարեն «analysis» բառի, որը նշանակում է հետազոտվող օբյեկտի մտովի բաժանում բաղկացուցիչ մասերի և դրանցից յուրաքանչյուրի առանձին ուսումնասիրում: Քաղաքագիտության մեջ բավականին հաճախ են կիրառվում տրամաբանական վերլուծությունը և համադրությունը (վերլուծության ընթացքում ստացված բոլոր տվյալների միավորում), որոնք հնարավորություն են տալիս ամբողջական և ընդհանուր պատկերացում կազմել ուսումնասիրվող օբյեկտի մասին:

Ժամանակակից քաղաքագիտական գրականության մեջ «քաղաքական վերլուծություն» հասկացությունը կիրառվում է հիմնականում երեք իմաստով՝ հիմնարար-տեսական, էմպիրիկ և կիրառական:

Հիմնարար-տեսական քաղաքական վերլուծությունը (ՀՔԱ) ներառում է քաղաքականության բնագավառի հիմնարար հայեցակարգային հետազոտությունները, նրա կառուցվածքն ու դինամիկան: Նման մեկնաբանությամբ այն գրեթե նույնացվում է «տեսական քաղաքական հետազոտություն» հասկացության հետ: Նմանատիպ մոտեցումն ամրագրված է Դ. Իստոնի, Ռ. Դալի և ուրիշների տեսություններում[1]: Տեսական քաղաքական վերլուծության օրինակ կարող են լինել համեմատական վերլուծությունը, հոգեբանական, սոցիալական վերլուծությունները և այլն:

Երկրորդը էմպիրիկ քաղաքական վերլուծությունն է (ԷՔԱ), որը ենթադրում է սկզբնական տվյալների հավաքագրում ու նկարագրում, համակարգում ու մշակում: Քաղաքական վերլուծության այս տեսանկյունները քաղաքագիտության շրջանակներում նույնպես ձեռք է բերել սահմանակարգային (ինստիտուցիոնալ) բնույթ՝ վերածվելով առանձնահատուկ գիտակարգի, այն է՝ քաղաքագիտական հետազոտությունների մեթոդների: Ի հակադրություն հիմնարար-տեսական ուղղության, որտեղ վերլուծական հիմնական միավորը «հղացքն» է («կոնցեպտ»), որն արտահայտում է քաղաքական գործընթացներում առկա պատճառային, գործառական և այլ կապերը, այստեղ հիմնական միավորը «տվյալներն» են, այսինքն՝ սկզբնական տեղեկատվությունը քաղաքական կյանքի այս կամ այն իրադարձության մասին: Եթե հիմնարար վերլուծության գլխավոր հենարանը արտածական (դեդուկտիվ) եզրակացությունն է, ապա էմպիրիկ վերլուծության դեպքում՝ մակածական (ինդուկտիվ) ընդհանրացումը: Վերլուծության նման մեխանիզմների կարելի է հանդիպել, օրինակ, ամերիկյան քաղաքագետներ Ջ. Մանհեյմի և Ռ. Ռիչի աշխատությունում[2]: Նշենք նաև, որ էմպիրիկ վերլուծությունը կարող է ծառայել քաղաքականության ինչպես տեսական, այնպես էլ գործնական հիմնախնդիրների լուծմանը:

Կիրառական քաղաքական վերլուծությունը (ԿՔԱ) ամերիկյան քաղաքական պրակտիկայում արդեն ավելի քան 35 տարի գոյություն ունի որպես ակադեմիական գիտակարգ և ժամանակագրական առումով զիջում է էմպիրիկ վերլուծությանը, որն արդեն կես դարից ավել է, ինչ գոյություն ունի որպես մասնագիտու-

թյուն: Կիրառական վերլուծության դեպքում առաջին պլան են մղվում ոչ թե հիմնավորված տեսության կառուցումը կամ բազմաթիվ տվյալների հավաքագրումը, այլ հասարակական հիմնախնդիրների լուծման և գնահատման միջոցները՝ մասնավոր պատվիրատուի (որպես կանոն, քաղաքական դերակատարներից մեկի) համար: Կիրառական քաղաքական վերլուծության ժամանակ արտածության և մակածության մեթոդները հաճախ են միավորվում, սակայն այստեղ գերակայում է հետածական-փորձագիտական (ռետրոդուկտիվ-էքսպերտային) մտածողությունը: Ի տարբերություն տեսաբանի, որը փորձում է կառուցել քաղաքականության վերացական կաղապարներ (մոդելներ) և «գործիքավորողի», որն զբաղվում է նրանց գործառնացմամբ (օպերացիոնալացմանը)*՝ էմպիրիկ տվյալների մակարդակով, «կիրառագետը» կառուցում է իր բնույթով յուրօրինակ քաղաքական իրավիճակի աշխատանքային կաղապար՝ առաջինից վերցնելով հայեցակարգային գիտելիքները, իսկ երկրորդից՝ փաստական տեղեկատվությունը: Այդ իսկ պատճառով կիրառական վերլուծությամբ զբաղվողների համար առաջնային է համարվում կարգադրողական (պերսկրիպտիվ) գործառույթը, տեսաբանի համար՝ բացատրողական (էքսպլիկատիվ) գործառույթը, իսկ գործիքավորողի համար՝ նկարագրողական (դեսկրիպտիվ) գործառույթը:

Աղյուսակ 1

Քաղաքական վերլուծության հիմնական չափանիշների հարաբերակցությունն ըստ Ա.Դեգտյարյովի[3]

N	Հարաչափեր (պարամետրեր)	Չափումներ		
		Հիմնարար (ՀՔԱ)	Էմպիրիկ (ԷՔԱ)	Կիրառական (ԿՔԱ)
1.	**որոշիչ վեկտոր**	արտածություն	մակածություն	հետածություն
2.	**գիտելիքի բնույթը**	վերացական-տեսական	մասնավոր-փաստական	համադրող-նախագծային
3.	**կաղապարման դերը**	հայեցակարգային անդրկաղապարների (մետամոդելների) մշակում	կաղապարների բնութագրիչների գործառնական կիրառում	պրոբլեմա-իրավիճակային կաղապարների կառուցում
4.	**հիմնական վերլուծական միավոր**	հղացք (կոնցեպտ)	տվյալներ	հիմնախնդիրներ
5.	**գերակայող գործառույթ**	բացատրողական	նկարագրողական	կարգադրողական

* Գործառնացում - համեմատաբար վերացական տեսական հասկացությունների վերափոխումը և վերաձևակերպումը առավել հստակ փոփոխականների և կախյալների:

Մասնագիտական գրականության մեջ առկա են քաղաքական վերլուծության բազմաթիվ սահմանումներ: Սակայն մինչ կանդրադառնանք քաղաքական վելուծության բուն սահմանումներին, նշենք, որ քաղաքագիտության, ինչպես նաև հարակից գիտությունների ներկայացուցիչները տվյալ հասկացությունը սահմանել են՝ այն դիտարկելով տեսական և կիրառական տեսանկյուններից**:

Այսպես՝ քաղաքագիտության մեջ կարելի է առանձնացնել երեք հիմնական մոտեցումներ «քաղաքական վերլուծություն» հասկացության վերաբերյալ:

Առաջին մոտեցումը ենթադրում է, որ քաղաքական վերլուծությունը տրամաբանական վերլուծության հոմանիշ է՝ ուղղված հիմնարար քաղաքական խնդիրների լուծմանը: Այս մոտեցման կողմնակից է Ռ. Դալը, որն ուսումնասիրում է տեսական քաղաքագիտության հիմնախնդիրները, ինչպիսին են, օրինակ, քաղաքական համակարգերի, ռեժիմների և ինստիտուտների տեսակները, գործունեությունն ու գործառությունը[4]: Այստեղ առաջնայնությունը տրվում է տեսական քաղաքագիտությանը, որի պրոբլեմատիկան ուսումնասիրվում է տրամաբանական վերլուծության միջոցով: Դրա համատեքստում կիրառական քաղաքագիտությունը, ի տարբերություն տեսական քաղաքագիտության, հեղինակի կողմից դիտվում է բացառապես երկրորդական գիտակարգ: Կիրառական քաղաքագիտության նման թերագնահատումն առկա է մի շարք այլ տեսաբան քաղաքագետների շրջանում (Դ. Իստոն): Սակայն քաղաքագիտության բնագավառում վերջին զարգացումները ցույց տվեցին, որ կիրառական քաղաքագիտության նկատմամբ հետաքրքրությունն ու նրա կարևորությունը հետզհետե մեծանում է:

«Քաղաքական վերլուծություն» հասկացության երկրորդ մոտեցումը ընդունում է քաղաքագիտական գիտելիքի երկվությունը («դուալիզմը»), որը ենթադրում է, որ քաղաքական հետազոտությունների տեսական և կիրառական ուղղությունների բաժանմանը զուգահեռ անհրաժեշտ է նաև տարբերակել քաղաքական վերլուծության երկու տեսակ, այն է՝ տեսական և կիրառական: Այս մոտեցման կողմնակիցները տեսական քաղաքական վերլուծության դերը գնահատում են հիմնարար, իսկ կիրառական քաղաքական վերլուծության դերը՝ կիրառական հետազոտություններում:

Այս հարցին հետաքրքիր մոտեցում է ցուցաբերում Լ.Պալը, որը, տարբերակելով քաղաքական վելուծության երկու տեսակ, նշում է, որ տեսական և կիրառական հետազոտություններն ուղղված են քաղաքական գործընթացների տարբեր տարրերի ուսումնասիրմանը[5]: Նա կիրառական քաղաքական վերլուծությունը բնորոշում է որպես «հանրային հիմնախնդիրների լուծմանը նպատակաուղղված ինտելեկտի կիրառում»[6]: Նման մոտեցում կարելի է նկատել Ա. Դեգտյարյովի մոտ, որը նույնպես, առանձնացնելով քաղաքագիտության երկու մակարդակներ, տարբերակում է երկու տեսակի քաղաքական վերլուծություններ[7]:

Ըստ Պիտսբուրգի համալսարանի պրոֆեսոր Վ. Դանի՝ քաղաքական վերլուծությունը ինտելեկտուալ և պրակտիկ գործունեություն է՝ ուղղված որոշումների ընդունման գործընթացին և այդ գործընթացի վերաբերյալ գիտելիքի արտադրությանը, ինչպես նաև կիրառական սոցիալական գիտակարգ է, որում կիրառվում են հետազոտության համագիտակարգային (մուլտիդիսցիպլինար) գիտելիքներն ու մեթոդները, որպեսզի իրականացվի, գնահատվի և փոխանակում կատարվի համապատասխան տեղեկատվությամբ[8]: Այլ խոսքերով՝ կիրառական քաղաքական վերլուծությունը ներառում է փորձագիտական և կիրառական-գիտական գործունեություն տվյալ կառավարչական գիտելիքի ձևավորման համար՝ էմպիրիկ տեղեկատվության հավաքագրման և համապատասխան գնահատման հիման վրա:

Մի շարք, հատկապես արևմտյան մաս-

** Նշենք, որ հիմնարար-տեսական քաղաքական վերլուծությունը հիմնականում նույնացվում է անգլերեն ***«political analysis»*** (քաղաքականության վերլուծություն) հասկացության հետ, իսկ կիրառական քաղաքական վերլուծությունը՝ ***«policy analysis»*** (վարվող քաղաքականության վերլուծություն) հասկացության հետ:

նագետների սահմանումներից և դատողություններից ելնելով՝ կարելի է առանձնացնել նաև երրորդ մոտեցումը, որի համաձայն՝ «քաղաքական վերլուծություն» հասկացությունը ենթադրում է բացառապես կիրառական վերլուծություն:

Այս մոտեցումը կարելի է նկատել Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր Ա. Վիլդավսկու մոտ, որը կիրառական քաղաքական վերլուծության բնագավառին վերագրում է այն գործունեությունը, որը կապված է հասարակական հիմնախնդիրների ձևավորման, ինչպես նաև դրանց հետագա լուծման հետ: Ըստ նրա՝ քաղաքական վերլուծությունը որոշումների ընդունման գործիք է հրատապ քաղաքական խնդիրների վերաբերյալ, որոնք ծառացել են տվյալ քաղաքական գործընթացի մասնակիցների առջև. քաղաքական վերլուծությունը զուտ կիրառական գիտակարգ է[9]:

Երրորդ մոտեցման կողմնակիցներ են նաև քաղաքագետներ Բ. Հոգվուդը և Լ. Գանը, որոնք քաղվերլուծության մեջ տեսնում են հանրային գիտության ճյուղ, որը կենտրոնացած է կիրառական հետազոտությունների վրա՝ կողմնորոշվելով պատվիրատուի մասնավոր հիմնախնդրի և նրա քաղաքական գործունեության պլանավորման վրա[10]: Մասնագիտական բառարաններից մեկում «քաղաքական վերլուծություն» հասկացությունը սահմանվում է որպես «հանրային ճարտարագիտության արվեստ, որն առնչվում է հանրային հիմնախնդիրների հաղթահարմանն ուղղված նախագծերի առաջխաղացման ու արդյունքների հետ»[11]:

Քաղաքական վերլուծության առավել նեղ սահմանում են տալիս Դ. Վեյմերը և Ա. Վայնինգը, որոնց համաձայն՝ այն «պատվիրատուին ուղղված խորհուրդ է, որը վերաբերում է հանրային որոշումների բնագավառին և սահմնվում է սոցիալական արժեքներով»[12]: Ինչպես տեսնում ենք, այս հեղինակները նույնպես քաղաքական վերլուծությունը կապում են կիրառական հետազոտությունների հետ: Նմանատիպ մոտեցում ունի նաև Վ.Վիլյամսը, որի կարծիքով քաղաքական վերլուծությունը «տեղեկատվության համադրման միջոցների ամբողջություն է, որոնք կիրառվում են քաղաքական որոշումների ձևաչափի որոշման և ապագա պահանջմունքների վերաբերյալ կանխատեսումների կազմման համար»[13]: Մի շարք արևմտյան քաղաքագետներ նշում են, որ ընթացիկ քաղաքական պրակտիկայի առավել հրատապ հիմնախնդիրների վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացը կազմում է քաղաքական վերլուծության կարևորագույն մասը: Սակայն պետք չէ մոռանալ, որ իրավասու որոշումների ընդունումն անհնարին է առանց այդ գործընթացի երկու այլ կարևորագույն բաղկացուցիչների, դրանք են՝ քաղաքական իրավիճակի վերլուծությունը և վերջինիս զարգացման վերաբերյալ ենթադրությունների ստեղծումը: Ըստ Կ. Սիմոնովի՝ քաղաքական վերլուծությունը ներառում է երեք հիմնական բաղկացուցիչներ՝ ստեղծված քաղաքական իրավիճակի վերլուծություն, վերջինիս զարգացման ընթացքի վերաբերյալ կանխատեսում և իրավասու որոշումների ընդունում:

Ակնհայտ է, որ վերը նշված սահմանումներից և ոչ մեկը չի կարող ամբողջությամբ սպառել «քաղաքական վերլուծություն» հասկացության բովանդակությունը: Քաղաքական վերլուծության վերաբերյալ համընդգրկուն և համակողմանիորեն ընդունված սահմանման բացակայությունը պայմանավորված է վերջինիս բարդ և բազմակողմանի բնույթով: Ելնելով վերոհիշյալ քննարկումներից՝ փորձենք ներմուծել քաղաքական վերլուծության հետևյալ սահմանումը. «Քաղաքական վերլուծությունը մեթոդների ամբողջություն է՝ ուղղված քաղաքական երևույթների ուսումնասիրմանը, որի նպատակն է քաղաքական գիտելիքի ստեղծումն ու հրատապ հիմնախնդիրների լուծումը՝ իրավասու և արդյունավետ որոշումների ընդունմամբ»:

Այսօր, իրոք, մասնագետները տարակարծիք են այն հարցում, թե քաղաքական վերլուծությունը տեսակա՞ն, թե՞ կիրառական քաղաքագիտության գիտակարգ է, որի պատասխանը հստակ պատկերացնելու համար նախ և առաջ պարզենք տեսական և կիրառական քաղաքագիտության առարկան և նպատակը:

«Ընդհանուր քաղաքագիտություն» և «կիրառական քաղաքագիտություն» հասկացությունների գիտական կիրառումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնց հիմնական գործոնը հետազոտության երկու ուղղությունների ձևավորումն է: Առաջինի ներկայացուցիչներն այն քաղաքագետներն են, որոնք զբաղվում են տեսական հիմնախնդիրներով, իսկ երկրորդինը՝ նրանք, որոնք դիտարկում են մասնավոր քաղաքական իրավիճակներն ու իրադարձությունները և խորհուրդներ են տալիս որոշումների ընդունման գործընթացում: Տեսական քաղաքագիտությունը լուծում է գիտական խնդիրներ՝ կապված քաղաքական գործունեության գիտելիքի ձևավորման, քաղաքական զարգացման գործընթացների ընկալման և մեկնաբանման, քաղաքական հասկացությունների, քաղաքական հետազոտության մեթոդների և մեթոդաբանության մշակման հետ:

Այսպես՝ կիրառական հետազոտություններն ուղղված են քաղաքականության սուբյեկտների առջև ծառացած հրատապ հիմնախնդիրների լուծմանը, որն էլդնրանց նպատակն է: Իսկ նրա խնդիրն է, հիմնվելով որոշակի նպատակների և չափանիշների վրա, նախանշել կամ մշակել այնպիսի ռազմավարություն, որ ուղղված լինի այդ հիմնախնդիրների լուծմանն ու սոցիալական պայմանների բարելավմանը: Խնդրահարույց իրավիճակները, որոնց բախվում է կիրառական քաղաքագիտությունը, որպես կանոն, ունենում են հստակորեն սահմանված ժամանակային և տարածքային բնութագրություններ:

Կիրառական քաղաքագիտության օբյեկտ են ընթացիկ քաղաքական պրակտիկայից բխող լուծում պահանջող իրավիճակները, որոնց լուծումը պետք է տեղի ունենա բավականաչափ սահմանափակ ժամանակահատվածում:

Ինչ վերաբերում է տեսական քաղաքագիտությանը, ապա նրա խնդիրն է բացատրել այն հիմնահարցերը, որոնցից առանցքայինը քաղաքական կյանքի գործառության իրական մեխանիզմների բացահայտումն է: Պարզ է, որ նման հիմնահարցերը կարող են լուծվել քաղաքական գործընթացների համակողմանի ուսումնասիրության դեպքում, այսինքն՝ տեսաբան - քաղաքագետը կարող է դուրս գալ ժամանակի և տարածության սահմաններից: Օրինակ՝ համեմատել տարբեր երկրների ժամանակակից կամ անցյալ քաղաքական համակարգերը: Հետևաբար, տեսական քաղաքագիտության օբյեկտ կարելի է անվանել անցյալում կատարված և ներկայում կատարվող բոլոր քաղաքական գործողությունների միասնությունը, վերջիններս իրականացնողներին և դրանց արդյունքները: Քաղաքական գործողություն ասելով՝ այստեղ նկատի ունենք քաղաքական ինստիտուտների և համակարգերի ստեղծմանն ուղղված գործողությունները և դրանց գործառության արդյունքները:

Այստեղ հարկ է նշել նաև, որ եթե կիրառական քաղաքագիտությունը եռանդով մասնակցում է քաղաքական գործընթացներին, և նրա օբյեկտը հրատապ պրոբլեմային իրավիճակներն են, ապա այն կարող է հանդես գալ որպես հիմնական նյութ տեսական հետազոտությունների համար: Չէ՞ որ կիրառական քաղաքագիտությունը ազդում է սոցիումի քաղաքական կյանքի փոփոխման վրա և հետևաբար մասամբ ձևավորում տեսական քաղաքագիտության օբյեկտը:

Կիրառական և տեսական քաղաքագիտությունները տարբերվում են նաև ըստ իրենց սուբյեկտների: Տեսական քաղաքագիտության սուբյեկտներն են, առաջին հերթին, խոշոր համալսարաններն ու ինստիտուտները, որոնք ներկայացնում են գիտական-քաղաքագետների ինքնատիպ միավորումներ: Կիրառական քաղաքական վերլուծությունը, որպես կանոն, իրականացվում է վերլուծական կենտրոնների կողմից, որոնք գործում են կամ որպես անկախ ֆիրմաներ, կամ էլ ներկայացնում են պետական կառույցի բաժիններ:

Այստեղ հարկավոր է նշել նաև անուղղակի սուբյեկտների առկայության մասին, որոնք ըստ էության հենց պատվիրատուներն են: Նրանք անմիջականորեն չեն մասնակցում գիտական գործընթացներին, բայց որոշում են դրանց սահմանները: Կիրառա-

կան հետազոտություններում պատվիրատու-կատարող հարաբերությունները բավականին հստակորեն են կառուցված, որը չի կարելի ասել հիմնարար հետազոտությունների մասին: Առաջինի դեպքում որպես պատվիրատու կարող են հանդես գալ քաղաքական որոշումներ կայացնողները, որոնք շահագրգռված են հրատապ քաղաքական հիմնախնդիրների վերաբերյալ մասնագիտական խորհուրդներ ստանալու մեջ: Իսկ երկրորդի դեպքում, ինչպես նշեցինք, շատ դժվար է հստակորեն սահմանել պատվիրատուին, սակայն ըստ էության, որպես այդպիսին հանդես է գալիս հենց հասարակությունը, որը ձգտում է ճանաչել քաղաքական կյանքի գործառնության իրական մեխանիզմները:

Աղյուսակ 2

Քաղաքական գիտելիքի տարբերակման հիմնական չափանիշները՝ ըստ Կ. Սիմոնովի և Ա. Դեգտյարյովի[14]

N	Համեմատության չափանիշները	Տեսական քաղաքագիտություն	Կիրառական քաղաքագիտություն
1.	նպատակը	քաղաքական աշխարհի գործառնության մեխանիզմների բացահայտում	քաղաքական դերակատարների առջև ծառացած հրատապ խնդիրների լուծում
2.	օբյեկտը	քաղաքական գործընթացներ, որոնք սահմանափակված չեն ժամանակա-տարածքային գործոնների ազդեցությամբ	պրոբլեմային իրավիճակներ ընթացիկ քաղաքական պրակտիկայից՝ ժամանակա - տարածքային խիստ տրված չափանիշներով
3.	գործառույթը	ճանաչողական (կապերի, մեխանիզմների, օրինաչափությունների ճանաչում)	վերափոխական (ճանաչված մեխանիզմների կիրառում)
4.	ճանաչողական շրջապտույտի փուլը	էմպիրիկ տվյալների հավաքագրումից և նկարագրումից դեպի վերացական-տեսական կաղապարներ	վերացական-տեսական կաղապարներից դեպի պրակտիկ տեխնոլոգիաներում դրանց մասնավոր համադրումը
5.	սուբյեկտը	գիտնականներ՝ միավորված հատուկ գիտական հաստատությունների մեջ (համալսարաններ, ինստիտուտներ)	վերլուծաբաններ, որոնք աշխատում են հատուկ մասնագիտացված կենտրոններում և պետական կառույցներում
6.	անուղղակի սուբյեկտը (պատվիրատուն)	սոցիում	քաղաքական դերակատարներ

Ամփոփելով վերը նշվածը՝ նշենք, որ քաղաքական վերլուծության հետազոտության լայն շրջանակները դժվարացնում են քաղաքական վերլուծության սահմանման հստակությունը: Ոմանք նրա հիմքում տեսնում են կիրառական քաղաքագիտությունը և ուսումնասիրում են միայն կիրառական քաղաքական վերլուծությունը՝ հիմնական ուշադրությունը բևեռելով մաթեմատիկական մեթոդներին և կաղապարմանը, մյուսները քաղաքական վերլուծությունը համարում են տեսական քաղաքագիտության բաղկացուցիչ մաս: Եթե երկրորդի դեպքում ուսումնասիրվում են քաղաքական աշխարհի գործառնության ընդհանուր օրինաչափությունները, և փորձ է կատարվում սահմանել նրա փոփոխությունների միջոցներն ու ուղղությունները, ապա առաջին մոտեցման ներկայացուցիչները զբաղվում են ընթացիկ քաղաքական պրակտիկայի հրատապ որոշումների ընդունման մեթոդների և միջոցների մշակմամբ:

Կարծում ենք, որ իրականում քաղաքական գիտության մեջ այս երկու մակարդակները փոխլրացնում են միմյանց: Մի կողմից՝ առանց էմպիրիկ նյութի հավաքագրման, դասակարգման և վերլուծության քաղաքական գիտությունը կարող է վերածվել չոր և կիրառական նշանակությունից զուրկ մի բնագավառի: Ինչ խոսք, կիրառական վերլուծության արդյունքները իրենց ներդրումն ունեն տեսական քաղաքագիտության մեջ՝ հարստացնելով հիմնարար տեսությունները և ստեղծելով նոր վարկածներ ու մոտեցումներ: Մյուս կողմից՝ առանց բազմատեսակ քաղաքական իրադարձությունների և բազմաթիվ փաստերի տեսական հիմնավորման ու ընդհանրացման անհնարին կլիներ ստեղծել ամբողջական պատկեր և հասկանալ մասնավոր իրադարձության էությունը: Այս երկու բնագավառների փոխազդեցությունն է, որ պայմանավորում է քաղաքական գիտության լիարժեք զարգացումը: Քաղաքական վերլուծության բաժանումը տեսականի և կիրառականի զուտ պայմանական բնույթ է կրում, և սրանցից յուրաքանչյուրն, ինչ խոսք, իր ներդրումն ունի ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ պրակտիկ հիմնախնդիրների լուծման գործընթացում: Հիմնարար և կիրառական քաղաքական հետազոտությունները չեն բացառում միմյանց: Միևնույն ժամանակ կարծում ենք, որ չնայած վերը նշված մոտեցումների բազմազանությանը՝ այնուամենայնիվ անհրաժեշտ է տարբերակել տեսական և կիրառական քաղաքական վերլուծությունները՝ տեսական վերլուծության դերը գնահատելով հիմնարար հետազոտություններում, իսկ կիրառական վերլուծության դերը՝ կիրառական հետազոտություններում: Այստեղ հարցն այն է, թե ինչպիսի հիմնախնդիր և հարց ենք վերլուծում, որն է մեր նպատակը, ինչ արդյունքի ենք ուզում հասնել: Այս երկու վերլուծությունների սահմանազատման համար նպատակահարմար ենք գտնում ներմուծել «քաղաքական վերլուծության տեսական գործառույթ» և «քաղաքական վերլուծության կիրառական գործառույթ» հասկացությունները: Առաջինը ուղղված է քաղաքական երևույթների և իրադարձությունների ճանաչողությանը, քաղաքական կյանքի ընդհանուր օրինաչափությունների բացահայտմանը, երկրորդը՝ հրատապ և որոշակի քաղաքական հիմնախնդիրների լուծմանը, տվյալ հիմնախնդիրների վերաբերյալ արդյունավետ որոշումների կայացմանը:

Ահա այս մոտեցման դեպքում է հնարավոր սահմանազատել տեսական քաղաքական վերլուծությունը կիրառականից և որոշել հետազոտության շրջանակները և իմաստային առանձնահատկությունները (տե՛ս գծապատկեր 1):

Այսօր արդեն փոխվում է մոտեցումը քաղաքագիտության կարևորության և հնարավորությունների վերաբերյալ: Ամրապնդվում է այն մոտեցումը, որ քաղաքական իրավիճակի վերլուծությունը, քաղաքական կանխատեսումը և քաղաքական որոշումների ընդունումը պահանջում են գիտական մոտեցում, և որ քաղաքագիտությունը հնարավորություն ունի առաջարկելու դրանց կիրառման արդյունավետ մեխանիզմներ:

Այսօր Հայաստանում քաղաքականության որոշ սուբյեկտներ ընդունակ չեն իրականացնել արդյունավետ քաղաքական վերլուծություն և դրա հիման վրա ընդունել շահեկան

Գծապատկեր 1

Քաղաքական վերլուծության տեսական և կիրառական տեսանկյունների հարաբերակցությունը



որոշումներ: Սրա հետևանքով դժվարանում է քաղաքական համակարգի կայացման գործընթացը, թուլանում է քաղաքական ընտրանու և պետական իշխանությունների նկատմամբ բնակչության վստահությունը: Վերը նշված հիմնախնդիրների լուծման տարբերակ կարող է լինել պրակտիկայում քաղաքական վերլուծության կիրառումը, որը ենթադրում է գիտական մեթոդների այնպիսի ամբողջություն, որոնց շնորհիվ հնարավոր է իրականացնել որոշակի քաղաքական իրադարձությունների և իրավիճակների հետազոտություն, դրանց հնարավոր զարգացումների վերաբերյալ ճիշտ կանխատեսում և իրատեսական քաղաքական որոշումների ընդունում: Օբյեկտիվ քաղաքական վերլուծության կիրառումը կարող է ամբողջությամբ բարեփոխել որոշումների ընդունման գործընթացը:

Այսպիսով՝ քաղաքական վերլուծության կիրառումն անհրաժեշտ է քաղաքականության սուբյեկտների համար, սակայն առավել կարևոր է դրա օգտագործումը հատկապես պետական կառավարման համակարգում, որի կողմից ընդունվող որոշումները առանցքային նշանակություն ունեն թե՛ քաղաքական գործընթացների, թե՛ հասարակական կյանքի վրա:

---

[1] Ավելի մանրամասն տե՛ս *Easton D.* The Analysis of Political Structure. New York, 1990, *Dahl R.* Modern Political Analysis. Prentice Hall, 2003.

[2] Ավելի մանրամասն տե՛ս *Manheim J.,* Rich R. Empirical Political Analysis: Research methods in political science. New York, 1995.

[3] Այդ մասին տե՛ս *Дегтярев А. А.,* Политический анализ как прикладная дисциплина: предметное поле и направления разработки // Полис, 2004, №1. С. 156.

[4] Ավելի մանրամասն տե՛ս *Easton D.* The Analysis of Political Structure. New York, 1990, Dahl R. Modern Political Analysis. Prentice Hall, 2003.

[5] Տե՛ս *Pal L.* Public Policy Analysis: An Introduction. Scarborough, 1992, p. 20.

6 Նույն տեղում, էջ 16:

7 Այդ մասին տե՛ս *Дегтярев А. А.,* Политический анализ как прикладная дисциплина: предмет-

ное поле и направления разработки // Полис, 2004, №1. С. 155-156.

[8] Տե՛ս *Dunn W.* Public Policy Analysis: An Introduction. Englewood Cliffs, 2004, p. 1-2.

[9] Տե՛ս *Wildavsky A.* Speaking Truth to Power. The Art and Craft of Policy Analysis. New Brunswick, 1987, p. 1-3.

[10] Այդ մասին տե՛ս *Hogwood B., Gunn L.* Policy Analysis for the Real World. Oxford, 1984, p. 29.

[11] Blacwell Encyclopedia 1996, p. 432.

[12] *Weimer D., Vining A.* Policy Analysis: Concepts and Practic. Englewood Cliffs, 1992, p.1.

[13] *Williams W.* Social Policy Research and Analysis. N.Y., 1971, p.11.

[14] Այդ մասին տե՛ս *Дегтярев А. А.,* Политический анализ как прикладная дисциплина: предметное поле и направления разработки // Полис 2004, ?1, С.157; *Симонов К. В.,* Политический анализ.М. 2002.С.14.

ABOUT THEORETICAL AND APPLIED ASPECTS OF POLITICAL ANALYSIS

ARUSYAK ALEKSANYAN
Ph.D.-Student of Political Science Department of YSU

Summary

The article considers dominant approaches to the term “political analysis” in political science, its main dimensions used in modern political science literature. Presenting theoretical and applied aspects of this conception, the author discusses main definitions given within the scope of these aspects.

For through explanations of the terms “political analysis” and “policy analysis” in the article, the basic criteria of theoretical and applied political knowledge differentiation are presented. The author offers his own understanding and definition of political analysis as theoretical and applied discipline, and inserts such terms as “applied function of political analysis” and “theoretical function of political analysis” for these concepts’ differentiation.

О ТЕОРЕТИЧЕСКИХ И ПРИКЛАДНЫХ АСПЕКТАХ ПОЛИТИЧЕСКОГО АНАЛИЗА

АРУСЯК АЛЕКСАНЯН
Соискатель Кафедры политология ЕГУ

Резюме

В статье рассматриваются доминирующие в политологии подходы к пониманию термина "политический анализ", его основные измерения, используемые в современной политологической литературе. Представляя теоретические и прикладные аспекты данного понятия, автор рассматривает основные определения, данные в рамках этих аспектов.

Для большего разъяснения понятий "теоретический политический анализ" и "прикладной политический анализ" в статье приводятся базовые критерии разграничения теоретического и прикладного политического знания. Автор так же приводит свое собственное понимание и определение политического анализа как теоретической и прикладной дисциплины и для разграничения данных понятий вводит термины такие как "прикладная функция политического анализа" и "теоретическая функция политического анализа".

ՉԱՐԻՔԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՆԱՐԵԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ես հոռետես չեմ. չարիքի բացահայտումը այնտեղ, որտեղ այն գոյություն ունի, իմ կարծիքով ինքնին լավատեսության դրսևորում է:
Ռոբերտո Ռոսելինի

Չնայած մենք ապրում ենք ժամանակակից հասարակությունում, որտեղ բանականությունը գիտության և տեխնոլոգիայի սրընթաց զարգացմամբ գերիշխող դիրք է ստանձնել, այնուամենայնիվ մեզանում լայն տարածում ունեն հազարամյակներից եկած հավատալիքները՝ պայմանավորված գերբնական ուժերի, չարի և բարու, վախճանաբանական (ապոկալիպսիկ) պատկերացումների, Մեսիայի վերադարձի, ահեղ Դատաստանի գոյությամբ: Այս հավատալիքների վերաբերյալ պատկերացումները ձևավորվել են կրոնական ոլորտում. օրինակ՝ բարին սովորաբար ներառում է որոշ արժեքներ, ինչպիսիք են՝ կարգ ու կանոն, արդարություն, պտղաբերություն, առատություն, աշխատասիրություն, մեծահոգություն, գիտելիք, իմաստություն, ճշմարտասիրություն, անկաշառելիություն, պարտականությունների իրականացում, խիզախություն, համագործակցություն, այդ թվում՝ նաև մարդկային կյանքի կարևորությունը, իսկ չարիքը բարու հակադրությունն է, որը քաոսից տանում է դեպի մահ. սատանան է բոլոր չարիքների սկզբնաղբյուրը: Այս արժեքները գոյություն ունեն, որպեսզի արդարացնեն մեր գործողություններն ու իմաստավորեն կյանքը:

Կգա ժամանակ, երբ մեզ բոլորիս կդատեն՝ ելնելով մեր ապրած կյանքից. նրանք, ովքեր մեղք են գործել, կհամալրեն չարագործների շարքերը, իսկ մյուսները, ովքեր ունեցել են բարոյապես ազնիվ կյանք, կարդարացվեն: Չարագործները կդատապարտվեն ահեղ չարչարանքների ու կպատժվեն, իսկ այն մարդիկ, որոնք իրենց ողջ կյանքում հետամուտ են եղել բարու արժեքներին, փրկություն ու անմահություն կգտնեն:

Այս պատմությունները հոգեհարազատ են մեզ բոլորիս և մեծ տարածում ունեն ժողովրդական մշակույթում, իսկ ինչպե՞ս են դրանք այսօր դրսևորվում ժամանակակից հասարակությունում: Իսկապես, արդիականություն՝ նշանակում է գիտական մտքի գերիշխում՝ բանականություն: Ավանդական առասպելները՝ կապված աշխարհընկալման հետ, քայքայում և թուլացնում են կրոնական աշխարհի իշխանությունը[1]:

Կրթված մարդիկ, ազատ լինելով գերբնական նախապաշարումներից, լուսավորվում են էմպիրիկ դիտարկումների միջոցով, բնական և սոցիալական աշխարհների վերաբերյալ որոշ փաստերի ձևավորմամբ կամ բացահայտմամբ: Միայն հատուկենտ դեպքերում որոշ ֆիզիկոսների կողմից նոր տիեզերաստվածաբանության շրջանակներում Աստծո գոյության հիմնավորումը ֆիզիկայի տեսության մեջ կարող է բացառիկ դեպք դիտվել (Հարիսոն և Դիք, 2000), որը, համենայն դեպս, մեծ ազդեցություն չի կարող ունենալ մարդկանց գործողությունների վրա:

Սոցիալական գիտությունների մեջ, բարու և չարի գոյությունը բնական համարելով, ջանքերն ուղղում են՝ ոչ թե բացահայտելու այս կատեգորիաների հաստատվելու գործընթացը, այլ հասկանալու դրանց դրսևորումների առանձնահատկությունները, և հենց այս գիտությունների կողմից կարող է տրվել «չարիք» հասկացության ավե-

լի հաջողված սահմանումը:

Սոցիլոգիայում չարիքը մեկնաբանվում է նորգործառականության (նեոֆունկցիոնալիզմի) դիրքերից՝ հաշվի առնելով բանական վարքաձևի հնարավոր դրսևորումները: Ռոյ Բաումեյսթերը գրում է. «Հասկանալու համար չարիքը՝ մենք պետք է մի կողմ դնենք մեր նախապաշարումները...., չարիքը ճնշումների կամ պարգևատրումների հետ կապված արժեքների գերաճի կուտակման արդյունք է, և հաճախ այն կապված է հավասարակից ճնշման հետ, ինչպիսիք են խմբում ընդունելություն գտնելու պահանջմունքը և/կամ ինքնության կորուստը: Նույնիսկ նման սարսափելի վարքաձև ավելի շատ դրսևորում են գաղափարապաշտ մարդիկ՝ համոզված լինելով իրենց գործողության ճշմարտացիությանը»[2]: Բաումեյսթերը չարիքը սահմանում է որպես ուրիշներին վնաս հասցնելու նպատակաուղղված գործողություն: Իսկապես, մարդիկ հաճախ մտադրված են չարիք գործելու, երբ ուրիշներն իրենց վնասում են, սակայն այս պնդումը չի կարելի բացարձակացնել. չէ՞ որ հաճախ պասսիվությունը նույնպես կարող է չարիք գործելու պատճառ հանդիսանալ: Արդի հասարակությունում մեծ տարածում ունեն չարիքի գործիքային (ինստրումենտալ) և գաղափարական մեկնաբանությունները:

Չարիքի գործիքային մեկնաբանությունը վնասակար գործողությունների կիրառումը ընդունում է որպես միջոց՝ որոշ նպատակների հասնելու համար. նպատակները կարող են կատարելապես ընդունելի լինել, ինչպիսիք են՝ գումար, սեփականություն, քաղաքական իշխանություն ձեռք բերելը: Եթե նպատակն իրականացնելու համար հասարակության կողմից ճանաչելի միջոցներ են կիրառվում, ապա նման գործողությունները չեն կարող չարիք դիտվել, բայց եթե բոլոր բնականոն հանգամանքներում մարդիկ զբաղվում են խաբեությամբ, գողությամբ, քաղաքական բռնությամբ, սպանությամբ, պատերազմելով և նման այլ վնասակար գործողությամբ՝ նպատակն իրականացնելու համար, նույնիսկ եթե այն հասարակայնորեն ընդունելի է, այդ գործողությունները չարիքի պիտակավորում են ստանում: Սովորաբար մարդիկ ավելի շատ նախընտրում են օրինական միջոցներ, քան ոչ օրինական, սակայն, երբ նրանք գիտակցում են ընդունելի նորմերի դժվար կիրառելիությունը կամ անհնարինությունը, դժկամորեն դիմում են վնասակար միջոցների: Ըստ Զ. Ալեքսանդերի՝ գործողությունները, որոնք մարմնավորում են այնպիսի արժեքներ, ինչպիսիք են անկեղծությունը, պատասխանատվությունը, համագործակցությունը, ներգրավվածությունը, անհատներին և խմբերին թույլ են տալիս դառնալ քաղաքացիական հասարակության անդամներ, սակայն միայն այս հատկանիշները չեն, որ անհատներին քաղաքացիական հասարակության շարքին են դասում, այլ նաև այնպիսի հատկանիշներ, որոնք օրինականացնում են նրանց հարաբերությունները:

Չարիքի մյուս տեսակը՝ գաղափարականը, թույլ է տալիս մարդկանց ոչ միայն բռնություն գործադրել ուրիշների (թշնամիների) հանդեպ, այլ նաև հավատալ, որ վերջիններս իրականում գոյություն ունեն և իրենց տեսանկյունից գործում են ճիշտ: Այս չարիքի տիպը կարելի է բնութագրել հետևյալ կերպ. «Ովքեր դեմ են մեզ, նրանք մեր թշնամիներն են»: Նման մտածելակերպը կարող է առաջնորդվել բարոյական սկզբունքներով, որոնք մարդկանց կդրդեն նողկալի արարքների, մինչդեռ մարդիկ հավատացած են լինում, որ գործում են Աստծո, Ալլահի կամ աշխարհիկ ինչ-որ գաղափարախոսության դիրքորոշումներից: Նման օրինակներ են Բոսնիայի, Կոսովոյի, Չեչնիայի, Թուրքիայում քրդերի, Իրաքի, Պաղեստինի, Իսրայելի, Անգոլայի, Սուդանի, Սոմալիի և այլ էթնիկ ու քաղաքական բախումները: Օսամա բին Լադենը, Ալ Ղայիդայի հետևորդները և այլ իսլամական ֆունդամենտալիստներ, որոնք հակված են բռնություն գործելու, իրենց չեն տեսնում որպես չարագործներ, այլ հակառակը՝ իրենց դասելով անկեղծ, ճշմարտացի, բարոյական գաղափարներ կրողների շարքերում՝ ձգտում են մարտնչել՝ վերացնելու համար այն, ինչ իրենց կողմից չարիք է համարվում: Նրանք գործում են իրենց Աստծո հրամա-

նով, իսկ պատկերացումները չարիքի վերաբերյալ իրենց գործողությունների պատանդն են դարձնում:

Ինչպես ծայրահեղական գաղափարախոսությունը, որը մեծ աշխուժության է մղում խմբի անդամներին չարիք գործելու, այնպես էլ խմբի անտարբերությունն ու պասսիվությունը կարող են չարիքի դրսևորման լուրջ խթաններ ձևավորել: Այն ժամանակ, երբ Ֆրանսիայում գերիշխում էր ահաբեկչությունը և Սովետական Միությունում Ստալինի զտման քաղաքականությունն էր իրականացվում, Թեոդոր Ռուզվելտը այս առիթով ասել է. «Չարիքը բարգավաճում է, երբ լավ մարդիկ ոչինչ չեն ձեռնարկում»: Նման պասսիվ քաղաքականությամբ ուղեկցվեց նաև 1999 թվականի ՆԱՏՕ-ի ռազմական հարձակումը Հարավսլավիայի վրա, որտեղ արգելված զենքերի կիրառման հետևանքով զոհվեցին տասը հազար խաղաղ բնակիչներ:

Բաումեյսթերը երևի ավելի է հստակեցնում չարիքի դրսևորման առանձնահատկությունները՝ վրեժխնդրությունը ներմուծելով որպես չարիքի առանձին գաղափարական տեսակ: Վրեժն ամենից առաջ գործողության պատասխանն է, որը բնութագրում է չարագործների ու տուժածների հարաբերությունները: Տուժածները, որպես իրենց հասցված չարիքի պատասխան, ավելի խիստ ու դաժան միջոցներ են նախաձեռնում՝ վնաս հասցնելու չարագործներին. կանոնները շրջվում են, գործող սուբյեկտները՝ փոխարինվում: Վրեժխնդրության իրականացման կարևոր նախապայման է գաղափարախոսությունը, որը կարող է ժառանգված լինել նախկին սերունդներից: Նման գաղափարները, հաշվի չնստելով ժամանակի և տարածության հետ, ավելի ուժգին հարվածելու հակազդեցության միջոցներ են մշակում, և գործողություններն արդարացում են գտնում գաղափարական դաշտում:

Արդի հասարակությունում գաղափարական բազմակարծությունները հնարավորություն չեն տալիս հստակ տարանջատել չարիքի և բարու սահմանագիծը. այս իրավիճակը ձեռնտու է մասնավորապես նրանց, ովքեր փորձում են գաղտնի տարածել իրենց իշխանությունը (այս կերպ Հիտլերը ամրապնդեց իր իշխանությունը՝ տարածելով նացիստական գաղափարախոսությունը Գերմանիայում): Քաղաքական լիդերների, իշխանավորների կողմից ստեղծված գաղափարախոսության ազդեցությամբ կարող են շատ անմեղներ հայտնվել չարիքի թակարդում. ինչպես, օրինակ՝ Միացյալ Նահանգներում ազգային անվտանգությանը սպառնացող վտանգների իրատեսական լինելը շատ անմեղ քաղաքացիների մղում է օգտվել չարիքի ծառայություններից: Արդի հասարակությունում քաղաքականացված արժեքներն են հիմք ծառայում՝ պատասխանելու չարիքից խուսափելու, չարյաց փոքրագույնն ընտրելու և համապատասխան գործողությունների դիմելու հարցերին:

Բաումեյսթերը չարիքը մեկնաբանում է որպես անդրանցական (տրանսցենդենտալ) երևույթ, իսկ Ալեքսանդերը չարիքը համարում է ուժեղ և անհատական սոցիալական ուժ, ըստ որի՝ պետք է այն ուսումնասիրել ուղղակի և համակարգված ձևով:

Չարիքը.... ինքնուրույն արժեք է մեզ համար,
բայց այս հայեցակարգը չի բացառում
բարոյականությունը,
ընդհակառակը՝ այն «գերբարոյականի»
պահանջ է դնում.
բարոյականության խիստ պահանջները
չարիքի մասին եղած գիտելիքների
ոչ միանշանակության և բարդության արդյունք
են,
իսկ չարիքն էլ իր հերթին
ինտենսիվ հաղորդակցության հիմք է:
Ջորջս Բաթեյլ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Jeffrey, C.* Alexander "Toward a Sociology of Evil": Lectures.
2. *Roy F.* Baumeister, Evil: Inside Human Cruelty and Violence. New York: W. H. Freeman 1999.

[1] *Habermans, J.,* 1987, The Philosophical

Discourse of Modernity: Twelve Lectures. Cambridge, MA: MIT Press

[2] *Roy F.* Baumeister, Evil: Inside Human Cruelty and Violence. New York: W. H. Freeman 1999.

EXPRESSION OF- PECULIARITIES OF EVIL IN MODERN SOCIETY

NAREK KHACHATRYAN

Summary

The question why people hurt each other is perhaps the oldest and at the same time most being discussed in the history of humanity. This issue was broad subject for discussion as in literature, as in religion. Can social science provide any answer for the question? To find answer to it, we referred to social scientist Roy F. Baumeister's and Jeffrey C. Alexander's works. Some of Baumeister's most original approaches are relate to self-esteem of mankind. Also, based on difference of explanation of evil at the different culture, we have to admit that the evil is multi-dimensional category, and therefore it is going beyond the social science.

ПРОЯВЛЕНИЯ СПЕЦИФИКИ ЗЛА В СОВРЕМЕННОМ ОБЩЕСТВЕ

НАРЕК ХАЧАТРЯН

Резюме

Вопрос о том, почему люди обижают друг друга наверно самый древний, и в то же время самый обсуждаемый. Именно поэтому этому вопросу уделяли время и внимание в течении долгих лет и в литературе, и в религии. Может ли дать ответ на этот вопрос социальная наука? Чтобы найти ответ, мы обратились к трудам Р. Баумейстера и Дж. Александера. Особенны ценны некоторые оригинальные подходы Р. Баумейстера, которые объясняют позицию человека в целях самооправдания. А также, исходя из различий трактовки зла в разных культурах, необходимо признать, что эта категория имеет несколько уровней толкования, и поэтому ее невозможно рассматривать только в рамках социальной науки.

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԻԳՐԱՆՏԻ ԿԵՆՍԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԶՈՒԳԱՀԵՌՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ԱՐԱՄ ՎԱՐՏԻԿՅԱՆ

Հայաստանը 1990-ական թվականներին կանգնեց միգրացիայի գործընթացների աննախադեպ աշխուժացման, դրա ազդեցությունների և դրանից բխող հետևանքների կանխատեսման, կանխարգելման խնդրի առջև: Միգրացիոն գործընթացների տարբեր ազդեցություններից և հետևանքներից զերծ չմնաց Հայաստանի բնակչության կենսագործունեության և ոչ մի ոլորտ: Ստեղծված սոցիալ-տնտեսական, սոցիալ-քաղաքական, բարոյահոգեբանական և այլ պայմանները, ընդհանուր իրավիճակի փոփոխությունները Հայաստանում բերեցին միգրացիա երևույթի առանձին դրսևորումների: Առաջացան և նոր թափ ձեռք բերեցին տարբեր, հիմքում որակական և քանակական բնութագրիչներ ունեցող թե՛ արտաքին՝ հիմնականում էմիգրացիոն, անհամեմատ պակաս իմմիգրացիոն, թե՛ ներքին միգրացիոն հոսքեր: Յուրաքանչյուր հոսքն իր դրսևորումների ու տարբեր մակարդակների վրա ունեցավ և այսօր նույնպես ունի իր բացասական և, ինչու չէ, նաև դրական հետևանքները:

Հայաստանի Հանրապետությունը, հայտնվելով առաջին հերթին արտագաղթի և բռնի ներգաղթի ահռելի, հիմնականում անկանոն հոսքերի և դրանց հետևանքների հորձանուտում, ունակ չեղավ նպատակաուղղված միջոցներ ձեռնարկել՝ միգրացիան իր բոլոր դրսևորումներով և հետևանքներով պետականորոն կարգավորելու, իրավիճակը բարելավելու: Մինչդեռ ավելի քան ակնհայտ է, որ միգրացիան Հայաստանում հրատապ, անհետաձգելի կարգավորման պահանջ ունի:

Իհարկե չի կարելի ժխտել այն փաստը, որ այսօր Հայաստանում իրականացվում են մի շարք միջոցառումներ միգրացիայի կարգավորման, իրավիճակի ընդհանուր և մասնակի բարելավման ուղղությամբ: Ընդունված է միգրացիայի կարգավորման պետական հայեցայկարգը, հիմնված է այս ոլորտի օրենսդրական դաշտը, գոյություն ունեն օրենքներ, օրենսդրական ակտեր և այլն՝ ուղղված միգրացիայի կարգավորմանը: Հայաստանը անդամ է մի շարք միջազգային և տարածաշրջանային համաձայնագրերի, կոնվենցիաների, պայմանագրերի, որոնք ըստ էության ներառում են միգրացիայով պայմանավորված խնդիրների գրեթե ողջ բազմությունը:

Մինչդեռ նշված ծավալուն համակարգը մեզանում մեղմ ասած գործուն չէ: Պետական ապարատի մեծ իներտությունը թույլ չի տալիս հրատապորեն արձագանքել իրականության փոփոխություններին, ծավալվող գործընթացներին: Օրենքների մի մասը դեռ ընդունված չէ, մյուսը ինչ-ինչ պատճառներով չի գործում: Միգրացիայի պետական ընկալումը երբեմն միակողմանի է. այն դիտարկվում է հաճախ միայն որպես տնտեսական մասնակի բարելավմանը, մասամբ էլ՝ սոցիալական լարվածության նվազմանը նպաստող երևույթ:

Պայմանավորվածությունները, համաձայնագրերը, պետական կարգավորմանն ուղղված միջոցառումները, օրենսդրությունը, գերատեսչական պատասխանատու մարմինները երբեմն, թվում է, ծառայում են վերազգային նպատակներին: Ասվածը ակնառու է դառնում, երբ վեր են հանվում անհատի, միգրանտի մասնակի խնդիրները: Կարող ենք ասել, որ միգրանտը, միգրանտի խնդիրները և դրանց ոչ ձևական կարգավորումն ու միգրացիայի պետական կարգավո-

րումը հիմնականում չեն զուգահեռվում, գտնվում են տարվեր հարթություններում:

Թե՛ մի շարք փորձագետների, թե՛ միգրանտների գերակշռող մասը գտնում է, որ Հայաստանի միգրացիոն քաղաքականությունը և միգրացիայի կարգավորմանն ուղղված գործողությունները չեն հասնում իրենց նպատակին, չեն լուծվում միգրանտի նույնիսկ ամենակենսական խնդիրները: Միգրանտներին չեն հասնում միգրացիոն գործընթացների կարգավորման ազդակները: Այս իմաստով միգրացիոն գործընթացները սոսկ ինքնակարգավորվում են: Նշենք նաև, որ համակարգի ինքնակարգավորումը ամենևին էլ չի նշանակում միգրացիայի հետ կապված խնդիրների դրական լուծում: Հակառակը, միգրանտների բազմաթիվ խնդիրներ մնում են չլուծված [5]: Բայց պետության՝ կարգավորման գործընթացի չտիրապետման պարագայում ինքնակարգավորումը միգրացիայի առավել ձեռնտու տարբերակն է:

Պետության՝ միգրացիոն գործընթացների՝ ըստ էության անուշադրության մատնելը, միգրանտի և պետական քաղաքականության նույնիսկ նվազագույն զուգահեռման բացակայությունը բերում են միգրացիոն հոսքերի կարգավորմանը, ոչ ձևական օղակների աշխուժացմանը: Միգրացիոն հոսքերի կարգավորման ոչ ձևական օղակների դերում են այն կառույցները, որոնք գրանցված չեն գոյություն ունեցող օրենսդրությամբ, օրենսդրության հետ հակասության մեջ են, սակայն ունակ են լուծելու միգրանտների խնդիրները: Սա առավել ակնառու է այսօր Հայաստանում, աշխատանքային, մասամբ նաև առևտրային միգրացիաների պարագայում:

Այսօր Հայաստանում աշխատանքային միգրանտների գործունեությունը իրականացվում է երկու պետությունների հսկողությունից դուրս գտնվող մեխանիզմների միջոցով՝ միջնորդություն և ոչ օրինական ծառայություններ [7]:

Այսօր հայաստանյան միջնորդները իրականացնում են մասնավորապես արտագնա աշխատանքային գործունեության մասին օրենքով նախատեսված համապատասխան կառույցների պարտականությունները: Միջնորդների դերում են հանդես գալիս համապատասխան անձերը կամ կառույցները, որոնք ապահովում են միգրանտների արտահոսքը ելքի երկրից և վերջիններիս մուտքը մուտքի երկիր: Միջնորդներ կարող են լինել ինչպես անհատներ, այնպես էլ կազմակերպություններ, իրականում գոյություն ունեցող օրինական աշխատանքի տեղավորման և տուրիստական գործակալություններ, փոխադրումներ իրականացնող անձինք: Միգրանտներին սպասարկող մեկ այլ կառույց է անօրինական ծառայություն մատուցողը կամ անօրինական ծառայությունը (կամ դրա ներկայացուցիչը): Այդ դերում են հանդես գալիս մասնավորապես անձինք կամ կազմակերպություններ, որոնք, անօրինական ճանապարհներով ձեռքի տակ ունենալով ներուժ և կապեր, միգրանտներին որոշակի անհրաժեշտ ծառայություններ են մատուցում: Անօրինական ծառայությունների ներկայացուցիչները առկա են ինչպես ելքի, այնպես էլ մուտքի երկրներում: Սակայն համաշխարհային միգրացիայի ոլորտում ևս, ուր մեծ նշանակություն ունեն նաև տարանցիկ միջանկյալ երկրները, գործում են միգրանտներին սպասարկող անօրինական կառույցներ [6]:

Անօրինական ծառայություններ մատուցողները բաժանվում են երեք խնբի: Առաջին խմբին են պատկանում պետական ծառայությունների աշխատողները, որոնք իրենց աշխատանքի բնույթով կապ ունեն միգրացիայի և միգրանտների հետ՝ ոստիկանության, մաքսային մարմինների, անցագրային կետերի, նոտարական գրասենյակների, և իշխանության այլ կառույցների ներկայացուցիչներ, որոնց անօրինական եկամուտը միգրանտների կողմից տրվող կաշառքներն են: Երկրորդ խմբին են պատկանում մուտքի երկրում անձինք, որոնք հանձն են առնում, երաշխավորում են միգրանտի ժամանակավոր կամ անժամկետ բնակեցումը իրենց բնակարանում, սպասարկում են ձևական ամուսնությունները, միջնորդում են բնակության իրավունք ստանալիս և այլն: Երրորդ խմբին են պատկանում քրեական տարրերը և կառույցների ներկայացուցիչները, որոնք

լուծում են միգրանտի վեճերը այլ միգրանտների, իրավախախտ և այլ խմբերի հետ [3]:

Միգրանտը դեռ ելքի երկրում կարիք ունի միգրացիայի օրենսդրական կարգավորման: Օրենքների և մեխանիզմների, արտերկրում միգրանտների բնակության և աշխատանքային պայմանների, հնարավոր աշխատանքի և զբաղմունքի, ընդունող երկրի միգրացիոն քաղաքականության առանձնահատկությունների վերաբերյալ հայաստանյան պետական կառույցների կողմից չի տրամադրվում որևէ տեղեկություն այս ամենի մասին: Չկա տեղեկատվական կենտրոնացված համակարգ, որում զետեղված լինեն տարբեր բնույթի և որակի տեղեկություններ աշխատուժի առաջարկի և պահանջարկի մասին: Ճիշտ է, գոյություն ունեն մասնավոր հայտարարությունների պրակտիկա, կազմակերպություններ, որոնք զբաղվում են տեղեկատվական գործունեությամբ, բայց այս կառույցները դուրս են պետական վերահսկողությունից և կարո, մարդկանց առևանգման (թրաֆիքինգ): Այսպիսով՝ չնայած այն բանին, որ թե՛ Հայաստանում և թե՛ արտերկրում բավականաչափ իրազեկություն է տրամադրվում մամուլի և այլ հայտարարությունների միջոցով արտասահման մեկնելու և այնտեղ աշխատելու հնարավորությունների մասին, այնուամենայնիվ արտասահմանյան ուղևորության, մուտքի երկրի, այս կամ այն հնարավորությունների, բնակության պայմանների և այլնի մասին միգրանտների մեծամասնությունը տեղեկանում է հաճախ մեկնելուց հետո մուտքի երկրում: Ըստ սոցիոլոգիական տվյալների՝ մեկնելու երկրի մասին տեղեկություն էր ստացել մուտքի երկրում բնակվող բարեկամներից և հարազատներից աշխատանքի մեկնածների 68 տոկոսը, հայրենիքում բնակվող բարեկամներից և ծանոթներից՝ միգրանտների 20 տոկոսը: Արտերկրում աշխատող միգրանտներից իրազեկություն էր ստացել արտասահման մեկնած միգրանտների 10 տոկոսը: Ինչ վերաբերում է մամուլում կամ այլ վայրերում զետեղված հայտարարություններին և տեղեկություններին, ապա այդ ճանապարհով արտասահմանի մասին տեղեկություն է ստացել աշխատանքի մեկնածների ընդամենը 1 տոկոսը [7]:

Սակայն տեղեկացման այս ոչ հարթ ճանապարհով մուտքի երկրում միգրանտների բացարձակ մեծամասնությունը՝ 53.6 տոկոս, աշխատանքի է տեղավորվել երկիր մտնելուց անմիջապես հետո, գրեթե 30 տոկոսը աշխատանք է գտել և սկսել է աշխատել ընդամենը 1 ամսվա ընթացքում: Միգրանտների թվի 9 տոկոսը աշխատանք է գտել 3 ամսվա ընթացքում, մոտավորապես 3 տոկոսի համար աշխատանք գտնելը պահանջել է ավելի քան երեք ամիս: Նշենք, որ հարցվածների գրեթե 3.5 տոկոսն ամբողջ ուղևորության ընթացքում այնպես էլ աշխատանք չի գտել: Մինչդեռ Հայաստանում միգրանտների մեծամասնությունը նախքան արտասահման մեկնելը մշտական աշխատանք է ունեցել: Սոցիոլոգիական տվյալները վկայում են, որ կարգավորման լծակների ազդեցությունը գրեթե չի զգացվում միգրացիոն գործողության հաջորդ փուլում ևս: Աշխատանքային միգրանտների մեծամասնությունը ինքն է պայմանավորվում գործատուների հետ: Այսպես՝ ըստ ՀՀ սահմանային ուղևորաշրջանառության հետազոտության արդյունքների՝ աշխատանքային միգրացիոն ճանապարհորդություններից վերադարձողների բացարձակ մեծամասնությունը՝ 56.2 տոկոս, նախնական, բայց բանավոր պայմանավորվածություն է ունեցել ապագա գործատուի հետ: Պարզ է, որ այդ պարագայում աշխատող միգրանտի և ոչ մի խնդիր, միգրանտի իրավունքների և շահերի ոչ մի ոտնահարում հնարավոր չէ կանխարգելել: Միգրացիոն գործունեության ընթացքում պայմանագիր է ունեցել միգրանտների միայն 8.3 տոկոսը: Վերադարձածների 35 տոկոսից ավելին և մեկնողների գրեթե 50 տոկոսը ոչ մի պայմանավորվածություն, առավել ևս պայմանագիր չեն ունեցել և կախված են եղել գործատուի քմահաճույքից [1]:

Սոցոլոգիական տվյալները որոշակի իրազեկություն են տալիս նաև միգրանտների կարգավիճակի մասին: Այսպես՝ միգրանտների 72.9 տոկոսը մուտքի երկրներում կանգնում է ժամանակավոր հաշվառման: Բավական մեծ թիվ են կազմում պաշտոնական հաշվառում չունեցող միգրանտները՝

10.5 տոկոս: Այլ տվյալներով միգրանտները, ովքեր ունեն և՛ աշխատանքի, և՛ բնակության իրավունք, ընդհանուր առմամբ այնքան էլ շատ չեն՝ 4.5 տոկոս. ավելի քիչ են միայն բնակության իրավունք ունեցող միգրանտները՝ 1.3 տոկոս: Ընդունող երկրի քաղաքացի է միգրանտների գրեթե 4.5 տոկոսը: Այսպիսով՝ կարող ենք ասել, որ յուրաքանչյուր 10-րդ միգրանտը օրինախախտ է կամ արտերկրում գտնվում է անօրինական հիմունքներով [2]: Նշենք նաև, որ միգրացիոն և հարկային առկա քաղաքականության պարագայում բազմաթիվ են այն երկրները, որոնց գործատուների համար ավելի նպատակահարմար է ունենալ չգրանցված աշխատողներ: Միգրանտների մի զգալի մասի համար ևս կիսաօրինական վիճակը ավելի գերադասելի է, քանի որ միգրանտի համար վերջին հաշվով դժվար է և մեծ ջանքեր է պահանջում մուտքի երկրում օրինական կարգավիճակ ձեռք բերելը, սակայն այդ պայմաններում նույնիսկ միգրացիայի դրական հետևանքները միգրանտի համար գերազանցում են բացասականները: Դա է պատճառը Հայաստանում ներունակ միգրացիայի մեծ չափերի: Վերջինիս չափերը պատկերացնելու համար նշենք, որ ԵՊՀ սոցիոլոգիական հետազոտության մեջ հարցվածների 13 տոկոսը չի անտեսում Հայաստանից հեռանալու հավանականությունը. յուրաքանչյուր 4-ից մեկի արտագաղթի հարցը ըստ էության լուծված է. նա Հայաստանից հավանաբար հեռանալու է: Յուրաքանչյուր 10-ից մեկի համար այս հարցը կարելի է ասել փակ է, նա անպայման է հեռանալու Հայաստանից: Այս պայմաններում հայ հասարակությունում ձևավորվում է հանդուրժողական վերաբերմունք միգրացիայի նկատմամբ: Ընդհանուր առմամբ բացասական վերաբերմունքը միգրացիոն գործունեությանը ներառվելու ցանկության նկատմամբ այնքան էլ մեծ չէ: Հարցվողների 1/3-րդն է բացասական վերաբերվում միգրացիային դիմելու քայլին: Այդպիսին է նույնիսկ իրենց միգրանտների գնահատականը: Աշխատանքային արտահոսքը Հայաստանում գնահատվում է ընդհանուր առմամբ որպես դրական երևույթ: Տարածայնություններն այս հարցում մեծ չեն: Աշխատանքային միգրացիան ընդհանուր առմամբ դրական երևույթ է գնահատում բնակչության մոտավորապես 86.4 տոկոսը, և միայն 10 տոկոսն է համարում այն բացասական երևույթ [2]:

Ընդ որում, բացասական վերաբերմունքը միգրացիայի նկատմամբ մեկնաբանվում է նրանով, որ միգրացիոն գործընթացների պետական կարգավորման բացակայության պարագայում երկիրը ճաշակում է միգրացիայի բացասական հետևանքները և չի կարողանում դրանք հաղթահարել:

Աշխատանքի մասին պայմանավորվածության և պայմանագրերի խնդիրները, տեղեկատվության սակավության խնդիրը համալրվում են նաև վտարանդիների բնակության պայմանների հետ կապված բավական լուրջ խնդիրներով: Ըստ ԵՊՀ սոցիոլոգիական հետազոտության՝ արտասահմանում միգրանտների մեծամասնությունը՝ 38-39 տոկոսը, բնակարան է վարձում: Սրանց մոտ 1/3-ը բնակվում է առանձին բնակարանում, բնակարանը ընկերների կամ հարազատների հետ է կիսում հարցվածների ընդամենը 9.6 տոկոսը: Ըստ հետազոտության տվյալների՝ յուրաքանչյուր երրորդ աշխատանքային միգրանտը բնակվում է իր աշխատանքի վայրում կամ ավելի վատ պայմաններում՝ բարաքներում, որոնք չեն համապատասխանում որևէ չափորոշչի: Նման պայմաններում են գտնվում Ռուսաստանում աշխատող միգրանտները: Սրան նպաստում են նաև միգրանտների անօրինական կամ կիսաօրինական կարգավիճակը, որը հնարավորություն չի տալիս որևէ բան պահանջել գործատուից, Հայաստանի միգրացիայի կարգավորման պետական կառույցների աջակցության բացակայությունը, ցածր եկամուտները:

Հայաստան վերադարձած աշխատանքային միգրանտների հետազոտության տվյալներով միգրանտների սպասումները հիմնականում արդարացել են 43.6 տոկոս դեպքերում: 41.7 տոկոսի սպասումները մասամբ են միայն արդարացել: Չեն արդարացել 6.6 տոկոս աշխատանքային միգրանտների սպասումները: Պատահական չէ, որ միգրանտների բացարձակ մեծամասնությունը՝ 63.5 տոկոս, հստակ արտահայտված

նպատակ ունի՝ նորից մեկնելու արտերկիր: Նման մտադրություն չունի վերադարձած միգրանտների ընդամենը 3.1 տոկոսը:

Միգրացիոն գործընթացների պետական կարգավորման հնարավորությունները ավելի խոր վերլուծելու համար դիտարկենք աշխատանքային միգրանտների առջև ծառացող խնդիրները և դրանց լուծման ճանապարհները՝ ըստ սոցիոլոգիական հետազոտության տվյալների: Այսպես՝ ըստ սոցիոլոգիական տվյալների՝ մաքոքային միգրանտների առջև ծառացած է մաքսային վճարումների մուծման խնդիրը, որը հուզում է մաքոքային միգրանտների առավել քան 67 տոկոսին: Այդ միգրանտների մոտավորապես կեսի համար առավել արդիական են ապրանքի իրացման հետ կապված խնդիրները: Գրեթե նույնն է այն միգրանտների տոկոսը, ովքեր խնդիր ունեն ապրանքի իրացման համար անհրաժեշտ գումարների վճարման հետ: Միգրանտների 25 տոկոսը բավական լուրջ խնդիր է համարում ապրանքների պահպանման խնդիրը: Մաքոքային միգրանտների մի զգալի մասը հիշատակում է արտերկրում հաշվառման կանգնելու խնդիրը, ֆիզիկական աշխատանքի մեծ ծավալի խնդիրը և ֆիզիկական աշխատանք կատարելու հետևանքով իրենց առողջության վատթարացման խնդիրը (54.5 տոկոսը):

Երկարաժամկետ միգրանտների առջև ծառացած խնդիրներից նույնպես առաջնահերթ է հաշվառման կանգնելու խնդիրը [5]

Ինչպես տեսնում ենք, արտերկրում միգրանտի առջև ծառացած խնդիրների ցանկը շոշափելիորեն տարբերվում է՝ կախված միգրացիոն գործունեության տիպից: Թվում է, թե երկարաժամկետ միգրանտները ստիպված են լուծել պակաս թվով խնդիրներ: Հետաքրքրական է, որ սեզոնային միգրանտների գրեթե 82 տոկոսը, իսկ երկարաժամկետ միգրանտների մոտ 67 տոկոսը ստիպված է մշտապես լուծել հաշվառման կանգնելու և ոստիկանության հետ ունեցած խնդիրները, որոնք իրականում կարող է և պետք է լինեին միջպետական կարգավորման առարկա:

Սեզոնային միգրանտների աշխատանքային պայմանները ավելի վատն են, քան երկարաժամկետ միգրանտներինը: Աշխատանքային օրը միջին թվաբանականով տևում է 10 ժամ, աշխատում են առանց հանգստյան օրերի: Սեզոնային միգրանտների համար ոչ պակաս կարևոր է աշխատանք գտնելու, աշխատանքի դիմաց վարձատրություն ստանալու խնդիրը: Սեզոնային միգրանտը կեսից ավելի դեպքերում աշխատանք է գտնում կամ աշխատանքի է ընդունվում ընկերների, ծանոթների աջակցությամբ կամ որևէ մեկի միջնորդությամբ: Ինքնուրույն է աշխատանք գտնում միգրանտների ընդամենը 1/3 ը: Այս ոլորտում ևս միգրանտները կարող էին ինչ-որ չափով ապավինել պետական աջակցությանը:

Սեզոնային միգրանտների խումբը նվազագույն չափով է սոցիալապես պաշտպանված: Աշխատանքային պայմանագիր ունի միգրանտների միայն 1/4 –ը, արտոնագրով է աշխատում միգրանտների 18.3 տոկոսը, ընդ որում միգրանտների 20.4 տոկոսի աշխատանքը ոչ մի կերպ չի վարձատրվում: Միգրանտների 71.9 տոկոսը աշխատում է բանավոր պայմամավորվածության հիման վրա, որը դառնում է միգրանտների խոցելիության լրացուցիչ պատճառ: Միգրանտների խոցելիության աստիճանը պատկերացնելու համար նշենք, որ սոցիոլոգիական հետազոտության արդյունքների համաձայն՝ հարցված սեզոնային միգրանտների խմբի ներկայացուցիչների 77.3 տոկոսը ոչ մի քայլ չի ձեռնարկում սեփական իրավունքները պաշտպանելու համար և միայն նրանց 18.2 տոկոսն է փորձել երբևիցե բողոքել սեփական իրավունքները պաշտպանելու համար:

Սեզոնային միգրանտների 13.5 տոկոսի և երկարաժամկետ միգրանտների 10 տոկոսի հանդեպ բռնություններ են կիրառվել:

Վերջապես սեզոնային միգրանտների 1/3-ը նշում է ընդունող հասարակության՝ անտարբեր, իսկ 10 տոկոսը՝ ակնհայտ բացասական վերաբերմունք ունենալը իրենց նկատմամբ: Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ սեզոնային միգրանտները աշխատանքային միգրանտների երեք համախմբերից ամենախոցելի վիճակում են: Նրանց իրավունքները հաճախ են ոտնահարվում: Սակայն նրանց բողոքների ճնշող

մեծամասնությունը ապարդյուն է: Պարզորոշ է, որ այլ ելք կարելի էր ակնկալել, եթե այդ բողոքներին միանային Հայաստանի միգրացիոն կարգավորման համար պատասխանատու պետական մարմինները:

Պատկերը ամբողջացնելու համար դիտարկենք խնդիրների այն շարքը, որի առջև են այսօր կանգնած վերադարձած կամ վտարյալ միգրանտները, ներդրումների նպատակով Հայաստանում հաստատված իմմիգրանտները:

Ըստ ԵՊՀ սոցիոլոգիական հետազոտության տվյալների՝ վերադարձող միգրանտները Հայաստանում վերահաստատվում են ինքնուրույն: Պետության կողմից իրականացվող ծրագրերը սուղ են, և հաշվի չեն առնվում վերադարձող միգրանտի առանձնահատկությունները: Պատահական չէ, որ վերադարձող միգրանտը նույնիսկ բարձր որակավորման պարագայում կարող է հայրենիքում լրացնել գործազուրկների շարքերը [5]:

Պետության կողմից աշխատանքային միգրացաիայի կարգավորումը դժվարացած է համապատասխան մեխանիզմների և արարողակարգերի բացակայության պատճառով [4]: Ասվածի մասնավոր օրինակ կարող է հանդիսանալ միջնորդների լիցենզավորման օրինակը: Զբաղածության մասին օրենքով նախատեսվում է միգրացիայի կարգավորման ոլորտում ոչ պետական կազմակերպությունների գործունեությունը, որոնք հնարավորություն կտան ցանկացողներին աշխատանքի անցնել ոչ միայն մեր երկրում, այլև արտասահմանում, եթե օրենսդրորեն հստակեցված լինեն լիցենզավորման հարցերը: Գործունեության լիցենզավորման մասին ՀՀ օրենքում նմանօրինակ գործունեության մասին հիշատակում չկա: Փաստորեն միգրացիայի կարգավորմանն ուղված կարևոր դրույթը ամրագրված չէ ոչ օրենսդրական, ոչ սահմանակարգային էլ(ինստիտուցիոնալ) մակարդակներում [3]:

Միգրացիոն գործընթացների կարգավորման ատյանները պետության կողմից այսօր լրացուցիչ մի գործառույթ են ստացել՝ պայքար անօրինական միգրացիայի, առևանգման, միգրացիայի հետ կապված այլ չարաշահումների դեմ: Փորձը ցույց է տալիս, որ այս ոլորտներում էլ առանց միգրանտի կարիքները հաշվի առնելու պետական միգրացիոն քաղաքականությունը ըստ էության քիչ արդյունավետ է: Միգրացիայի կարգավորման կարևորագույն գործոն են գործառնական (օպերացիոնալ) մակարդակով մուտքի երկրում միգրանտի՝ աշխատանքի դիմաց վարձատրության և գործատուի հետ կնքած պայմանագրերի կատարման ապահովումը, մի շարք սոցիալական խդիրների լուծումը: Հայաստանի օրենսդրությունը չի ենթադրում միջնորդ կազմակերպությունների գործունեության կարգավորումը: Գոյություն չունեն նաև իրական մեխանիզմներ, որոնց շնորհիվ հնարավոր լիներ հսկողություն սահմանել մուտքի երկրում գործող միջնորդ կազմակերպությունների վրա:

Այսպիսով՝ միգրացիոն քաղաքականությունը և միգրացիոն կարգավորումը չպետք է դիտվեն միայն որպես պետության համապատասխան մոտեցումների ձևավորման և իրականացման գործընթաց: Դրանք ընդգրկում են նաև միգրացիայի կարգավորումը իրականացնող պատասխանատու ատյանների և գերատեսչական մարմինների ստեղծում և դրանց գործառույթների հստակեցում՝ իրական փոփոխություններին արձագանքող և միգրանտների կենսական պլանները հաշվի առնող նպատակաուղղված գործունեության հեռանկարով, որը իրական փոփոխություններ կձևավորի միգրացիոն հոսքերի ծավալների և ուղղությունների մեջ, կօգնի հաղթահարել միգրացիայի խիստ անբարենպաստ հետևանքները, կտեղեկացնի միգրանտին արտերկրի պայմանների և օրենսդրության մասին, կպաշտպանի հայ միգրանտին մուտքի երկրում և կձեռնարկի արդյունավետ քայլեր, որպեսզի մեկնածներից վերադառնալ ցանկացողները կարողանան վերադառնալ և վերահաստատվել Հայաստանում:

---

1. Հայաստանի Հանրապետության հսկիչ անցագրային կետերի ուղևորաշրջանառության (միգրացիա) ընտրանքային հետազոտության զեկույց, ՀՀ ԱՎԾ, TASIS, IOM, Երևան 2002
2. Մինասյան Ա., Հանչիլովա Բ., Աշխատանքա-

յին միգրացիան Հայաստանում 2002-2004թթ ընթացքում, Երևան 2006
[3] Л. Балян, Государственное регулирование трудовой миграции в Армении//Миграция и рынок труда в странах Центральной и восточной Европы. Международная конференция 26-27 мая 2003, Москва 2003
[4] Миграция и миграционная политика: Материалы семинара. М., 1993
Некоторые особенности трудовой миграции в Армении, ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի հետազոտություն, /Լ. Հ. Հարությունյան/
[5] Espinosa C. Massey D., Undocumented migration and quantity and quality of social capital// P. Ludger, Migration and transnational social spaces. Vermont, Ashgate publishing company, 1999
[6] Irregular migration and smuggling from Armenia, IOM 2002

ARAM VARTIKYAN

Summary

Since 1990s of the last century unregulated migration started in the Republic of Armenia. From the very beginning of the establishment of independence in Armenia the Government and the corresponding governmental institutions realized the problem of migration and the importance of its governmental regulation.
It is evidence of the presence of the concept of governmental regulation of migration and the set of statutes of the Republic of Armenia reflecting both his own experience and corresponding international legal norms. However, in legal field of regulation of migratory flows a discrepancy arose between vital plans of migrant and present administrative methods of management of migratory flows. This, in its turn, brought to the creation of systems of migratory self-regulation which are very often found beyond the legal area of the Government. In this way, the urgent issue the government sets forward today is to coordinate vitally important plans and interests of the migrant, as well as methods and mechanisms of governmental regulation of migration.

АРАМ ВАРТИКЯН

Резюме

В Республике Армения, начиная с 1990-х годов прошлого века, устанавился режим неконтролируемой миграции. С самого начала становления независимости республики правительство Армении и соответствующие государственные институты осознавали проблему миграции и необходимость ее государсвенного регулирования. Об этом свидетельствуют наличие концепции государственного регулирования миграции и комплекса законодательных актов Республики Армения, отражающих и собственный опыт и соответствующие международные правовые нормы. Однако, в правовом поле регулирование миграционных потоков возникло несоответствие между жизненными планами мигранта и действующими административными методами управления миграционных потоков. А это, в свою очередь, привело к возникновению систем миграционного саморегулирования, которые часто находятся вне правового пеостранства государства. Таким образом, на сегодня неотложной задачей государства является согласование жизненных планов и интересов мигранта и методов и механизмов государственного регулирования миграции.

ԻՆՉԻՑ ՊԵՏՔ Է ՍԿՍԵԼ ԿԱՐԻԵՐԻԱՅԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

ՆԱՐԻՆԵ ԱՎԵՏՅԱՆ

Ճանաչի՛ր ինքդ քեզ և կճանաչես
Տիեզերքն ու աստվածներին:
ՍՈԿՐԱՏԵՍ

Յուրաքանչյուր անհատ այս կամ այն մասնագիտությունը ընտրելիս պետք է հնարավորինս ճիշտ կարողանա գնահատել իր ունակությունները, ինչպես նաև ստույգ գնահատել այն հմտությունները, որոնց տիրապետում է, հասկանա, թե ինչպիսին է ինքը՝ որպես խմբի (թիմի) անդամ, ինչպիսի խառնվածք ունի, ինչպես է իրեն դրսևորում այս կամ այն իրավիճակում: Անհատը պետք է բացահայտի նաև իր սեփական արժեքները, պետք է պարզի՝ ինչ ներքին մղումներ ու կարիքներ ունի:

Ապագա կարիերիայի ընտրությունը կատարելիս յուրաքանչյուրի համար առաջնային պետք է լինի ինքնաճանաչման և ինքնագնահատման խնդիրը: Առաջին հայացքից պարզ թվացող այս գործընթացը շատ բարդ է, որովհետև յուրաքանչյուր մարդ իր մասին կազում է որոշակի կարծիք, բայց միշտ չէ, որ այդ կարծիքը համապատասխանում է իրականությանը: Մարդու պատկերացման և իրականության միջև եղած զգալի անհամապատասխանությունը վնասում է մյուսների հետ հաղորդակցվելուն: Տիրապետել հաղորդակցման արվեստին՝ նշանակում է ունենալ այնպիսի «գործիք», որի շնորհիվ կարելի է ձեռք բերել գործընկերներ, ընկերներ, բարեկամներ: Երբ անհատին հաջողվում է մյուսների հետ իր շփումներն ու հաղորդակցումը անընդհատ լավարկել, նշանակում է, որ այդ անհատը իրական քայլ է անում դեպի հաջող կարիերա:

Մարդը կարիերիայի պլանավորման ճանապարհին պետք է նախ և առաջ պարզի, թե ինչպիսի խառնվածք ունի, քանզի անհատի խառնվածքից է կախված՝ արդյոք նա կարո՞ղ է կատարել տվյալ աշխատանքը, թե ոչ: Հայտնի է, որ գոյություն ունի անձի 2 հիմնական խառնվածք՝

1) միջանձնային (էքստրավերսիվ),

2) ներանձնային (ինտրավերսիվ):

Միջանձնայինների (էքստրավերտների) համար շրջապատող միջավայրը յուրօրինակ խթան է: Նրանք գործուն են են, կենսուրախ, կարողանում են մեծ ոգևորությամբ նվիրվել աշխատանքին: Սիրում են շփվել և կատարել այնպիսի աշխատանք, որը պահանջում է շփումներ այլ մարդկանց հետ, նրանք հակված են անընդհատ փոփոխությունների, միօրինակությունը նրանց մեջ առաջ է բերում աշխատունակության անկում: Այդ մարդկանց մեջ անընդհատ ծագում են նոր գաղափարներ, և նրանք այդ գաղափարներն իրագործում են համառորեն: Միջանձնայիններին հատուկ է աշխատասիրությունը: Այս մարդկանց պետք է տալ այնպիսի աշխատանք, որը մեծ եռանդ է պահանջում. նրանց ավելի բնորոշ է կառավարչական աշխատանքը, քանի որ այս մարդիկ օժտված են ուրիշներին իրենց ենթարկելու ունակությամբ: Նույնը չի կարելի ասել ներանձնայինների (ինտրավերտների) մասին: Վերջիններս ավելի անշարժ են, անգործունյա, քչախոս, չեն սիրում աղմկոտ միջավայր, աշխատում են այլ մարդկանց հետ ավելի քիչ շփվել: Միջանձնայինները՝ որպես աշխատակիցներ, շատ բարեխիղճ են, մեծ ջանասիրությամբ են աշխատում, բայց ավելի դանդաղ են կողմնորոշվում և շատ հաճախ դժվարանում են կայացնել ինքնուրույն որոշումներ: Այդպիսի մարդկանց ավելի ճիշտ է հանձնարարել միատիպ աշխատանք, և նրանց ոչ մի դեպքում պետք չէ տալ այնպիսի աշխատանք, որը կապված է մեծ շփումների հետ:

Հաջող կարիերա անելու համար թերևս միայն մարդու խառնվածքը բացահայտելը քիչ է. անհրաժեշտ է բացահայտել նաև, թե ինչ ունակություններով է օժտված մարդը, քանի որ յուրաքանչյուր աշխատանք պահանջում է

որոշակի ունակություններ և հմտություններ: Եվ անհատը պետք է կարողանա ոչ միայն անսխալ բացահայտել իր ունակությունները, այլ նաև կարողանա դրանք ճիշտ ներկայացնել գործատուին: Կարիերիայի պլանավորման ճանապարհին շատ կարևոր է նաև, որ մարդը չբավարարվի միայն այն ունակություններով, որոնցով օժտված է տվյալ պահին, անհրաժեշտ է անընդհատ զարգացնել տվյալ ունակությունները և ձեռք բերել նորերը:

Ընտրելով այս կամ այն մասնագիտությունը՝ անհատը պետք է իրեն հաշիվ տա՝ օժտվա՞ծ է արդյոք նա այն ունակություններով և հմտություններով, որը պահանջում է տվյալ մասնագիտությունը: Օրինակ՝ բարձրորակ կառավարիչ լինելու համար մարդը պետք է կարողանա պլանավորել, կազմակերպել, ղեկավարել, կիրառել ստանդարտներ, ճիշտ կառավարել լարված իրավիճակները, ժամանակը, վերահսկել, մղել և այլն: Ինչպես երևում է օրինակից, կառավարչին անհրաժեշտ է տիրապետել հաղորդակցման արվեստին, լինել լավ հոգեբան, որպեսզի կարողանա ճիշտ կառավարել անկառավարելի թվացող իրավիճակները, կարողանա ճիշտ գնահատել աշխատակիցների ունակություններն ու հակվածությունները:

Ասվածից պարզ է դառնում, որ մարդը, անսխալ բացահայտելով իր ունակությունները և խառնվածքի առանձնահատկությունները, կարող է իր համար պարզել, թե հատկապես որ ոլորտում կարող է հասնել որոշակի հաջողության: Եթե մարդու աշխատանքը չի համապատասխանում իր խառնվածքին և ունակություններին՝ անկախ այդ աշխատանքի ֆինանսական արդյունավետությունից, ապա դա հանգեցնում է ցածր արդյունավետության: Մարդ երբեք չպետք է կատարի այնպիսի աշխատանք, որը պահանջում է իրենից ավել ունակություններ կամ հմտություններ, որոնցով օժտված չէ ինքը: Այդպիսի աշխատանքը, որպես կանոն, իր հետ բերում է ինքնագնահատականի իջեցում և լարված իրավիճակներ:

Յուրաքանչյուր մասնագիտություն ընտրելուց առաջ վերը նշված խնդիրները շատ կարևոր և անհրաժեշտ են, բայց պակաս կարևոր չէ նաև աշխատանքի դիմելու գործընթացը, որը նույնպես պահանջում է հմտություններ, որոնք անհրաժեշտ են անհատին, որպեսզի նա կարողանա ինքն իրեն ճիշտ ու դրականորեն ներկայացնել, կարողանա գործատուին բացատրել, թե ինչու է ուզում ձեռք բերել այդ աշխատանքը և այլն: Վերը նշված խնդիրները հաղթահարելու համար յուրաքանչյուր ոք աշխատանքի դիմելու ժամանակ պետք է մանրամասնորեն խորհի այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսին են հետևյալները.

ա) Ինչպե՞ս պետք է ներկայացնի ինքն իրեն և իր նպատակները:

բ) Ինչո՞ւ է դիմում հենց այդ աշխատանքի համար:

գ) Որո՞նք են իր ուժեղ և թույլ կողմերը:

դ) Ինչպե՞ս է իրեն պահում անհաղթահարելի թվացող իրավիճակներում:

Նախապես խորհելով այսպիսի հարցերի շուրջ՝ անհատը կարող է գործատուի ուշադրությունը և համակրանքն ամբողջովին ուղղել դեպի իր կողմը: Սովորաբար գործատուները հարցազրույցների ժամանակ մեծ ուշադրություն են դարձնում թեկնածուների կրթությանը, մասնագիտական հմտություններին, անհատական հատկանիշներին, մարդու զարգացման հնարավորություններին, արտաքին տեսքին և այլն :

Եվ այսպես՝ կարիերիայի պլանավորման գործընթացը պետք է սկսել ինքնաճանաչումից, որոշել թույլ և ուժեղ կողմերը, հմտություններն ու հնարավորությունները, հստակորեն պատկերացնել նպատակներն ու մտադրությունները, անընդհատ զբաղվել ինքնակատարելագործմամբ, լինել ինքնավստահ, և այս դեպքում հաջողությունը կլինի անխուսափելի:

Այսպիսի խնդիրները, որոնք անհրաժեշտ են յուրաքանչյուր անհատի կարիերիայի պլանավորման ճանապարհին, Հայաստանում կարծես թե մղված են հետին պլան: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները թույլ են տալիս ասել, որ մեր երիտասարդների զգալի մասը, ավարտելով միջնակարգ կրթությունը, ընդունվում է բուհ ուղղակի ուսանող լինելու համար, որից հետո նրանց մեջ առաջ է գալիս իրենց ընտրած մասնագիտության և ունակությունների անհամապատասխանության խնդիր: Ուսումնասիրությունները ցույց են տալիս նաև, որ երիտասարդների մեջ կա այնպիսի մի համոզմունք, ըստ որի՝ իրենք առանց ծանոթ-բարեկամների միջամտության չեն կարող գտնել այս կամ այն աշխատանքը, այդ իսկ պատճառով համաձայնում են աշխա-

տել այնտեղ, որտեղ հնարավոր է՝ առանց մտածելու հետևանքների մասին: Իսկ այն երիտասարդները, որոնք փորձում են աշխատանք գտնել իրենց ուժերով, պարբերաբար բախվում են այնպիսի խնդիրների, ինչպիսիք են գործատուի հետ հախորդակցվելը, հարցազրույցներին մասնակցելը, լավ տպավորություն ստեղծելը, ինչպես ներկայանալը, ինչի մասին խոսելը, ինքնավստահություն ձեռք բերելը, կյանքի նպատակային վերակողմնորոշումը և այլն: Այս ամենը հանգեցնում է մի գաղափարի, որ մեր երիտասարդության զգալի մասը չունի հավատ վաղվա օրվա հանդեպ, քանի որ նրանցից շատերը, սովորելով տարբեր ուսումնական հստատություններում, ձեռք են բերում մասնագիտություն և, երբ դուրս են գալիս այդ հաստատություններից, նմանվում են ծովի ալիքներին հանձնված անկողմնացույց նավերի: Այս խնդրի արմատները բավականաչափ խորն են, և դրա լուծման համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի կենտրոններ, որոնք օգնեն մեր երիտասարդությանը դառնալ գրագետ՝ հաղորդակցման, գիտության մեջ, օգնեն ճանաչել և իրենք իրենց բացահայտել, օգնեն հավատալ իրենց ուժերին և սիրել ընտրած մասնագիտությունը, ինչպես նաև այդպիսի կենտրոնները պետք է երիտասարդներին սովորեցնեն, թե ինչպես կարելի է աշխատել խմբերում, ինչպիսի հարաբերություններ պետք է հաստատել աշխատանքի վայրում աշխատակիցների հետ, որովհետև աշխատավայրում ճիշտ հարաբերություններ ունենալը յուրաքանչյուրիս աշխատանքի բաղկացուցիչ մասն է կազմում, քանզի դրանից նույնպես կախված է աշխատանքի արդյունավետությունը: Այդ կենտրոնները պետք է այնպես աշխատեն, որ մեր երիտասարդները այլևս կասկած չունենան, որ աշխատանքում հաջողության հասնելու համար պետք է սիրել աշխատանքը, նվիրվել աշխատանքին, պարբերաբար ինքնակատարելագործվել, քանի որ կյանքում ոչինչ հենց այնպես չի տրվում, ամեն ինչ կախված է լավ աշխատելուց:

Այսպիսի կենտրոններ պետք է հիմնվեն ոչ միայն ուսումնական հաստատություններում, այլ նաև կազմակերպություններում, և մասնագետները պետք է օգնեն աշխատակիցներին՝ դուրս գալ դժվար իրավիճակներից, ճիշտ պահվածք դրսևորել, կազմակերպություններում ստեղծել առողջ միջավայր: Սեղծելով այսպիսի կենտրոններ, ուշադրություն դարձնելով աշխատակիցների վարքին, պահվածքին, խնդիրներին՝ կազմակերպությունները կարող են հասնել բարձր մակարդակի և բարձր արդյունավետության, որովհետև յուրաքանչյուր կազմակերպության ամենակարևոր միջոցը (ռեսուրսը) մարդն է, և պետք չէ ափսոսալ ներդրումները նրա հետ աշխատելու և նրա խնդիրները պարբերաբար լուծելու համար, քանի որ յուրաքանչյուր անհատի հաջողված կարիերան իր լուման է բերում թե՛ տվյալ կազմակերպության բարգավաճման, թե՛ տվյալ երկրի բարգավաճման խնդրին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Կ. Գևորգյան, Ա. Թադևոսյան, Ռ. Գևորգյան, Ն. Սերոբյան, Ա.* Խառատյան, Կարիերիայի պլանավորման գործընթաց, Երևան, 2002:
2. *Կ. Գևորգյան, Ա. Թադևոսյան, Մ. Պարիոլլա, Հ. Ստեփանյան,* Ինքնագնահատում. թեստեր, խնդիրներ, Երևան, 2003:
3. *Дэвид Оливер,* Как победить в переговорах, Санкт- Петербург, 2003г.

HOW ONE SHOULD START CAREER PLANNING

NARINE AVETYAN

Summary

For achieving success in career planning it is necessary to find out one's own temperament. Relevant solutions are offered to people with extroverted and introverted temperaments when seeking for their career.

ՄԵՐ ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԱՀԱՐԸ

(Ս. Կապուտիկյանի «Վերջին զանգ»[1] ժողովածուի ուրվագծային քննություն)

ԴԱՎԻԹ ԳՅՈՒԼԶԱՏՅԱՆ

Ս որ էի ավարտել հեղինակի մակագրությամբ նվիրաբերված գրքի ընթերցումը, սպասում էի ներսումս կատարվող խմորումները թղթին հանձնելու հարմար պահի, երբ այդ պահը՝ որպես հասունացման ազդակ, ներխուժեց դրսից, որը, սակայն, այնքան էլ դուրս չէ՝ երկու հիմքով. նախ՝ այն, ինչից սկսելու եմ խոսքս, տարբեր առիթներով (հուշերի մեջ, հոդվածներում, ելույթներում, բանաստեղծություններում) բացահայտված է աստ քննության ենթակա գրքում, և հետո՝ այդ «ոչ այնքան դուրսը» կապված է ուսանողիս՝ չգիտեմ ներաշխարհի թե արտաշխարհի հետ, որն առավել մեծ պատասխանատվություն ու ջանք է պահանջում ինձնից, թեև մտադիր չեմ հիմա դասատվություն անել: Իսկ սկզբնասելիքս հետևյալն է:

Հիշածս ուսանողի խմբագրությամբ ու առաջնորդողով վերջերս լույս տեսավ մշակութային մի էջառատ լրագիր:Առաջնորդողի առանցքն այն է, թե խորհրդային տարիներին արվեստի գաղափարն էլ, թեման էլ որոշողը կոմկուսն էր, և ոչ մի արվեստագետ չէր շեղվում պարտադրված կաղապարից...

Պարտադրանք կա՛ր անշուշտ, և դրան հնազանդվողներն էլ քիչ չէին, բայց արվեստագետների՝ կաղապարից դուրս չգալու մտայնությունը, անգամ եթե մոլորություն է, շատ է հարազատ անդրօվկիանյան բթացնող կաղապարին...

Խորհրդային Հայաստանի պատմությունը միայն պաշտոնական տեղեկագրերում ու դասագրքերում էր տոկոսներով ողողված հնգամյակների ու ԽՄԿԿ համագումարների պատմություն, որը, ցավոք, մերօրյա՛ դասագրքերում էլ այդպես ու այդչափ է ներկայացվում աշակերտի՛ն էլ, ուսանողի՛ն էլ: Այնպես որ, նշված ժամանակաշրջանի տոկոսողող պատմության մոլորության հարցում մեղքն այնքան էլ ուսանողինս չէ, այլ մեր ժամանակի՝ գիտակցված թե անգիտակցորեն պարտադրված պաշտոնական ընկալմանը: Հա՞րկ է հիշատակել, որ նախորդ վարչակարգի յոթանասուն տարում բռնություններ ու բարբարոսություններ են եղել՝ հոգեպես բեկելով, մարմնապես լլկելով ու տանջամահ անելով միլիոնավորների, հիշատակե՛ք, խնդրեմ, որքան ուզում եք. դաժան ճշմարտություն է դա, և ճշմարտությունը պիտի արևերեսվի. բայց թեթև մի՛ նայեք այն ծանրակշիռ իսկությանը,որ այդ 70 տարուց հազիվ 40-ում եղած հարաբերականորեն ազատ շրջանում հոգևոր հզոր մթնոլորտ են ստեղծել մերազնյա լուսավոր մտքի տերերը, նրանց մեջ՝ հատկապես գրողները՝ 37 և 49 սև թվականների ահը սրտներում:

Թե ինչպես և ինչքան է ենթարկվել Կապուտիկյանը պարտադրված կաղապարներին, ոչ ոք իրենից ավելի բաց չի ներկայացրել, թեև նա ինքն էլ կարող էր դա չանել և գալիք սերունդներին ներկայանալ միայն լուսապսակով, ինչպես գրեթե բոլորն են վարվում՝ քողարկելով (որ նույնպես մարդկային է) սեփական թերիները: Բայց հենց նրա՛ համար, որ նա հոգու ողջ մերկությամբ է ներկայանում ընթերցողին, ի՛նքն է իր գերագույն ազնվությամբ հյուսում այդ լուսապսակը: Ահա թե ինչու են ծաղրելի վիճակում հայտնվում նրան կտցահարողները. վերջիններս ուրիշ աղբյուր չունեն՝ բանաստեղծուհու ինքնախոստովանությունից բացի...

* * *

Ս. Կապուտիկյանի՝ այս տարի լույս տեսած «Վերջին զանգ» խորագրով գիրքը նրա բազմամյա ստեղծագործության լավագույն արարումների շարքը պիտի դասել, թեև գրական «տեսականու» իմաստով նորություն չկա այնտեղ. նույնիսկ հուշագրության ժանրը Կապուտիկյանի գրչով հայտնի է մեզ դեռ «Քարավաններից» ու «Խճանկարից», և սա՝ ոչ միայն այն առումով, որ այդ գրքերում կերպավորված շատ դեմքեր արդեն հուշ են դարձել, ու նշված գրքերն էլ, այս հայեցակետով, յուրօրինակ *հետընթաց* հուշագրություններ են, այլև բո՛ւն իմաստով քիչ չեն այնտեղ հուշի դրվագները: Վերջին գրքի հուշաշխարհի նորությունն ա՛յլ հարաչափով է մեկնելի. դա հեղինակի՝ ***այս դարից այն դար,*** ասել է՝ այս վարչակարգից նախորդին նետած հայացքի ընդգրկունությո՛ւնն է, կաղապարված հասարակարգում ավագ, սերնդակից ու կրտսեր ընկերներով ունեցած ներքին ազատության անսահման պաշարի բացահայտո՛ւմը՝ նրանց նախանձելիորեն համաձայնեցված գործունեությամբ ու սրանով պայմանավորված՝ հայեցիության նպաստավոր մթնոլորտի կազմավորմամբ: Այս իմաստով Կապուտիկյանի «Վերջին զանգի» «Հուշաշխարհ» բաժինն առավել ընդհանրություն ունի «Էջեր փակ գզրոցներից» գրքի հետ, սակայն վերջինից էլ զատվում է ներքին տրամադրության որոշ տարբերությամբ, թեև նույնական են այս երկուսի գաղափարական թե՛ ելակետը, թե՛ հանգակետը:

Խորքային ազատությունն առկա է հատկապես այնտեղ, ուր ստեղծագործ ուժի ներկայությամբ կա դրա իրացման պաշտոնական արգելափակում. ձիրքի՛ հորձանքով է հնարավոր կաշկանդիչ ամբարտակի խորտակում: Վտանգավոր է պաշտոնական հռչակագրով հաստատված ազատությունը, եթե ձիրքը հետնոլորտ է մղված. անազատությո՛ւն է այդ ազատությունը, որովհետև գռեհիկ է իր խորքազուրկ մակերեսայնությամբ: Բաղձալին ստեղծագործ ուժի գնահատման պայմաններո՛ւմ արդյունացող ազատությունն է, որին էլ միշտ ձգտել է հայ հոգին, և մինչև հիմա մեր վեհացումներն ու արարումներն արդյունք են այդ ձգտման:

Խորքային ազատությունն արվեստ է. արվեստ է և դրանով հագեցած հայրենասիրությունը: Արվեստավոր հոգին ազատություն է կերտում:

Այս ամենը կամայական վերագրում չէ արվեստակերտ հոգուն և, բնականաբար, վերաբերում է նաև նշված ժամանակաշրջանի արվեստագետներին. սա նրանց գործելակերպն իմաստավորող, նրա՛նց իսկ հոգևոր հսկողությամբ կյանքի կոչվող, խորապես գիտակցված ազգային-հասարակական-մշակութային շարժում ապահովող առարկայնություն է, որի «տեսությունը» տվողներից մեկը Կապուտիկյանն է, օրինակ, 1966-ին գրած իր «Գոհունակություն» բանաստեղծությամբ. ահա՛ մի հատված դրանից.

Գանձեր չունեմ ես,
Սոսկ բանաստեղծի մի համբավ ունեմ,
Որ և կարող եմ վաղը չունենալ.
Բայց նախանձեցե՛ք ինձ, մարդի՛կ, տերե՞ր
ու տիրակալներ,
Որ ձեզ կարծում եք մեծ ու զորավոր,
Չի ստրկության ցանցերի մե՞ջ եք պահում
անզորին:
Անզորը դու՛ք եք,
Իսկական ուժը – ուժն է քո ձեռքով
արձակե՞լ նրան,
Ով որ պոկվել է ուզում քեզանից:
Դու՛ք եք ստրուկը.
Սոսկ նա՛ է ազատ,
Ով որ ազատ է քաշե՛լ, ե՞տ քաշել իր բիրտ
բռունցքը
Եվ ազատություն տալ յուր նմանին...

Ահա ազատության այսօրինակ ընկալման մթնոլորտում է գործել հուշ դարձող մեր ավագագույն սերունդը Վազգեն վեհափառի, մեր վարպետների՝ Ավ. Իսահակյանի ու Մարտիրոս Սարյանի, հետո էլ Հր. Քոչարի հոգևոր հովանու ներքո: Գործել է գեղեցկորեն ներդաշնակ հոգիների համանման թրթիռներով, և այդ թրթիռներն էլ իրար են հյուսվել մեր Գեղարդում, մեր գրողների ելույթներից էլեկտրականացվող դահլիճներում, միմյանց տներում: Ինքնին խոսուն է այն եղելությունը, երբ վեհափառի՝ բանաստեղծուհու տուն կատարած այցելությանը տանտիրուհին մասնակից է դարձնում իր ընկերներին՝ Պարույր Սևակին, Սերո Խանզադյանին, Հրաչյա Հովհաննիսյանին, և

ամեն հաջորդ այցելության ընդլայնվում է այս անվանացանկը՝ ներառելով նաև երաժիշտների, նկարիչների ու գիտնականների: Ահա այս արվեստավոր ազատության մթնոլորտում էլ Հրաչյա Քոչարի համառ հետևողականությամբ ու նրա՝ երկրի ղեկավարներին հորդորելու զորությամբ, Շիրազի «եղեռնապատում հրետանային համազարկերով», Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» երկով, ասես երկնքից իջած Լուսինեի երկնողող ու երկնառաք կոհակումներով, Կապուտիկյանի «Մտորումներով», հետսփյուռքյան տասնյակ հանդիպումներով ու «Քարավաններով» ու այս կարգի այլ «բաղադրատարրերով» է ծնունդ առնում 1965 թ. ապրիլի 24-ը...

Պատմության ընթացքը գնահատող հոգեբանի և երկրում տիրող մթնոլորտով պայմանավորված ժողովրդի հոգեկանությունը բացահայտող իմաստասերի խորաթափանցությամբ բանաստեղծուհին տալիս է 60-ականների իրական, ասել է՝ խորքային պատկերը: Այո՛, Հայաստանում խրուշչովյան «ձնհալի» ջրերը, ի տարբերություն ԽՍՀՄ մնացած բոլոր հանրապետությունների, որակապես տարբեր հունով են ընթանում: Այն, ինչ ուրիշ հանրապետություններում անհատի ազատության ու այլախոհության պահանջ էր, մեզ համար լուծման կարոտ ազգային հարաբարդ խնդիրների հրապարակման հնարավորություն էր: Մանկամիտ է մեր քաղաքական գործիչների՝ այսօր էլ չդադարող այն հոխորտանքը, թե մյուս ազգերի այլախոհ մտավորականները հիմնականում գրողներ էին, իսկ մեզանում ոչ մի այլախոհ գրող չկար: Ի պատասխան այս «սպանիչ» քննադատության՝ հարկ է հետևյալն ասել. ընդունված «չափորոշիչներով» Հայաստանում այլախոհ գրող չկար, որովհետև հայ գրողի էությանը միշտ է խորթ եղել մակերեսային ազատությունը: Այլախոհ գրողներով լեցուն այդ ո՞ր հանրապետությունում անազատության կապանքները փշրող այնքան անհատներ կային, որքան այլախոհ գրողներից «զուրկ» Հայաստանում 1965-ին: Մի՞թե ազատության բարձրագույն դրսևորումը՝ ***համազգային ազատությունը,*** անազատ անհատների համախմբման արտահայտություն է...

Խորհրդային կարգերի բռնություններին բացահայտ չընդվզելը մեր լավ վիճակից չէր գալիս. ճարահատ համակերպում էր դա, և սրա «տեսական» հիմնավորումները ևս կան Կապուտիկյանի՝ այդ տարիներին գրված, բայց հետխորհրդային շրջանում տպագրված բանաստեղծություններում: Դրանցից մեկը՝ «Հանդիպում Մոսկվայի «Ուկրաինա» հյուրանոցում», զետեղված է 1994-ին լույս տեսած «Տագնապ» ժողովածուում, մյուսը՝ «Անճառելի վիճակ», աստ քննվող գրքում. մի խոսուն հատված էլ դրանից բերենք.

Ստիպված եմ սեղմել լեզուս ատամիս
տակ,
Զգաստ հաշվել ամեն քայլ ու անակնկալ
Եվ կոչ անել, ավա՜ղ, որպես մի ելք
վերջին,
Ապավինել նորից Հյուսիսային Արջին
Եվ դեռ ասել խոսքեր շնորհակալ.
Ու համբուրել ձեռքն այն, որ գրկում է
քնքուշ,
Որպեսզի քեզ խեղդի իր այդ գրկում...

Բացի սրանից՝ հարկ է նկատել, որ այնուամենայնիվ եղել են ընդվզումներ. պաշտոնական ժողովներում ու համագումարներում անարդարությունները և իշխանության առաջին դեմքերին հասանե-հանվանե ձաղկելու համարձակությամբ Խորհրդային երկրի պատմության մեջ Կապուտիկյանը շատ մրցակիցներ չունի: Վերջապես ազատատենչ քաղաքական գործիչներին հրապարակորեն պաշտպանելու և նրանց մի մասին առարկայնորեն օգնելու հարցում քիչ չէ մեր գրողների և հա՛տկապես Կապուտիկյանի վաստակը:

Հա՛, նշված ժամանակաշրջանում Հայաստանում չկային այլախոհ գրողներ, որովհետև նախ՝ մեր գրողների գաղափարները սիբիրյան բանտախցերում սառցակալելու համար չէին նախատեսված, այլ մեզ 65 ու 88 թվականներին հասցնելու՝ համար: Երկրորդ՝ ոչ մի հանրապետությունում 37-ի մանգաղը այնքան առատ հունձք չէր կատարել, ինչքան Հայաստանում, և ոչ մի ուրիշ հանրապետությունում այդ մանգաղը, Հայաստանից բացի, չգործեց նաև 49-ին. այնպես որ, մեր գրողներն իրենք իրենց բանտում տեսնելու չտեսության բարդույթով չէին տառապում: Երրորդ՝ 15, 37, 49 թվականներ տեսած ժողովրդի հոգուց վախը ցրելու և այնտեղ ազատության սերմեր ցանելու համար մեր «քաղաքական մեկնա-

բանների» երևակայության մեջ չտեղավորվող ազատության աներևակայելի պաշար պիտի ունենային մեր գրողները, և հե՛նց 65-ը ցույց տվեց, որ նրանք իրոք այդ պաշարի տերն են:

Քիչ չեն հուշագիրները հայ իրականության մեջ, և քիչ չեն ուշագրավ հուշագրությունները: Բայց կապուտիկյանական հուշաշխարհը գրավչության անօրինակ հարաչափեր էլ ունի, որոնցից մեկ-երկուսին կփորձեմ անդրադառնալ այստեղ:

Նախ՝ այն, որ հուշագրությունը հնարավորություն է տալիս համարում ունեցող «հուշատիրոջը» ճանաչելու նաև, այսպես ասած, մարդկային միջավայրում՝ առտնին հարաբերություններում, սովորական և ընթերցողի համար թերևս ամենից ավելի սպասելի մի բան է. կա՛, իհարկե, այս ամենը Կապուտիկյանի հուշերում, և քիչ չեն այնտեղ անգամ նեղ անձնական զավեշտապատումները: Սակայն այս նեղանձնայնությունն անգամ ինքնանպատակ չէ բանաստեղծուհու համար. սա այն տարրերից մեկն է, որոնցով ամբողջացրել է նա տվյալ ***կերպարի կերտումը՝ հասարակական կշռով:***

Երկրորդ՝ կերպարի ***հասարակական կշիռը բանաստեղծուհու գրչով վերահաստատվում է համապատասխան մթնոլորտում,*** և անգամ քո ապրած ժամանակաշրջանը ստիպված ես լինում վերանայել՝ «կերպընկալ խոնարհությամբ» ենթարկվելով արվեստագետի «աչքին»՝ նրա ***դիտողականությանը:***

Երրորդ՝ նշված մթնոլորտի կարևոր «բաղադրիչներից» են ***հընթացս վրձնած կերպարները,*** որոնցից յուրաքանչյուրին վերաբերող մանրապատումը հարաբերական անկախություն ունի, մաթեմատիկական լեզվով ասած՝ ենթաբազմություն է հանրաբազմության կազմում, և որքան էլ առանձնորեն գեղեցիկ լինի իր ներքին ավարտունությամբ, այնուամենայնիվ նա ամրակայիչ շաղախ է, որ ծառայում է առավել մեծ կերտվածքի արարմանը: Այդօրինակ «ենթաբազմություններով» հարուստ է հատկապես Հրաչյա Քոչարին նվիրված հուշապատումը: Գիտենք՝ միշտ չէ, որ հարթ են եղել միջանձնային հարաբերությունները. գրչակիցների մեջ եղել են նաև միմյանց դառնացնողներ. սակայն չկա ոչ մի խոսք այդ մասին. բոլոր կերպարների բնութագրումը կատարված է սիրով, և առաջնաբեմում դրանցից յուրաքանչյուրին տրված է մարդկային վեհի չափանիշով հաստված արժևորում. չկա միտում՝ սևեռվելու մարդկային թուլություններին վրա, մանավանդ եթե այդ «թուլակիրները» ազգային բախտորոշ պահերին համակամության աներկբա պատրաստակամություն են ունենում: Ավելին. բանաստեղծուհին չի սևեռվում նույնիսկ հասարակության մրուրի վրա. թեթև մի հարվածով ձեռաց ստվերագծում է այդ մրուրի ողջ պարունակությունը՝ «գրականության մասնագետ Արտաշես Ոսկերչյանը», «հին բոլշևիկ և բանաստեղծի հավակնություն ունեցող Գուրգեն Հայկունին» ձևակերպումներով:

Համբավավոր մարդու կյանքի ինչ-ինչ մանրամասներ, հատկապես եթե այդ համբավի տերը գրող է, միշտ է հետաքրքրել հայ ավանդապաշտ հասարակությանը, և դա հասկանալի է. գրողը ***բարոյաչափ միավորի*** դեր է ունեցել մեր դարավոր իրականության մեջ («...Ու հույսն ու լույսը նրանք են տվել»): Երկար ժամանակ բանաստեղծական կիսասքող, երբեմն դառնալից տողերն են ընթերցողին հնարավորություն տվել՝ սոսկ կռահումների մակարդակով հայտնաբերելու Շիրազի կերպարը Կապուտիկյանի ստեղծագործության մեջ: Մինչև 60-ականների կեսերը ընթերցողը լռելյայն բանաստեղծուհու սիրերգության «օբյեկտ» էր դիտում Շիրազին: Սակայն իր «Ստեղծագործություն» բանաստեղծությամբ Կապուտիկյանը սառը ջուր լցրեց ընթերցողի գլխին.

Մի՛ փնտրեք սիրո իմ տողերի տակ
Մարդկանց անուններ՝ կորած ու հայտնի.
Թվում է՝ ինձ էլ անհայտ են նրանք,
Դուք զուր մի՛ փնտրեք, նրանց չեք գտնի:

.....

Մի՛ փնտրեք նրա անունը անգո,
Ես էլ չգիտեմ, դո՞ւք էլ չեք գտնի:

Հոգու փակ տիրույթին վերաբերող տևական լռությունից հետո ընթերցողն այս անգամ թերևս շռայլորեն վարձատրված զգա Շիրազի ներհակ կերպարին հանդիպելիս: Սրանով երևի սկիզբ դրվի բանահյուսական պատումների վերջին, մանավանդ որ, չնայած բանաստեղծուհու՝ անձնապես դառնա-

ցած լինելուն՝ ի պատիվ նրա գրչի՝ բնավ չի նսեմանում ժողովրդի սիրելի բանաստեղծի գրական դիմագիծը. ընդհակառակը, Կապուտիկյանն ուժ է գտնում իր մեջ՝ իրե՛ն իսկ հատուկ բարձր գեղագետի ձիրքով վեր հանելու ոչ միայն շիրազյան որոշ բանատողերի արժեքը, այլև «անկառավարելի բնավորության» տեր մարդուն բնուստ տրված մանկական դյուրահավատությունն ու դրա... հետևանքները...

Չորրորդ՝ հուշը գնահատման խոսք է հուշագրյալի մասին, իսկ ամեն մի գնահատում անդրադարձ հատկություն ունի, ասել կուզի՝ ***ինքնագնահատում*** է այն՝ որպես կանխենթադրույթ: Կապուտիկյանական կերպարի ինքնակերտումը կամ ինքնանկար-ինքնաքանդակն անհամեմատ բաց է ընթերցողի առաջ, և ինչ խոսք, այս բացորոշությունը շահեկանորեն տարբեր է բարդութավոր ինքնահավանների մակերեսայնությունից: Վաղուց է վաստակել Կապուտիկյանն ինքնարարման այս իրավունքը թե՛ արդեն վերն ասվածի հիմքով՝ բաց հոգով ընթերցողին նեկայանալու համարձակությամբ, թե՛ իր արածի հարգն իմանալով. ազգային-հասարակական մտքի ու մթնոլորտի վրա ունեցած սեփական ազդեցությունը բանաստեղծուհին ներկայացնում է չեզոք մարդու հանդարտությամբ: Եթե եղել է իր գծած ի՛ր կերպարի մեջ, ինչպես ինքն է ասում, homo sovetikus-ի արտահայտություն, այդ արտահայտությամբ է կերպարը ներկայանում, և եթե արենակիցներին համախմբելու վճռախնդիր պահ է եղել, ապա իր դերն ու դիրքը քաջ գիտցող ազգահավաք բանաստեղծի մեջ գործող ստույգ ուժաչափով է կերպարը ներկայանում...

Ի լրումն և համփոփումն թվարկյալների՝ հարկ է նկատել, որ բանաստեղծուհու հուշագրության առանձնահատկություններից մեկն էլ (երևի *ժամանակ* չլինելու կամ *ծմռան* գալստյան իրողությամբ պայմանավորված) ***ասելիքի խտությունն ու խորությունն*** է: Պատահական չէ, որ «Հհուշաշխարհի» բնաբան է դրված հեղինակի հայտնի քառյակներից մեկը («Ջահել չես, հագի՛ր վերարկուդ»): Ահա այդ խիտ խորության կապուտիկյանական ձիրքով, թեև հուշերը նվիրված են հինգ անվան՝ Վազգեն Ա Հայրապետ, Ավ. Իսահակյան, Արամ Խաչատրյան, Հրաչյա Քոչար, Մանվել Բեգլարյան, ինչպես վերն ասվեց, կերտված են նաև բազմաթիվ կերպարներ, որոնք սովորական իմաստով դիպվածային (էպիզոդիկ) չես ավանի. դրանց մեծ մասը, նկարչության լեզվով ասած, ***պատկերված է ոչ թե որպես ճեպանկար, այլ որպես գեղանկար***՝ գունային հարուստ շերտերով. ողջ մատուցվածը յուրօրինակ խտանյութ է՝ հարուստ նաև իրազեկությամբ: Եվ չնայած ասելիքի սեղմությանը՝ զարմանալիորեն առատ են հեղինակի զննական հայացքն ու խորաթափանցությունը վեր հանող՝ աշխարհին, հայրենիքին, ժամանակին, մարդկանց տված արվեստագետի գնահատականները՝ վերլուծություն/արտածություններով, համադրություն/մակածություններով ու անհրաժեշտ եզրահանգումներով:

* * *

Բանաստեղծուհու «Վերջին զանգ» ժողովածուն, բնականաբար, ունի իր բաժինները: Պետք է ասել, որ մի առանձնահատկություն էլ այս բաժիններն ունեն. դրանք առանձնացված են ոչ թե թեմատիկ, այլ ժանրային տարբերություններով, որոնք են՝ հուշագրություն, դամբանականներ, հրապարակային ելույթներ, հարցազրույցներ, այսպես ասած՝ ինքնագրություն և, իհարկե, բանաստեղծություն: Գրքի ողջ նյութը միավորված է մեկ թեմայով՝ հայրենասիրությամբ՝ բովանդակավորված ազգի ու հայրենիքի ճակատագրի ցավով և գալիքի նկատմամբ ունեցած տագնապով: Այս իմաստով՝ «Հուշաշխարհին» հաջորդող բաժիններում, ներառյալ բանաստեղծությունները, գրեթե չկա մի բան, որ հուշերի առիթով այս կամ այն կերպ արծարծված չլինի: Օգտվելով, ահա, այս հանգամանքից և տեղի սղությունը նկատի առնելով՝ այլևս նույն ծավալով չեմ անդրադառնա դրանց: Պարզապես վերջիններից ուզում եմ որոշ առանձնացումներ անել:

Հայտնի է, որ Կապուտիկյանը հայոց լեզվին ոչ միայն փառաբանող երգեր է նվիրել, այլև նվիրվել է նրա համար մղվող պայքարին: Հայության համար ճակատագրական էր 1977-1978 թթ. Խորհրդային Հայաստանի երրորդ սահմանադրության նախագծի քննարկման ու հաստատման ժամանակահատվածը, երբ ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոն պարտադրում էր հանել հայերենի՝ պետական լեզու լինելու հոդվածը: Բռնատի-

ության տեսակետից՝ վտանգավոր, բայց և ժամանակի մտավորականների՝ հայաստանյան ղեկավարների հետ արագ, համաձայնեցված ու նպատակասլաց գործելու առումով նախանձելիորեն նպաստավոր ժամանակաշրջան էր դա: Ինչ խոսք, պայքարի առաջամարտիկներից էր Կապուտիկյանը, որի մտահոգությունների չափավոր արտահայտությունն էր Բրեժնևին ուղարկած նամակը: Լեզվական պայքարի առավել բուռն դրսևորումը 1981-ին Հայաստանի գրողների միության 8-րդ համագումարին բանաստեղծուհու ներկայացրած զեկուցումն էր, որով նա իր բացահայտ տագնապն էր հայտնում օր օրի աճող ռուսական դպրոցների միջոցով իրականացվող ուծացման համար: Այդ նույն ժամանակներում ընդունելով նաև ռուսական դպրոցներում անցկացվելիք գրական հանդիպումների հրավերները՝ բանաստեղծուհին իր շնորհակալական խոսքում նշում էր ա՛յդ իսկ դպրոցների փակման անհրաժեշտությունը (մեր քաղգործիչների ակա՞նջը կանչի)...

Ի՞նչ իմանայինք, որ այն, ինչ օտարները չկարողացան անել բռնապետության մեջ, անկախ Հայաստանում պիտի հետևողականորեն դա գլուխ բերել փորձեն Ազգային ժողովի հայ պատգամավորներն ու խմբակցությունները: Նաև այս ցավի ու վիրավորանքի խտացված արտահայտությունն է գիրքը եզրափակող «Ապստամբություն» բանաստեղծությունը: Ուշադրությո՛ւն դարձրեք հետևյալ տողերի վրա.

Օ՛, խաղատուն դարձած հայրենական մեր տուն,
Ցեխերի մեջ ընկած մագաղաթյա մատյան,
Կախաղանի սյունից կախված անկախություն,
Մեր լույս երազների խավարակուռ պատյան:

Այս ցավի արտացոլումը կա բանաստեղծուհու՝ «Պաշտպանենք մեր լեզուն ... մեզնից» վերնագրյալ զեկուցման մեջ, որ հեղինակը ներկայացրեց գրողների միության՝ հայոց լեզվին նվիրված ընդլայնված պլենումի ժամանակ, որի քննարկումների ականատեսն ու մասնակիցն եմ եղել և իբրև մասնակից պիտի ասեմ, որ չնայած բարձրատիտղոս լեզվաբանների ներկայությանն ու ելույթներին՝ ամենից ավելի գիտականը Կապուտիկյանի ելույթն էր, որը նաև նուրբ քաղաքագետի ու դիվանագետի հոտառությամբ կետ առ կետ բացահայտում էր լեզվի օրենքի նոր նախագիծ ներկայացրած, իր արտահայտությամբ, ««Օրինաց երկրի» օրինազանցությունները»: Իսկ մեր անկախությունը վտանգող օրինագծի իրարահաջորդ կետերը սրանք են. «ՀՀ-ում կարող են ստեղծվել ռուսերեն լեզվով դասավանդվող հանրակրթական ուսումնական հաստատություններ ընդհանուր հանրակրթական ուսուցմամբ», «ՀՀ քաղաքացիներն ազատ են իրենց երեխաների համար հանրակրթական ուսումնական հաստատություններ ընտրելու հարցում»[2]: Մեջբերելով նախագծի այս կետերը՝ հետաքրքիր պարզաբանում է տալիս բանաստեղծուհին. «Բուժական աշխարհում կա այսպիսի մի հասկացողություն. «ընդհանուր ֆոն». բժիշկներն ասում են. հիվանդի հիմնական հիվանդությունը, ասենք, թոքերի բորբոքում, այնքան էլ վտանգավոր չէ, բայց վտանգավոր է ֆոնը՝ սրտի անբավարարություն, շաքարախտ, լյարդի ախտահարում և այլն:

Ահա այս «ընդհանուր ֆոնի» վտանգավորությունն է, մեր հասարակության ընդհանուր առողջական վիճակի ախտահարումը, որ ստիպում է մեզ տագնապով նայել.... վերոհիշյալ կետերին»[3]: Իսկ այդ ֆոնն այսօր նույնիսկ ռուսերենը չի ստեղծում. սա սոսկ միջոց է՝ ցատկատախտակ՝ ռուսական կրթություն ստացած մեր հայրենակիցների մեջ հոգեբանական բարդույթ առաջ բերելով՝ պահանջել տալու, որ վերաբացվեն ռուսական դպրոցները, իսկ դրան զուգահեռ իրական ֆոն կստեղծվի (արդեն մասամբ ստեղծված է) անգլամոլությամբ, որով «օդը կլցվի «օքեյներով» և «օռլայթներով», «գուդբայներով» և «օրվուառներով», «լասվեգասներով» և «հոլիվուդներով»»[4]: Այլ կերպ ասած՝ հարթուղի է ապահովվում՝ հայությունը հեղձելու համընդհանրացման ճահճում. «Միակ ու զորավոր պետական լեզու ունենալը նախապայման է մեր երկրի իրական անկախությունն ու աշխարհատարած մեր ժողովրդի հոգևոր ու մշակութային միասնությունը ապահովելու համար»[5]:

Նույնքան սթափ է բանաստեղծուհին «երկլեզվյա» հորջորջված մեթոդի նկատմամբ. «Իմ կարծիքով, ոչ միայն մի քանի լեզու, այլև նույնիսկ երկու լեզու հավասարա-

պես գիտցող մարդ չի լինում», և այդ մեթոդի «ներարկումները խառնաչփոթություն են ստեղծում երեխայի ուղեղում», ուստի պետք է ձերբազատվել դրանից, եթե ուզում ենք, որ «....հայոց հողում ծնվեն նոր Չարենցներ ու Պարույր Սևակներ»[6]:

Ժխտողական է Կապուտիկյանի վերաբերմունքը նաև, այսպես կոչված, դասական ուղղագրությանն անցնելու պահանջի դեմ. «Եթե մեր ժողովրդի միասնության ամենահուժկու գրավականն է դասական ուղղագրությունը, հապա ինչպե՞ս է, որ այդ ուղղագրությունը չի օգնել, որ միասնական դառնա սփյուռքը, և տարբեր կուսակցություններն ու միությունները այս էլ 70-80 տարի շարունակ չհասկանան իրար ու մնան այդպես իրարամերժ»[7], մինչդեռ տարբեր ուղղագրությունները բնավ խոչընդոտ չեն եղել՝ միասնական հոգևոր ոլորտում բերկրելու հայրենիքում ու սփյուռքում ստեղծված մեր գրական գոհարներով:

* * *

Ս. Կապուտիկյանի գրական ժառանգության պատկառելի մասն է նրա արձակը: Սակայն սովորաբար նրան գնահատող պաշտոնական ամփոփ խոսքում է միայն, որ որպես ստեղծագործողի՝ նրա արձակագիր լինելն էլ է հիշատակվում: Չեմ կարծում, թե կգտնվի որևէ գրականագետ, որ պակաս արժեքավոր համարի այդ արձակը (այլ հարց է, որ այն կարոտ է արժեքավոր ուսումնասիրության): Եվ այնուամենայնիվ թե՛ մասնագետի, թե՛ ողջ հայության և թե՛ օտար ընթերցողի համար Կապուտիկյանի հիմնական տիտղոսը եղել և մնում է ***բանաստեղծուհին,*** իսկ հայաշխարհում «Կապուտիկյան» անունը հե՛նց բանաստեղծուհու խորհրդանիշն է: Ի՞նչ ասեմ. «մեղքը» իրենն է՝ Կապուտիկյանինը: Կարծում եմ՝ այս իրողությունը պիտի բացատրել ոչ միայն նրանով, որ հեղինակն իր ստեղծագործության «վկայականը» ձեռք է բերել բանաստեղծական սկզբով (քիչ չեն գրական կենսագրությամբ բանաստեղծական սկիզբ ունեցող գրողները, որոնք, անգամ ոչ այնքան ուժեղ արձակի անցնելով, դադարել են հիշատակվել որպես բանաստեղծ), ոչ միայն նրանով, որ մեր օրերում էլ բանաստեղծության դասական արարումներ է հրաշագործում, այլև իր արձակի յուրակերպությամբ ու իր կերպարով: Իսկ այդ յուրակերպությունը սոսկ արտաքին տվյալներով, այսինքն՝ նրա արձակը ողողող բառակերտ ու ասութակերտ անօրինակ առատ պատկերներով չէ միայն, որ մեկնելի է. այս իմաստով պակաս հրաշակերտներ չեն բակունցյան ու մաթևոսյանական, շահնուրյան ու համաստեղյան արարումները: Մի ուրիշ, խորքայի՛ն մի բան կա այս ամենի մեջ: Հիշատակածս կապուտիկյանական պատկերները սոսկ միջոց են ասելիքի թափը՝ երկրի ճակատագրով այրվող արվեստագետի տվայտանքի ու ոգորումի կնիքով, տեղ հասցնելու համար. մյուս կողմից էլ, ճիշտ հակառակը, իրական ընդերք ունեցող թափի արդյունք է կապուտիկյանական պատկերային համակարգը: Սակայն սա էլ, տրանաբանության լեզվով ասած, անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է: Կապուտիկյանը բանաստեղծ է նաև իր բանավոր խոսքով, որը, եթե դատելու լինենք նույնպես արտաքին տվյալներով, իր ճշգրտությամբ ու կուռ տրամաբանականությամբ պիտի որ գիտական համարվեր, սակայն մեր օրերում ոչ մի գիտնական չի տիրապետում բանավոր խոսքի ճարտարության այդ զենքին. ուրեմն խորքն է կարևորը՝ ընդերային հարուստ պաշար ունեցող հոգին, որ է՛ բանաստեղծական: Ահա այս ամենի, նրա քաղաքացիության և նեղ իմաստով բանաստեղծելու օժտվածության համատեղմամբ է, որ Կապուտիկյանը մեր մտապատկերում ամրակայված է բանաստեղծի կերպարով...

Բանաստեղծական սկզբով գրական աշխարհ մտած Կապուտիկյանը «Վերջին զանգի» ավարտն էլ ազդարարում է բանաստեղծությամբ: Դասական արվեստի նմուշներ է պարունակում «Ես՝ մինչ ի մահ...» խորագրված բանաստեղծությունների հավաքանին: Իր տրամադրությամբ այս շարքն էլ գրքի նախորդ բաժինների շարունակական հաստատումն է ու խտացված ամփոփումը: Հեղինակի բանաստեղծական գյուտին հատուկ նորավիպային անսպասելի, բայց և նպատակասլաց ավարտով ցնցող են «Ելք Հայաստանից», «Անճառելի վիճակ», «Ցուրտ ու մութ տարիներից հետո», «Կանացի երգերից», «Սևագրություն», «Հոգնածություն», «Լուսանկարի առաջ», «Հոգեվիճակ, որ միայն իմը չէ», «Գծանկար», «Ապստամբություն», «Շուկայական» բանաստեղծությունները: Պիտի խոսեմ թվարկածնե-

րիցս միայն վերջինի մասին:

«Ազնիվ մաքսանենգի» քնարական կերպարը նորություն չէ հայ գրականության մեջ: Լավագույններից է Թումանյանի քառյակներից մեկը՝ նվիրված հայերեն չիմացող, բայց հայ գրականությամբ հետաքրքրվող ու բարերար, գերմանաբնակ տիկին Բյուլմերինգ-Ակիմյանին[8].

Դու մի ճարպիկ մաքսանենգ ես, լոկ ճամփորդ
ես ձևանում.
Ու չես ասում՝ մեզնից քեզ հետ ի՛նչ գանձեր
ես դուրս տանում.
Ի՛նչ սիրող սիրտ, մարգրիտ վշտեր ու ի՛նչ
գոհար երազներ...
Թե իմանան՝ քեզ կբռնեն մեր աշխարհքի
սահմանում:

Հիմա բերում եմ Կապուտիկյանի բանաստեղծությունը, որ քառյակ չէ, այլ երեք քառատող և տարբերվում է նախորդից ոչ միայն տաղաչափորեն.

Իմ տունն այնտեղ է՝ քսաներորդ դարում,
Այս նորեկ դարին ես հյուր եմ միայն.
Շուրջս ամեն ինչ օտար է, ունայն,
Ուրիշ ձմեռ է, և ուրիշ գարուն:

Նույնիսկ հյուր էլ չեմ, մաքսանե՛նգ եմ ես,
Այն դարից այս դար անցել եմ թաքուն.
Թե իմանային՝ ի՛նչ կա ճամպրուկում,
Ի՛նչ լույս ու երազ, չէին թողնի ներս:

Շվար կանգնել եմ այս կռատան դեմ.
Ո՞ւր տանեմ բերած բեռս ավելորդ.
Գնամ Վերնիսաժ, Ճամպրուկս բացեմ,
Գուցե գտնվի հիմար մի գնորդ...

Ինչպես տեսնում ենք, *մաքսանենգն* այստեղ 1-ին դեմքով ներկայացող քնարական հերոսն է, որի համար ***չեզոքացել է ժամանակի ու տարածության հակադրությունը.*** դա արտահայտված է քերականական ձեռնարկներում չարձանագրված մի իրողությամբ. ժամանակի պարագան *(քսաներորդ դարում)* դարձել է տեղի պարագայի *(այնտեղ)* բացահայտիչը, և որպես այդպիսին՝ ոչ թե տեղ - տարածությունը, այլ ***տեղայնացված ժամանակն է հյուրընկալը. հյուրը*** ենթադրում է (մեկի) ժամանակավոր ներկայություն, ուստի ինչքան էլ տեղայնացված լինի, անկանգ չէ ժամանակը: Ասել է՝ աննյութական, «ժամանակավոր» ժամանակի մեջ ***ունայնություն*** է: Հյուրն էլ մի կարգին հյուր չէ. «գործելու է» մաքսանենգի ճարպկությամբ ու փութկոտ հրատապությամբ... Թումանյանի հերոսուհու *գոհար երազները* Կապուտիկյանի հերոսուհու ճամպրուկում են «հայտնվել» (այս մի «մաքսանենգությունն» էլ մենք արձանագրենք) որպես *լույս ու երազ:* Եվ, ո՞վ գիտի, գուցե հանուն մարդկային տրամաբանության և քերականական օրինաչափությունների ճշգրտության՝ *մաքսանենգին* այլ բան չի *մնում* անելու, քան ունեցած-չունեցածը ձեռքին՝ Վերնիսաժում հայտնվելը՝ հիմար մի գնորդ ճարելու հույսով...«Ճշմարտությո՞ւն եմ ծախում...սարքովի՞...». մի մաքսանենգ էլ Սևակի խաղալիք սարքողն էր...

Ինչքան էլ Թումանյանի քառյակը փոխաբերություն է, այնուամենայնիվ նրա ***«մաքսանենգի» կտրած սահմանը նյութական*** է՝ միջաշխարհն է (աշխարհքից աշխարհք «անցակետը»): Ի տարբերություն սրա՝ Կապուտիկյանի «մաքսանենգի» սահմանը նույնպես վերացական է. «անցակետը» ***դարամեջն*** է...

Այո, թումանյանական «մաքսանենգից» Կապուտիկյանինը տարբերվում է ոչ միայն տաղաչափությամբ. տրամադրությունն՝ե՛րն են տարբեր. առաջինում գոհությունն է առ վեհ ու շռայլ հոգին, երկրորդում՝ անճառելի վիճակից բխած անելությունը՝ ճարահատ համակերպումն ու համակերպումի ողբերգականությունը...

Արդ՝ մնում է ցանկալ, որ այսօրինակ «մաքսանենգությունն» անսպառ լինի մեր գրականության մեջ, և կարծում եմ՝ բանաստեղծուհու «Վերջին զանգն» էլ արդեն սովորական դարձած յուրատիպ մի *մաքսանենգության* արտահայտություն է. այսինքն՝ քանի նա կա (մեկ է, մահկանացուներիս պատկերացրած ստեղծագործունակության սահմանը արդեն խախտել է), դեռ շարունակելու է ղողանջել ի՛ր անունից, իր սերնդին պատկանելու հպարտությամբ՝ հենց այդ սերնդի՛ անունից, դարերի՛ անունից...

Միայն թե մեր վերջին զանգահարի ղողանջը լսելու պատրաստ ականջ ու հոգի է պետք ունենալ...

[1] Սիլվա Կապուտիկյան, Վերջին զանգ, Երևան, «Մուղնի» հրտ., 2006:
[2] Անդ, էջ 247:
[3] Անդ, էջք 247-248:
[4] Անդ, էջ 249:
[5] Անդ, էջ 247:
[6] Անդ, էջք 250-251:
[7] Անդ, էջք 262-263
[8] Տե՛ս Հովի. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, 2-րդ հատոր, Երևան, 1991, էջ 536:

OUR LAST BELL-RINGER
(Study of “The Last Bell” collection by Silva Kaputikyan)

DAVIT GYULZATYAN

Summary

The parts of “The Last Bell” collection by S. Kaputikyan are separated not thematically but conditioned with that of their genres, which are the following: memoirs, words of grief for men of art, interviews, publicism and poetry, which are all joined as a general theme of patriotism, contextualized with sorrow for the destiny of the motherland and alarm for future.

ԱՐԱՄ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՆԱՏՅՈՒՐՄՈՐՏԻ ԺԱՆՐԸ ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ԿԱՌԼՈՍ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ

(Նույնատիպ գործերի վերլուծություն)

Կառլոսի նկարչությունը բնութագրական առումով հարում է դեկորատիվ ստեղծագործական ուղղվածությանը, սակայն նրանում առկա են ռեալիզմի բավականաչափ տարրեր: Ընդհանուր առմամբ նրա ստեղծագործություններում պատկերահանվածները մատչելի են դիտողին: Կերպարները բնապատկերից առանձնանում են մոտեցման եղանակի մի քանի հատկանիշներով: Դրանք համեմատաբար մանրակերտ մշակված են, որի շնորհիվ ավելի ռեալիստական են դիտվում տարաշխարհիկ միջավայրում: Մանրակերտ մշակվածությունը նշանակում է ոչ թե մանրազննություն՝ առանձին մասունքներ նկարել, այլ առավելագույն ընդհանրացվածության մեջ նկարչի յուրահատուկ ձեռագրին հարազատ, առանձին մանրամասերի (դետալների) ու հատվածների գունային նուրբ, բազմերանգ վրձնահարվածների համադրում: Այնպես որ, եթե վերցնենք առանձին մի էպիզոդ, ապա այն արդեն իսկ մի ավարտուն գործ կարող է դիտվել, բայց իրականում այդ հատվածը հերոսուհու հագուստի մի զանգված է: Եվ նմանատիպ բազմաթիվ մանրամասեր կարող ենք հայտնաբերել Կառլոսի մի կտավում: Այս առումով հատկանշական են Կ. Աբովյանի նատյուրմորտները: Սրանցում նա մի քանի անգամ անդրադարձել է «Զանգյուլում» կոչվող ծաղկատեսակի թեմային, որով նկարիչը նատյուրմորտի ժանրում այն հասցրեց ազգային նկարագրի: Հայկական բնաշխարհում բուսած այս բույսը Կառլոսի կտավներում նոր շունչ է ստանում ու նորովի մեկնաբանվում: Աբովյանական վրձնով ձեռք է բերում առանձնահատկություն ու հաճելի հնչեղություն: Կառլոսի՝ դեկորատիվ բնույթ ստացած նատյուրմորտներում մեծադիր պլանով դիտված առարկաները հասցված են առավելագույն ընդհանրացման: Օրինակի համար, եթե վերցնենք «Զանգյուլում» նկարը, ապա այնտեղ կտեսնենք նույն ծաղկետեսակը՝ իբրև մի կտոր, մեկ ամբողջություն կամ միավորված մի ֆակտուրա, որը անհավասար դասավորվածության մեջ ստացել է անկանոն մի ձև: Եվ որքա՜ն հետաքրքիր ձև է գտել նկարիչը դրանց վերարտադրման եղանակում: Օրինակ՝ «Զանգյուլում» կտավում ծաղիկն ունի բնորոշ, ընդհանուր, հասուն դեղին գույն, բայց խորազնին ուսումնասիրելով՝ որքա՜ն նոր գույներ ենք հայտնաբերում դրանց մեջ: Կառլոսի այս ստեղծագործական հնարը, որը հատուկ է միայն իրեն, հասցված է զարմանալի վարպետության, դարձել է խիստ բնութագրական:

Վարպետի նատյուրմորտները վրձներգեր են՝ ծոնված բնությանը, շրջապատող աշխարհին: Նրանցում (և ոչ միայն) պեղվում են այնպիսի գուներանգներ, որոնք վաղուց ի վեր ծանոթ են հոգուդ, բայց ակնդիր լինելու հնարավորությունը նրա վրձինն է տալիս:

Խոսելով Կ.Աբովյանի նատյուրմորտների մասին՝ այժմ քննենք նրա վրձնած «Զանգյուլում» երկու կտավները՝ փորձելով համեմատական զուգահեռներ անցկացնել այս երկու գեղանկարչական հարուստ կտավների միջև: Հակառակ չափերի փոքր լինելուն (մոտ 30x20 սմ)՝ այս աշխատանքերը կատարված են գեղանկարչական բարձր վարպետությամբ և գերում են իրենց նրբաբարո, խորհրդավոր գեղունությամբ:

Առաջին «Զանգյուլումը» (կտ. յուղ.1992թ.) աչքի է ընկնում իր յուրահատուկ ձևաստեղծական մտածողությամբ: Այն դիտողին միանգամայն գրավում է իր գունային խաղաղ ներդաշնակությամբ, առարկաների ձևերի վերացարկման, մեծ ընդհանրացման սկզբունքայնությամբ: Նատյուրմորտում գլխավոր դեր է վերապահված ծաղիկներին, որ կոչվում է Զանգյուլում, և դրանց ձախ կողքին գտնվող կենցաղային առարկային, որն ավելի նման է ծավալով ոչ մեծ պղնձե տարայի: Նկարիչը կտավի ընդհանուր կոլորիտ է ընտրել մոխրասպիտակի, դեղնականաչի մեղմ երանգները, որոնք հանգստավետություն և ընդհանուր անդորրություն են հաղորդում նատյուրմորտին: Այստեղ հարթապատկերային ֆոնից

առանձնանում են ծաղիկները և պղնձե առարկան , որոնք թեև ոչ հստակորեն են առանձնանում ֆոնից, ինչպես բնապաշտական (նատուրալիստական) ստեղծագործություններում, բայց նկարչի յուրօրինակ հնարների օգնությամբ շղթայվում են ընդհանրությանը՝ տեղ-տեղ աստիճանաբար տարրալուծվելով ֆոնին: Առարկան ավելի ամուր, կուռ կառուցվածք ունի, որը երևում է նկարչի առանձնահատուկ մոտեցումից: Ընդհանուր առմամբ այս առարկան ենթարկված չէ ծավալատարածական մշակման, նրանում չկան ծավալի, կլորության, համաչափության առանձնահատուկ հատկանիշներ: Միայն վերնամասում նշմարելի է առարկայի խոռոչը, որում նկարիչը փորձել է փոքր-ինչ խորություն արտահայտել: Բացի լուսաստվերային առումից՝ այստեղ մենք ակնդետ հետևում ենք հարյուրավոր նոր նրբերանգների: Որքան փոքր է առարկան իր չափերով, այնքան հարուստ է իր արտաքին գունային ելևէջներով: Փոքր ծավալայնություն ունեցող առարկայի ներքնապատը ողողված է մի շարք հետաքրքրաշարժ, ծիածանային՝ բնության յոթ գույների աշխույժ գունախաղով: Ինչպես ծիածանի գույների աստիճանական անցումը մի տոնից մյուսին, այստեղ նույնպես նկարիչը փորձել է օգտվել բնության այդ հրաշագեղ օրենքից: Բացառված չէ, որ սա լինի ծաղկեփնջի անդրադարձը, քանի որ ծաղիկները գտնվում են նրա անմիջական հարևանությամբ: Հետաքրքիր է արված նաև առարկայի երեսպատման, գունային ձևավորման խնդիրը: Այդ նույն ծիածանախաղի նրբերանգները տարածվում են այս սափորի ողջ մակերեսով՝ առաջացնելով որոշակի դեկորատիվ ձևավորումներ: Այս հատկանիշները ընդհանրացնելու շնորհիվ մեզ կռահելի է դառնում, որ սափորը պղնձյա է, թեև այս կոմպոզիցիայի համար դա էական չէ, քանի որ դա չէ այստեղ գեղանկարչի խնդիրը: Խնդիրը առավել ընդհանրացվածությունն է և դեկորատիվ սկզբունքայնությունը, որին խիստ ինքնօրինակություն է հաղորդում նկարչի յուրահատկորեն բացառիկ ձեռագիրը: Սափորի անմիջական հարևանությամբ են ջանգյուլումները՝ իրենց աչք զարնող վառ դեղին գույներով: Սրանք նկատված են մեծ ընդհանրացվածությամբ՝ հասցված դեկորատիվության: Սրանցում հիմնականում իշխում է դեղին գույնը, բայց այն հանդես է գալիս իր աստիճանական տոնայնության անցումներով: Եզրամասերում օգտագործված են փոքր-ինչ դարչնագույների և կանաչի նոր երանգավորումներ, որոնք եթե ոչ ծավալի արտահայտման, ապա անպայման կոմպոզիցիոն հավաքման, ծաղկեփնջի եզրագծման միջոց են ծառայում: Մեղմ կանաչներին հետզհետև փոխարինում են տաք դեղին երանգները, որոնք ավելի լայն տարածություն են գտնում, այնուհետև սրանց հաջորդող կենտրոնական մասերում առկա է կիտրոնի դեղինը՝ տեղ-տեղ առավել պայծառացված: Նշենք նաև, որ կտավի մակերեսը խիստ ռելիեֆային է, մանավանդ այն հատվածները, որոնք տվյալ առարկայի առավել բնութագրական հատվածներն են: Սրանով նկարիչը ստեղծում է մեծ հետաքրքրություն, բարձրացնում ստեղծագործության գեղարվեստական, հուզարտահայտչական բովանդակությունը: Կոմպոզիցիայի ստորին զանգվածում՝ առարկայի տակ, երևում են ծավալով ոչ պարզ ինչ-որ վերացական տարրեր՝ տեղ-տեղ երկրաչափական ձևերի սրածայր վերջավորությամբ: Սրանք պատահականորեն չեն արված, քանի որ առանց այս հավելյալ էպիզոդների հնարավոր չէ, որ ամբողջ կոմպոզիցիան դիտվի իր լրիվ ավարտվածությամբ. հակառակը, այն խիստ նպաստում է կոմպոզիցիային, օգնում երկու տարբեր նյութական բաղադրություն ունեցող առարկաների միացմանը և համատեղ ներդաշնակ հնչեղությանը: Սրանց և ծաղկեփնջի սահմանագծում հեղաստեղծորեն (իմպրովիզացիոն եղանակով) հայտնված հարթապատկերային շատ փոքրիկ կարմիր գույնը դառնում է խիստ նպաստավոր և այս տոնայնությունների մեջ՝ անհրաժեշտ: Պատահական չէ, որ նկարիչը այն ընտրել է անմիջապես ջանգյուլումների դեղին ֆոնի կողքին: Ինչպես այս կտավում, այնպես էլ Կառլոսի ողջ կտավներում ինքնօրինակ ճանաչման են հասել մակերեսային ռելիեֆները, որոնք տեղ-տեղ ավելի են արտահայտվում, զանգվածային դառնում, և տեղ-տեղ էլ իսպառ անհետանում: Սրանք արտահայտվում են այն մասերում, որտեղ նկարիչը լուծում է գունային մեծ խնդիրներ. և մեղմանում կամ անհետանում են հիմնականում ետին պլանի, ֆոնի տարածական զանգվածներում՝ այն էլ մասամբ , ոչ լրիվ:

Մյուսում՝ «Ջանգյուլում» երկրորդում (կտ. յուղ. 1992թ.,), թեման նույնն է, սակայն տարբեր է մոտեցման եղանակը: Երկրորդում լրիվ այլ են գունային խնդիրները: Այլ կերպ է արտացոլված և՛ ընդհանուր կոլորիտը, և՛ առանձին մանրամասերի գունային մոտեցման վե-

ռաբերմունքը: Սա ունի ավելի մթամած կոլորիտ, գույները հնչում են մգացված տոներով: Այստեղ կա հասունության և փոքր-ինչ տագնապահարույց, անհանգիստ ներքին զգացողություն, որը անթաքույց մատնում է նկարչի՝ այդ ժամանակվա հոգեկան մտատանջ վերապրումները: Սա մի կարևորագույն բաղադրամաս է նկարչի ստեղծագործություններում՝ պայմանավորված նրանով, թե որքան անկեղծություն ու անմիջականություն կա նրա կտավներում, և ինչքան հաղորդակցական են դառնում պատկերները: Կյանքի ընկալման թարմությունը և պատկերվածի ինքնահատուկ համոզչություն հաղորդելու ձգտումը նրա ստեղծագործությունների էությունն են՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ կլինի ստեղծագործության սյուժեն, կամ ով կլինի գլխավոր հերոսը: Այս նատյուրմորտը առանձնանում է իր գունային հակադիր համեմատություններով. օրինակ՝ համընդհանուր կապույտ ֆոնին միանգամայն հակադրվում է ներքևի կարմիր զանգվածը, որը ծառայում է իբրև հարթակ՝ առարկայի համար, թեպետ այն լրիվ խորհրդանշական արտահայտություն է գտել այս կոմպոզիցիայում, որով նկարիչը ուղղակիորեն լրացրել է կոմպոզիցիան և ստեղծել գունային գործուն շեշտադրում: Կարմիր գույնը աստիճանաբար իր արտացոլումն է գտնում մյուս առարկաներում. նախ՝ սափորի վրա, այնուհետև՝ ծաղիկների ու մասամբ դրանց ցողունների վրա. վերջինս մեզ երևում է լրիվ ընդհանրացված, որպես դեկորացիա: Այստեղից՝ փոխվել է ծաղիկների երանգավորումը: Եթե նախկինում հատուկ էր կիտրոնի դեղին երանգավորումը, ապա այստեղ դրանք այնքան են փոխվել, հասունացել, որ մոտեցել են գրեթե նարնջագույնին: Սա նույնպես խոսում է նկարչի մտորումների, հուզումների, ներքին մղումների մասին, որոնք իրենց գործուն արձագանքն են գտել նրա իսկ ստեղծագործություններում: Այստեղ ջանգյուլումները խիստ կապվում են այն կարմիր զանգվածի հետ, որը գտնվում էր ստորին հատվածում, և պատահական չէր նախընտրել այդ գույնը նկարիչը, որով պետք է կերպարանափոխվեր ողջ նատյուրմորտի կոլորիտը՝ ստանալով տաք, արևակեզ փոխազդեցություն: Այստեղ, ինչպես և Կառլոսի մյուս կտավներմ, առանձնահատուկ ուշադրության է արժանանում կտավի մակերեսի ռելիեֆը, որը՝ որպես նկարչական հնար (տեխնիկա), հատուկ է Կառլոսին: Բայց յուրաքանչյուր ստեղծագործությունում դա նոր բովանդակություն է ստանում, որից կրկնակի շահում է նկարը, դառնում առավել արտահայտչական ու գեղարվեստական: Այս նատյուրմորտում դրանք առավել հնչեղությամբ ի հայտ են գալիս ֆոնի վրա, ծաղկատերևների ու ցողունների, ծաղկագլխիկների և սափորի վրա: Սրան հաջորդում են այն հնարները, երբ դուրս ցցված ռելիեֆներին նկարիչը վրձնում է աշխույժ, լուսապայծառ գույներ, այսինքն՝ կրկնակի, եռակի շեշտվում է այդ զանգվածը, ու տվյալ հատվածի հնչեղությունը՝ ինքնընստինքյան բարձրանում: Իսկ հետաքրքիրը այն է, որ տվյալ աշխուժությանն անմիջապես հաջորդում է չեզոքությունը՝ իր ողորկ մակերեսով և գույնի մգվածությամբ, որը խիստ օժանդակ գործոն է վերջինիս վառ հնչեղության համար: Օրինակ՝ այս նատյուրմորտը դիտելով՝ մենք ականատես ենք լինում ասվածիս վառ ապացույցներին. ծաղկի ցողունները՝ իրենց ընդգծված ռելիեֆով, վառվռուն գունագեղությամբ, և դրանց անմիջապես հաջորդող չեզոքությունները կանխավ ակնկալված են այս ամենին ծառայելու համար:

Շատ հետաքրքիր է արված ստեղծագործության ֆոնը. այն գեղանկարչական հիանալի մի երևույթ է: Այստեղ նույնպես առկա է ռելիեֆային այդ հնարը՝ ինչ-որ գծերի, սրածայր պատկերների ձևով: Սակայն այստեղ ամեն ինչ մեղմացված է, հանդարտած՝ հոգուտ գլխավորի. բայց և պետք է նշենք, որ չէր հնչի գլխավորը՝ իր լիարժեքությամբ, եթե լուծված չլիներ ճիշտ ֆոնի ընտրության խնդիրը: Այնպես որ, Կառլոսի կտավներում մենք պատահականության ոչինչ չենք հանդիպում. ամեն մի էպիզոդ ի սկզբանե կանխամտածված է ու հայտնված է ճիշտ տեղում:

Նկարիչը աշխարհը տեսնում էր մանրամասներում և մոտիկ տարածությունից: Միաժամանակ նա ընդհանրացնում էր իր դիտարկումները և հասնում միասնության, որը հիմնվում էր գույների գեղազարդային դասավորության՝ իրեն յուրահատուկ զգայության վրա:

Կառլոս Աբովյանի կտավները հուշում են, որ մենք գործ ունենք լրջմիտ հայրենասեր գեղանկարչի հետ, մի արվեստագետի, որն իր գործերով կարող է մեծ սեր արթնացնել: Եվ ոչ միայն հայ մարդու մեջ[1]: Նրա կտավները սիրո, քնքշության ծոներգեր են՝ օժտված միստիկական զուսպ բարեհնչությամբ:

Կառլոսի կտավներում կերպարները մանրակերտվում են: Սա վերաբերում է և՛ ձևին (տեխնիկային), և՛ էությանն ու բովանդակու-

թյանը: Ձևում յուղաներկը դասդասվում է ու երանգների խորհրդով միաձուլում է տարածքը: Բայց դա ինքնանպատակ կրավորություն չէ. գեղանկարիչը կատարելության է հասցնում այդ ձեռագիրը, դա ծառայեցնում էության արտահայտմանը, գեղարվեստական հնչեղության շռինդ ստեղծում, որում առկա են և՛ պատկերվածի անհատական հատկանիշները, և՛ արվեստագետի վերաբերմունքը դրան[2]:

[1] Հրաչյա Մաթևոսյան, Սիրով:
[2] Ս. Խալաթյան, Լոռվա գունաշխարհի խոսնակը:

THE GENRE OF STILL LIFE IN THE ART OF PAINTER KARLOS ABOVYAN
(Analysis of similar works)

ARAM HAMBARYAN

Summary

Karlos Abovyan is a patriotic painter who arouses a great love in a person's soul towards the human being and the motherland by his paintings. He is an innovator and he combines the classic and the contemporary; he is an unsurpassed master of relief painting.

ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՆ ԸՆՏՐԵՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՆՈՐ ԽՈՐՀՐԴԻ 47 ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Մայիսի 10, 2006:
Գլխավոր ասամբլեան ընտրեց նորաստեղծ Մարդու իրավունքների խորհրդի առաջին 47 անդամներին, որը, ԳԱ նախագահի խոսքերով, նոր սկիզբ է մարդու իրավունքների առաջքաշման և պաշտպանության համար: Գաղտնի քվեարկության երեք փուլերից հետո հետևյալ երկրները դարձան Մարդու իրավունքների խորհրդի անդամ՝ Ալժիր, Արգենտինա, Ադրբեջան, Բահրեն, Բանգլադեշ, Բրազիլիա, Կամերուն, Կանադա, Չինաստան, Կուբա, Չեխիայի Հանրապետություն, Ջիբութի, Էկվադոր, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գաբոն, Գերմանիա, Գանա, Գվատեմալա, Հնդկաստան, Ինդոնեզիա, Ճապոնիա, Հորդանան, Մալայզիա, Մալի, Մավրիկոս, Մեքսիկա, Մարոկկո, Նիդեռլանդներ, Նիգերիա, Պակիստան, Պերու, Ֆիլիպիններ, Լեհաստան, Կորեայի Հանրապետություն, Ռումինիա, Ռուսաստանի Դաշնություն, Սաուդյան Արաբիա, Սենեգալ, Հարավային Աֆրիկա, Շրի Լանկա, Շվեյցարիա, Թունիս, Ուկրաինա, Միացյալ Թագավորություն, Ուրուգվայ և Զամբիա:

Մարդու իրավունքների նոր Խորհուրդը՝ ստեղծված Գլխավոր ասամբլեայի 2006թ. մարտի 15-ի 60/251 որոշմամբ, փոխարինելու է ժնևում հիմնված Մարդու իրավունքների հանձնաժողովին, կջանա զբաղվել մարդու իրավունքների խախտումներով՝ ներառյալ կոպիտ և պարբերական խախտումները, և նպաստել արդյունավետ համակարգմանը և Մարդու իրավունքների հիմնական հոսանքին ՄԱԿ-ի համակարգում: Ընտրելով խորհրդի առաջին անդամներին՝ 191 անդամներից բաղկացած Ասամբլեան հետևեց մի ընթացակարգի, որն էապես տարբերվում էր հաճախ քննադատվող Մարդու իրավունքների հանձնաժողովի ընթացակարգից, որը կվերացվի հունիսի 16-ին:

Մարտին ընդունելով 60/251 որոշումը՝ Ասամբլեան մայիսի 9-ին նախատեսեց Խորհրդի անդամների ընտրություններ, իսկ հունիսի 19-ին՝ հանդիսավոր հանդիպում նոր մարմնի հետ Ժնևում: Որոշման այլ կետերի համաձայն՝ Խորհրդի առաջին 47 անդամները անհատապես կընտրվեն Ասամբլեայի անդամների 96 ձայների բացարձակ մեծամասնությամբ: Եթե Խորհրդի անդամները չկարողանան պահպանել մարդու իրավունքների բարձրագույն չափանիշները, նրանք կարող են հեռացվել պաշտոնից ժողովին ներկա Ասամբլեայի անդամների ձայների երկու երրորդով:

Նաև համաձայն 60/251 որոշման՝ Խորհրդում անդամությունը բաց է ՄԱԿ-ի բոլոր անդամ պետությունների համար: Խորհրդի անդամները կաշխատեն երեք տարի ժամկետով և իրավունք չեն ունենա անմիջապես վերընտրվելու երկու հերթական ժամկետներից հետո: Ապա Ասամբլեան որոշեց, որ անդամության պայմանները փոփոխելի են, և որ առաջին ընտրության համար նման որոշում կընդունվի վիճակահանությամբ՝ հաշվի առնելով օբյեկտիվ տարածքային բաժանումը:

Դրա հետ կապված՝ այսօրվա ընտրությունների ավարտից հետո Ասամբլեան անցկացրեց վիճակահանություն՝ ընտրելու յուրաքանչյուր տարածքային խմբում ընտրված անդամներից նրանց, ովքեր աշխատելու են համապատասխանաբար մեկ, երկու կամ երեք տարի:

Դիմելով լի դահլիճին՝ Ասամբլեայի նախագահ Ջան Էլիասոնը (Շվեդիա) նշեց, որ ստեղծելով Խորհուրդը՝ որպես Ասամբլեայի օժանդակ մարմին՝ անդամ պետություններն էլ ավելի են ուժեղացրել Մարդու իրավունքների ապարատը և բարձրացրել դրա աշխատանքի սահմանակարգային (ինստիտուցիոնալ) դիր-

քը: Այժմ ժամանակն էր՝ իրականացնելու այդ պատմական նվաճումը: Խորհրդի առաջին անդամները ունենալու էին վճռական դեր, քանի որ նրանք կայացնելու էին առաջին որոշումները: Հենց սկզբից Անդամ պետություններն առաջնորդվել էին 60/251 որոշման ձևով և բովանդակությամբ: Այն փաստը, որ ընտրության բոլոր թեկնածուները խոստումներ էին տվել և պարտականություն հայտնել՝ որոշման համաձայն, շատ քաջալերող էր:

Ընտրված անդամներն այժմ ունենալու էին կառույցները կարգավորելու և Խորհրդի առաջին հանդիպումը հունիսի 19-ին կազմակերպելու որոշակի պարտականություն: Խորհրդի աշխատանքը ղեկավարվելու էր համընդհանրության, անաչառության, օբյեկտիվության, ոչ-ընտրողականության և միջազգային երկխոսության ու համագործակցության սկզբունքներով: Այսօրվա ընտրությամբ Ասամբլեան որոշակի ցուցանիշներով իրականացրեց 2005 թ. *Համաշխարհային գագաթնաժողովի* արդյունքների մեկ այլ հանձնարարական: Այժմ գործընթացը տեղափոխվելու էր Ժնև:

Խոսելով ընտրությունից հետո՝ Զամբիայի ներկայացուցիչը Աֆրիկյան խմբի անունից ողջունեց այս պատմական ընտրությունները՝ ասելով, որ «Մարդու իրավունքների առաջքաշման ու պաշտպանության այն լուրջ աշխատանքի խոստումը, որ մենք բոլորս տվեցինք, այժմ պետք է սկսվի»: Ընտրված անդամների՝ որպես առաջնեկների մարտահրավերները ընդգրկելու էին նոր օրակարգի և աշխատանքային մեթոդների ընդունումը, որոնք կարտացոլեին զարգացման իրավունքի իրականացման կարևորությունը, ինչպես նաև մարդու իրավունքների բարոյական հարցեր, ինչպիսիք են աղքատության և տնտեսական հետամնացության վերացումը: Նորընտիր անդամները նաև ձևակերպելու էին կառույցներ՝ ապահովելու մի ուժեղ Խորհուրդ , որը կլիներ թափանցիկ և ոչ ընտրական՝ այսպիսով խուսափելով շատ քննադատվող Մարդու իրավունքների հանձնաժողովի ծուղակներից: Չնայած այդ քննադատությանը՝ Խումբն ակնկալում էր Խորհրդից ի գիտություն ընդունել դրական տարրերը՝ մասնավորապես նորմերի զարգացման և ստանդարտների հաստատման բնագավառում:

Խորհրդի անդամները նաև աջակցելու էին Մարդու իրավունքների ապարատի բարեփոխումներին՝ ավելի ուժեղ, արդյունավետ և ավելի քիչ քաղաքականացված կազմակերպություն ստեղծելու համար, որը շտապ կարձագանքի աշխարհի ցանկացած մասում Մարդու իրավունքների խախտումների դեպքում,- շարունակեց նա: Նրանք պետք է առաջնորդություն ցուցաբերեին Խորհրդի հետ համագործակցելիս՝ հետևելով որոշման այն կետին, որը նախատեսում էր սիստեմատիկ վերանայման մեխանիզմ: Խումբը համոզված էր, որ Խորհուրդը չի լինի «հին գինի նոր շշի մեջ տաբերակ», այլ կիրականացնի միջազգային համայնքի ցանկությունները: Աֆրիկյան խումբը խոստում տվեց իր մասով անել ամեն ինչ՝ իրականացնելու նոր Խորհրդի նպատակները Մարդու իրավունքների առաջքաշման և պաշտպանության գործում և երաշխավորելու, որ Մարմինը նպաստում է Մարդու իրավունքների Համընդհանուր հռչակագրում ընդունված հիմնարար սկզբունքներին:

Մեկ այլ գործով այսօր Ասամբլեան ի գիտություն ընդունեց այն փաստը, որ Դոմինիկյան Հանրապետությունը կատարել էր անհրաժեշտ վճարումը՝ իր պարտքը Խարտիայի հմ. 19 հոդվածում նշված գումարից պակասեցնելու համար:

Մայիսի 31-ից հունիսի 2-ը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բազմակողմանի ուսումնասիրության և բարձրաստիճան հանդիպման հայտարարությունում պրն էլիասոնը շնորհակալություն հայտնեց նրանց, ովքեր հետաքրքրություն էին ցուցաբերել թեմայի շուրջ կլոր սեղանների հանդեպ, և խնդրեց մնացած Անդամ պետություններին իրեն արագ տեղյակ պահել, թե արդյոք կցանկանային իրենք մասնակցել կլոր սեղանին, այնպես որ այդ իրադարձության պլանավորումն անցներ առանց հետագա հետաձգման:

ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ՝ ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԵՎՈՐԳ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ընդհանուր ֆիզիկական դաստիարակության ամբիոն

Ընտանեկան դաստիարակության բացթողումները, երբեմն դպրոցի մանկավարժների ոչ լիարժեք ուշադրությունը դեռահասների ճակատագրի նկատմամբ, դաստիարակների՝ անհրաժեշտ աջակցության բացակայությունը նպաստում են, այսպես կոչված, «դժվար դեռահասներ» համախմբի՝ դեռևս զգալի քանակ կազմելուն:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ դեռահասների բնավորության բացասական գծերը մեծ մասամբ ձևավորվում են նրանց ազատ ժամերին՝ փողոցում մեծահասակների հսկողության բացակայության պայմաններում: Այդ պատճառով «դժվար դեռահասների» դաստիարակչական աշխատանքներում հիմնական շեշտը պետք է դրվի նրանց ազատ ժամերին՝ ըստ անմիջական բնակության վայրի. այդ գործում հատուկ կարևորություն ունի թաղամասային հիմնարկներին կից տարբեր խմբակների ստեղծումը, այդ թվում՝ նաև տարբեր մարզաձևերից:

Դեռահասների վարքագծի շեղումների խնդիրների լուծման աշխատանքներում ֆիզիկական դաստիարակության և սպորտի դերը դիտվում է որպես նախապահպանություն (պրոֆիլակտիկա):

«Դժվար դեռահասները» տարբերվում են իրենց հասակակիցներից. նրանք չեն զբաղվում կամ կանոնավոր չեն զբաղվում մարզախմբակներում, կամային ցածր հատկանիշներ են ցուցաբերում և ֆիզիկապես թույլ զարգացվածություն ունեն:

Ֆիզիկական դաստիարակության և սպորտի միջոցների և մեթոդների ներգործության շնորհիվ հնարավոր է ոչ միայն բարելավել դեռահասների ֆիզիկական զարգացվածությունը և ամրապնդել առողջությունը, այլև ապահովել նախապահպանու- թյուն և շտկել նրանց վարքագծի շեղումները:

«Դժվար դեռահասների» հետ ըստ բնակության վայրի աշխատանքների կազմակերպման համար առաջին հերթին անհրաժեշտ են հատուկ պատրաստված մանկավարժներ և հրահանգիչներ: Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկական դաստիարակության բաժնի (և ոչ միայն այդ բաժնի) ուսանողների համար անհրաժեշտ է ինստիտուտում վերաբացել հասարակական մասնագիտությունների ֆակուլտետը (ՀՄՖ), որտեղ կպատրաստվեն հասարակական մարզիչներ և հրահանգիչներ (ուրիշ այլ մասնագիտությունների հետ), որոնք էլ հետագայում կլծվեն թաղամասային հիմնարկներում «դժվար դեռահասների» վերադաստիարակության ազգանվեր աշխատանքին:

ՀՄՖ-ում հասարակական մարզիչներ և հրահանգիչներ պատրաստելիս ընդհանուր ծրագրային առարկաներին զուգընթաց անհրաժեշտ է լրացուցիչ ուսուցանել դեռահասների օրգանիզմի վերակազմավորման կազմաբնախոսական (անատոմո-ֆիզիոլոգիական) նախապայմանները: Ուսանողները կծանոթանան «դժվար տարիքի» խնդիրների հիմնական տեսական մոտեցումներին, շեղված վարվելակերպով դեռահասների հոգեբանական առանձնահատկություններին: Կարևոր նշանակություն պետք է տրվի դեռահասների շեղված վարվելակերպի ակունքների և պատճառների ուսումնասիրմանը և նման վարվելակերպի կանխարգելման հնարներին:

Ապագա մանկավարժները պետք է նաև ուսումնասիրեն օրենսդրության հիմունքները, դեռահասների օրինախախտումների կատարման քրեական պատասխանատվության հարցերը: ՀՄՖ-ի այս աշխատանքների կատարման համար անհրաժեշտ է ներգրավել հասարակագիտական ամբիոնների դասախոսների, իրավաբանների, ՆԳՆ քաղաքային բաժնի մանկական սենյակների աշխատակիցների, քաղաքի փորձառու մանկավարժների և ֆիզիկական դաստիարակության ամբիոնի փորձառու դասախոսների:

Անհրաժեշտ է «դժվար դեռահասների» համար ստեղծել մարզական խմբեր. նպատակահարմար է սկսել մենապայքարային ձևերից և

մարզախաղերից (բիլիարդ, ֆուտբոլ ևն): Հատուկ մշակված աղյուսակներում (հարցաթերթիկ) կնշվեն բոլորի տվյալները (ներառյալ՝ մարդաչափական (անթրոպոմետրիկ)), նախասիրությունները, մարզական կուռքերը, ինչպես նաև սպորտով զբաղվելու նպատակները և սպասելիքները:

Մանկավարժորեն բարձիթողի վիճակի, դեռահասների հետ աշխատանքի դժվարությունը նաև այն է, որ նրանք ընդգծված բացասական վերաբերմունք ունեն բոլոր կարգի մանկավարժական գործունեությունների նկատմամբ, և անմիջական դաստիարակչական ներգործությունները ոչ միշտ են տալիս ցանկալի արդյունքներ: Այդ իսկ պատճառով «դժվար դեռահասների» հետ աշխատելիս անհրաժեշտ է օգտվել մասնակի, անուղղակի ներգործության մեթոդներից:

Նման դեռահասները մեծ մասամբ սովորաբար իրենց մարզական կուռքերը չունեն, եթե ունեն էլ, ապա դրանք կամ անվանի բռնցքամարտիկներ են, կամ ըմբիշներ, որոնց գիտեն միայն անուններով: Նրանք պատկերացում չունեն մարզման գործընթացի, ծանրաբեռնվածությունների, դժվարությունների և այն տքնանքի մասին, որով անցնում են անվանի մարզիկները:

«Դժվար դեռահասները» միայն մտածում են. «Ես ուզում եմ ուժեղ լինել, սովորել պայքարել, որպեսզի ինձնից վախենան փողոցի հասակակիցները: Ես կպարապեմ, որ ունենամ ուժեղ մկաններ և գեղեցիկ կառուցվածք»:

«Դժվար դեռահասների» մարզիչ-մանկավարժի հիմնական խնդիրը մարզման նախնական փուլում պետք է լինի գործունեության նպատակի ճիշտ մատուցման ունակությունը և դրդապատճառների ձևակերպումը՝ նրանց ֆիզիկական, հոգեբանական հնարավորություններին և բարոյական սկզբունքներին համապատասխան:

«Դժվար դեռահասներին» մարզական գործուն պարապմունքներին ներգրավելու հիմնական միջոցներ կարող են հադիսանալ ինստիտուտի, քաղաքի և հանրապետության ուժեղագույն և հայտնի մարզիկների նկարների առկայությունը մարզադահլիճում, նրանց հետ հանդիպումներն ու ելույթները, ինչպես նաև հայ և արտասահմանցի անվանի մարզիկների նկարները՝ նրանց կենսագրական տվյալներով, մարզական անցած ուղին, այն մեթոդները, որոնցով նրանք հասել են նման մարզական բարձունքների: Դեռահասներին պարբերական ուսումնամարզական պարապմունքներին ընդգրկելու հնարավորության դեպքում փոփոխվում և կատարելագործվում են նրանց հետ դաստիարակչական աշխատանքները: Ուսումնամարզական գործընթացին անհրաժեշտ է ընդգրկել ինստիտուտի անվանի մարզիկներին և քաղաքի այլ մարզադպրոցների հայտնի սաների, ինչպես նաև այնպիսի անվանի մարզիկների, որոնք նույնպես ժամանակին «դժվար» դաստիարակվողներ են եղել: Նման անմիջական շփումները հնարավորություն կտան համակազմի, թիմի ձևավորմանը, բարոյականային հատկանիշների ձևավորմանը, անձնական հետաքրքրությունների ներգրավմանը ընդհանուրին:Անհրաժեշտ է ստեղծել գործուն մի խումբ, որ օգնի մարզիչ-մանկավարժին կարգուկանոնի, մարզընթացի և նոր «դժվար դեռահասների» ներգրավման գործում:

Մանկավարժական համալիր միջոցառումների իրագործումը դժվար դեռահասների հետ նրանց ազատ ժամերին, ըստ բնակության վայրի, ոչ միայն օրինախախտման կանխարգելիչ արդյունավետ միջոց է, այլ նաև նպաստում է բազմակողմանի զարգացած անձի ներդաշնակ ձևավորմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Физическое воспитание - Учебник для ВУЗ-ов (под. ред. *В. А. Головина* и др.), Москва, Высш. школа, 1983г.

GEVORK SHAHVERDYAN

Summary

Omission in the family education, insufficient attention of the teachers of the schools to the destiny of teenagers and the absence of the instructors' support brings to the fact that the contingent of so called "difficult teenagers" is still significant.
The realization of the complex of the pedagogical actions with the "difficult teenagers" in the sphere of their spare time according to their residence is not only effective means of preventive maintenance of offences, but also promotes formation of comprehensively developed and harmonious person.

ГЕВОРК ШАГВЕРДЯН

Резюме

Упущение в семейном воспитании, недостаточное подчас внимание к судьбе подростков педагогов школ, отсутствие должной поддержки со стороны наставников, способствуют тому, что контингент, так называемых "трудных подростков" еще довольно значителен.

Осуществление комплекса педагогических мероприятий с трудными подростками в сфере их свободного времени по месту жительства является не только эффективным средством профилактики правонарушений, но и способствует формированию всесторонне развитой и гармоничной личности.

ԴԱՍՂԵԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՐՁՐ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ՄԵՋ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՍԵԴԱ ԲԵԺԱՆՅԱՆ

ՀՊՄՀ ընդհանուր մանկավարժության ամբիոնի հայցորդ

Արդի պայմաններում խիստ կարևոր է արժևորել աճող սերնդի բարոյական դաստիարակությունը: Բարոյական արժեքների դաստիարակման գերակայությունը որոշվում է նրանով, որ այն՝ որպես մարդկային կյանքի բարձրագույն իմաստ, իրականացնում է վարքի կարգավորման գործառույթ, ընդգրկում է մարդկային կյանքի բոլոր կողմերը, ներառվում է ազգային արժեքներ:

Դասղեկական աշխատանքի փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանք՝ դասղեկները, դժվարանում են բարձր դասարանցիների մեջ բարոյական արժեքների դաստիարակման գործում, մինչդեռ այդ հիմնահարցը կարևորվում է հատկապես դասղեկի գործունեության մեջ:

Այս բարդ և բազմապիսի հիմնահարցի լուծման նպատակով էլ իրականացրել ենք մանկավարժական գիտափորձ:

Փորձարարական աշխատանքները մենք դիտում ենք որպես ամբողջական գործընթաց, որը ներառում է հետազոտության մեթոդների համալիր և որն ապահովում է հետազոտության վարկածի գիտական, օբյեկտիվ և ապացուցելի հիմնավորման ճշտությունը:

Փորձարարական աշխատանքերի հիմնական խնդիրներն են.

1. Ուսումնասիրել հետազոտվող հիմնահարցը բարձր դասարանցիների մեջ բարոյական արժեքների դաստիարակման ընթացքում:

2. Փորձարկել դասղեկների՝ բարձր դասարանցիների մեջ բարոյական արժեքների դաստիարակման մանկավարժական պայմանների բացահայտման համալիրը:

3. Բարձր դասարանցիների մեջ բարոյական արժեքների դաստիարակման նպատակով դասղեկների համար մշակել, փորձարկել և ներդնել գիտագործնական երաշխավորագրեր:

Փորձարարական աշխատանքների անցկացման պայմանների արդյունավետության համար մենք ղեկավարվել ենք Յու. Բաբանսկու առաջադրած հետևյալ դրույթներով.

- հիմնահարցի նախնական վերլուծություն՝ նկատի առնելով վերջինիս պատմական ակնարկը,
- հետազոտության ընթացքում վարկածի որոշարկում և ճշգրտում,
- չափանիշների մշակում, որոնք օբյեկտիվորեն գնահատեն հետազոտության արդյունքները,
- փորձագիտական աշխատանքների արդյունավետ տևողության որոշում,
- փորձարարական աշխատանքների կազմակերպում և իրագեկության կարգաբերված ընդունում:

Մանկավարժական գիտափորձի մեջ ընդգրկվել են Վանաձորի մի շարք դպրոցների շուրջ 30 դասղեկ և 300 աշակերտ: Գիտափորձն անցկացվել է 3 փուլով: Բոլոր փուլերն էլ ենթարկվել են մեկ նպատակի և համապա-

Փորձարարական աշխատանքների հիմնական փուլերը, նպատակը, խնդիռները, բացահայտման մեթոդները

Աղյուսակ 1

Փորձարարական աշխատանքների փուլերը	Բացահայտման նպատակը	Խնդիրները	Բացահայտման մեթոդները

I փուլ՝ նախնական	հիմնահարցի ուսումնասիրումը հանրակրթական դպրոցների պրակտիկայում	դաստիարակչական գործունեության վիճակի բացահայտում հանրակրթական դպրոցների պրակտիկայում բարձր դասարանցիների մեջ բարոյական արժեքների ձևավորման գործընթացում	աշակերտների և ուսուցիչների հարցագրում. դաստիարակչական գործընթացի դիտարկում. փորձի գնահատում. դաստիարակչական իրավիճակների ստեղծում. կաղապարում
II փուլ՝ ձևավորող	մանկավարժական պայմանների համալիրի մշակում. բարոյական արժեքների մանկավարժական խթանման մեթոդներ. զանազան ձևերի և մեթոդների օգնությամբ բարոյական արժեքների դաստիարակման ծրագրի մշակում	բարձր դասարանցիների մեջ բարոյական արժեքների դաստիարակման հայեցակարգային կաղապարի փորձարկում	հարցում. դիտարկում. զրույցներ բարձր դասարանցիների և դասղեկների հետ հարցագրում. վիճակագրական մշակման մեթոդ
III փուլ՝ ստուգիչ-համակարգող	առաջադրանքի նպատակի փորձնական ստուգում. գիտական հետազոտության արդյունքների ընդհանրացում. փորձագիտության արդյունքների ձևակերպում. մանկավարժական պայմանների վերջնական մշակում. դասարանի դաստիարակչական համակարգի հիմնական կաղապարի ճշտում	փորձարարական մեթոդիկայի դաստիարակչական ազդեցության որոշում	գործունեության արդյունքերի վերլուծություն. դիտարկում. մաթեմատիկական մշակման մեթոդ. ընդհանրացում. ստացված արդյունքերի համակարգում և նկարագրում

տասխանաբար եղել են փոխկապակցված և փոխպայմանավորված: Փորձագիտական աշխատանքների փուլերը լուսաբանված են 1-ին աղյուսակում:

Բարձր դասարանցիների մեջ բարոյական արժեքների դաստիարակման համալիր մեթոդների կիրառումն ապահովել է՝

ա) անձի զգալի բարոյական արժեքների դաստիարակում,

բ) բարձր դասարանցիների հոգեբանական և սոցիալական պատրաստության ձևավորում՝ ինքնուրույնության, ինքնադաստիարակման և ինքնազարգացման համար,

գ) անձնական-կողմնորոշիչ գործունեության համապատասխանությունը սովորողների տարիքային և անհատական առանձնահատկություններին,

դ) բարձր դասարանցիներին դրականորեն

խթանելը՝ հաջողությունների և բարոյական ընտրության հասնելու համար:

Ձևավորող մանկավարժական գիտափորձը պայմանականորեն բաժանվել է 3 փուլի:

Առաջին փուլը՝ հիմնավորման (մոտիվացիոն), բնորոշ է դասղեկների և 8-րդ դասարանցիների փոխհարաբերություններին և ուղղված է գլխավորապես սովորողներին՝ խթանելու՝ ճանաչելու բարոյական նորմերը և բարոյական արժեքների նկատմամբ հարաբերությունների ձևավորումը:

Երկրորդ փուլը՝ արժեքային-կողմնորոշիչ, բնութագրական է 9-րդ դասարանցիներին և նպատակաուղղված է նրանց մեջ բարոյականության նկատմամբ հարաբերություններ ձևավորելու կարողությանը՝ բարոյական արժեքները կիրառելու որոշակի իրավիճակներում:

Երրորդ փուլը՝ արժեքային-գործառական, բնորոշ է 10-րդ դասարանցիներին. այստեղ բարոյական արժեքները դառնում են աշակերտների վարքի կարգավորիչներ: Կախված փուլից՝ ընտրվում են բարոյական արժեքների դաստիարակման և՛ մեթոդները, և՛ ձևերը:

Ինչպես փորձը ցույց է տալիս, աշակերտների բարոյական դաստիարակման կարևորագույն ձև է դասղեկական ժամը:

Մեր հետազոտության մեջ բարոյական արժեքների դաստիարակմանն ուղղված դասղեկական ժամերը կատարում են հետևյալ գործառույթները՝

ա) **լուսավորիչ,** որն ուղղված է սովորողների գիտելիքների ընդլայնմանը վարքականոնից (էթիկայից), հոգեբանությունից, փիլիսոփայությունից, գեղագիտությունից և դպրոցական առարկաներից, որոնք դիտարկում են բարոյագիտական թեմաներ.

բ) **կողմնորոշիչ,** որը զանազան իրավիճակային պայմաններում կողմնորոշում է աշակերտներին շրջակա միջավայրի օբյեկտների և սուբյեկտների նկատմամբ բարոյական հարաբերությունների ձևավորման հարցում.

գ) **իմաստային,** որը բարոյական արժեքների մասին տեսական գիտելիքներ է ձևավորում՝ իրական կենսափորձից ելնելով.

դ) **պաշտպանիչ,** որն ուղղված է անձի բարոյական կայացման հակասությունների հաղթահարմանը, դպրոցականների **համագործակցությանը**.

ե) **անդրադարձ (ռեֆլեքսիվ),** որը հնարավոր է դարձնում բարոյական արժեքների մասին ձեռք բերած գիտելիքների վերլուծումը՝ դրդիչ թեմաներով բարձրացնելու հետաքրքրությունը՝ բարոյական կատարելության հասնելու համար:

Բայոյական արժեքների դաստիարակման դասղեկական ժամերը բաժանել ենք 3 խմբի՝ մարդասիրական արժեքների դաստիարակում, բարոյական-աշխատանքային արժեքների դաստիարակում և սոցիալ-քաղաքացիական արժեքների դաստիարակում:

Դասղեկական ժամերին բարձր դասարանցիների բարոյական արժեքների դաստիարակման համար նախատեսված թեմաներ

Աղյուսակ 2

Նախատեսված դասղեկական ժամերը	Անվանումը	Անցկացման ձևը
մարդասիրական արժեքների դաստիարակման համար	«Բարոյականությունը՝ որպես հավերժական կատեգորիա», «Բարոյականության ծագումը», «Մարդասիրություն», «Առանց ընկերների ես ոչինչ եմ»	բանավեճ զրույց պրակտիկում դերային խաղ
բարոյական-աշխատանքային արժեքների դաստիարակման համար	«Տաղանդ և աշխատանք», «Մարդու հավատարիմ ընկերները», «Ի՞նչ է պարտքը», «Ո՞վ լինել, ինչպիսի՞ն լինել», «Իմ ծնողների մասնագիտությունները»	պրակտիկում երկխոսություն գրական կոմպոզիցիա բանավեճ հանդիպում ծնողների հետ

սոցիալ-քաղաքացիական արժեքների ձևավորման համար	«Ինքնատիրապետում», «Տրամադրությունը և նրա իշխելը մարդու վրա», «Առնականության և կանացիության մասին», «Մարդը և նրա ճակատագիրը», «Մարդը՝ հանրային էակ», «Ինչպե՞ս դառնալ երջանիկ»	ուսուցում հոգեբանական փորձ (էտյուդ) զրույց բանավեճ դասախոսություն

Ընդհանրացնելով մանկավարժական փորձագիտության արդյունքները՝ նշենք, որ վերջինս թույլ տվեց ապացուցելու հետևյալը.

1. Դասղեկի կողմից բարձր դասարանցիների մեջ բարոյական արժեքների դաստիարակումը կլինի արդյունավետ, եթե այն լինի հանրակրթական դպրոցի ամբողջական մանկավարժական գործընթացի անբաժանելի բաղադրամաս:

2. Մանկավարժական փորձարկումը ցույց տվեց բարոյական արժեքների դաստիարակման գործում դասղեկի, դպրոցական հանրության և ընտանիքի փոխազդեցության արդյունավետությունը:

3. Մանկավարժական փորձարկումը բացահայտեց, որ բարոյական արժեքների դաստիարակման գործընթացն ընթանում է երեք փոխկապակցված փուլերով, որոնք պայմանավորված են սովորողների տարիքային առանձնահատկություններով՝ հիմնավորման, արժեքային-կողմնորոշող, արժեքային-գործառական:

Բացահայտվել է, որ բարոյական արժեքների դաստիարակման մանկավարժական պայմանները արդյունավետորեն են իրականացվում հատկապես դասղեկական ժամերի, հանրային դերային խաղերի, բանավեճերի ժամանակ:

4. Մանկավարժական փորձարկման ժամանակ բացահայտվել է բարձր դասարանցիների մեջ բարոյական արժեքների դաստիարակման 3 մակարդակ՝ ցածր, միջին և բարձր:

Ցածր մակարդակին բնորոշ է աշակերտների ոչ գործունությունը, նպատակի բացակայությունը, ուրիշների նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, եսասիրությունը, ցածր ինքնագնահատումը, անհաշտությունը, բախումայնությունը, պարտքի բացակայությունը, անպատասխանատվությունը, կոպտությունը:

Միջին մակարդակը բնութագրվում է բարոյական գործունեության անհրաժեշտությամբ, ուրիշների նկատմամբ հարգանքի պահանջմունքային գիտակցմամբ, բարոյական նորմերի կատարմամբ՝ կախված իրադրությունից:

Երրորդ մակարդակին բնորոշ է կարգապահությունը, պարտքի զգացումը, իր արարքների համար պատասխան տալու ունակությունը, շրջապատի նկատմամբ հարգալից վերաբերմունքը, դպրոցի և դասարանի ստեղծագործական աշխատանքներին գործուն մասնակցությունը, մարդասիրության և գթասրտության դրսևորումը, բարությունը:

5. Բացահայտվել է, որ դասղեկները, իրականացնելով բարձր դասարանցիների մեջ բարոյական արժեքների դաստիարակություն, նրանց կյանքի դիրքորոշման վրա մեծ ազդեցություն են ունենում: Բարձր դասարանցիները իրենց հանդեպ դառնում են առավել պահանջկոտ, նրանց ներաշխարհն ավելի է կատարելագործվում և զարգանում, տեղի է ունենում բարոյական արժեքների և հայացքների վերագնահատում, որը շատ կարևոր է հիշյալ տարիքի դպրոցականների հոգևոր-բարոյական զարգացման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Алексев Н. А.* Понятие личностно-понятийного обучения. Завуч., 1999, N3.
2. *Бабанский Ю. К.* Избранные педагогические труды. М., “Педагогика”, 1989.
3. *Белкин А. С.* Ситуация успеха. Как ее создать? М., “Просвешение”,1991.
4. *Болдырев Н. И.* Методика воспитательной работы в школе. Учебное пособие для студентов пед. инст-ов, 2-е изд. исправ. и

доп. М., “Просвешение”, 1981.
5. *Дереклеева Н. И.* лассный руководитель. Основные направления деятельности. М., “Вербум-М”, 2001.
6. *Макаренко И. А.* Деловые игры. Воспитание школьников, 1996. N6.

THE PROCESS OF EXPERIMENTAL WORK OF FORM-MASTERS TOWARDS MORAL VALUES OF PUPILS OF UPPER GRADES AND BASIC RESULTS

SEDA BEZHANYAN

Summary

Inculcating moral values in pupils of upper grades will be productive if it is included in the whole pedagogical process, which is realized through three stages: motivation, value-orienting and value-functional.

ԷՄՄԱ ՆԱՍԻԼՅԱՆ

տ. գ. թ.

«ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ՈՒՐՎԱԳԻԾ

«Կառավարման սոցիոլոգիա և կոնկրետ սոցիոլոգիական հետազոտություններ» առարկան դասավանդվում է «Կառավարում» մասնագիտության II կուրսի II կիսամյակում, երբ ուսանողներն արդեն նախորդ կիսամյակներում ավարտել են «Սոցիոլոգիա» և «Մասնագիտական ներածություն» առարկաների դասընթացները, այսինքն՝ ծանոթ են և՛ կառավարման, և՛ սոցիոլոգիայի սկզբունքներին:

Առարկայի կարևորությունը որոշվում է նրանով, որ կառավարումը ոչ միայն տնտեսագիտական, այլ նաև սոցիալական ոլորտ է, քանի որ ուսումնասիրում է տարբեր սոցիալական խմբերի (անձ, խումբ, կազմակերպություն) միջանձնային հարաբերությունները, բարոյական, հոգեկան մթնոլորտը կոլեկտիվում: Առարկայի դասավանդման համար նախատեսվում են 34 լսարանային ժամ և լրացուցիչ 17 ժամ՝ ինքնուրույն աշխատանքի համար:

Համաձայն առարկայական ծրագրի դասավանդման՝ ամբողջ ծավալը բաժանվում է հինգ թեմայի:

Թեմա 1. Կառավարման սոցիոլոգիայի առարկան:

Թեմա 2. Կազմակերպությունը՝ որպես սոցիալական օրգանիզմ:

Թեմա 3. Միջանձնային հաղորդակցում:

Թեմա 4. Բախումների (կոնֆլիկտների) սոցիոլոգիա:

Թեմա 5. Սոցիոլոգիական հետազոտություններ:

Առաջին թեման ընդգրկում է կառավարման սոցիոլոգիայի՝ որպես առարկայի սահմանումը, նրա էությունը, սկզբունքները և պատմական զարգացման փուլերը: Առանձին ուսումասիրման առարկա է կառավարման սոցիալական բնույթը, որի շնորհիվ ավելի է պարզաբանվում և արդիականանում առարկայի դասավանդումը տվյալ մասնագիտության մեջ: Հայտնի է, որ մեր ժամանակի գործարարությանը ներկայացվում է սոցիալական կողմնորոշման պահանջ, և առաջ է քաշվում սոցիալական պատասխանատվության հիմնախնդիրը, որը նույնպես պետք է ուսումնասիրվի առաջին թեմայի սահմաններում: Կառավարման սոցիոլոգիայի տեսությունների համար բավական է ներկայացնել «Կառավարողների (մենեջերների) հեղափոխություն» և «էկզիստենցիալ կառավարում (մենեջմենթ»)» տեսությունները: Ընդհանուր առմամբ այդ թեմային կարելի է հատկացնել 4 ժամ:

Երկրորդ թեման (որի համար նախատեսվում է 6 ժամ) նախատեսում է կազմակերպության ուսումնասիրումը որպես սոցիալական օրգանիզմի: Անհրաժեշտ է, նախ, ներկայացնել կազմակերպությունների տիպաբանությանը (բաց, փակ, ձևական, ոչ ձևական, սոցիալական, տեխնիկական) և դրանց հիման վրա՝ հնարավոր կաղապարները (մոդելները): Առավել ամբողջական տիպաբանությունը բացահայտված է Ռ. Կիլմանի անդրտիպաբանության (մետատիպոլոգիայի) մեջ: Գործնական աշխատանքում պետք է քննարկվեն Ռ. Կիլմանի կազմակերպությունների չորս տիպերի օրինակները: Կազմակերպության կառավարման սոցիալական բնույթը արտահայտված է նաև Բլեյք-Մութոնի կաղապարում:

Ինչպես կառավարման, այնպես էլ սոցիոլոգիայի հիմքը միջանձնային հարաբերություններն են, ուստի երրորդ թեման պետք է վերաբերի միջանձնային հաղորդակցմանը (8 ժամ): Այստեղ անհրաժեշտ է ուսումնասիրել «անձ-կազմակերպություն» փոխհարաբերությունները և դրանց հիման վրա՝ կառավարման հիմնական տարրերի ձևավորումը՝ իշխանություն, ղեկավարում, առաջնորդում, ղեկավարման ոճ, գործակցային (կորպորատիվ) մշակույթ:

Սոցիոլոգիայի տեսանկյունից մեծ նշանակություն ունի բախումների սոցիոլոգիան, և այդ պատճառով այն պետք է ներկայացվի առանձին թեմայով (8 ժամ): Նախ՝ անհրաժեշտ է պարզաբանել բախման էության հիմնախնդիրները, առաջացման պատճառները, այնուհետև՝ ուսանողներին ներկայացնել բախումնային սոցիոլոգիայի մի շարք տեսություններ (Մ. Վեբերի, Է. Դյուրկհեյմի, Տ. Պարսոնի, Ն. Սմելսերի, Ռ. Դարենդորֆի): Ուսանողներին անհրաժեշտ է նաև

ծանոթացնել բախումների հետազոտման հնարներին (տեխնոլոգիաներին):

Դասընթացն անհրաժեշտ է ավարտել սոցիոլոգիական հետազոտումների ուսումնասիրմամբ (թեմա 5, 8 ժամ): Այդ նպատակով անհրաժեշտ է ուսանողներին ծանոթացնել հետազոտումների մեթոդիկային, տեխնիկային և տեխնոլոգիաներին, ուսումնասիրել հետազոտման հնարամիտ (ինժեներական) և զննական (կլինիկական) մոտեցումները: Կառավարման սոցիոլոգիական հետազոտումների փուլերը պետք է ուսումնասիրվեն առանձին-առանձին՝ հիմնախնդրի որոշում, այլընտրանքային որոշումների մշակում, գնահատում, որոշման ընտրություն և իրականացում: Քանի որ սոցիալական հետազոտումները իրագործում են տարբեր տեղեկատվության հիման վրա, ապա անհրաժեշտ է ուսուցանել նաև իրազեկության հավաքման մեթոդները: Կատարված հետազոտումների հիման վրա անհրաժեշտ է ուսանողներին սովորեցնել ծրագրերի, գործնական պլանների մշակման ձևերը: Վերջում 2 ժամ անհրաժեշտ է նվիրել կառավարման սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծությանը: Այս թեմայի գործնական աշխատանքի արդյունքը պետք է արտահայտվի նրանում, որ ուսանողները կարողանան ինքնուրույն (թեկուզ փորձնական օրինակներով) կատարել հետազոտումներ, անել եզրահանգումներ, կազմել ծրագրեր: Հաշվի առնելով տվյալ աշխատանքի ծավալը՝ խորհուրդ ենք տալիս այս աշխատանքի մի մասը հանձնարարել՝ կատարելու ինքնուրույն՝ որպես տնային աշխատանք, իսկ կատարած աշխատանքի մակարդակը տեսական գիտելիքների հետ համատեղ հաշվի առնել ստուգարքային գնահատման գործընթացում:

Դասախոսներին և ուսանողներին «Կառավարման սոցիոլոգիա» առարկայի ուսումնասիրման համար խորհուրդ ենք տալիս օգտվել հետևյալ գրականությունից:

1. *Кравченко И. А.* Социология: справочное пособия, М., “Московский лицей”, 1996.
2. Здравомыслов А. Г. Социология конфликта. М., “Аспект пресс”, 1996.
3. *Սուվարյան Յու. Մենեջմենթ, Ե.,* «Տնտեսագետ», 2002:
4. *Соколова Т. Н.* Экономическая социология. Минск, “Высшая школа, 1998.
5. *Кравченко И. А.* Социология для экономистов. М., 2000.

METHODS OF TEACHING THE SUBJECT “SOCIOLOGY OF MANAGEMENT AND CONCRETE SOCIOLOGICAL INVESTIGATIONS”

EMMA NASILYAN

Summary

Management is not only an economic subject, but it is also a sociological one, as an object of it6s study is interpersonal relations between various social groups and moral climate in the collective body. In the given article there are all those themes, the teaching of which can help to understand the essence of management. Concrete recommendations on the choice of special theory, methods and technology are described.

МЕТОДИКА ПРЕПОДАВАНИЯ ПРЕДМЕТА “СОЦИОЛОГИЯ МЕНЕДЖМЕНТА И КОНКРЕТНЫЕ СОЦИОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЕ”

ЭММА НАСИЛЯН
к.э.н.

Резюме

Менеджмент не только экономическая дисциплина, но и соцоилогическая, поскольку объектам его изучения является межличностные отношение между различными социальными группами и моральной климат в коллективе.

В данной статье приведены все те темы, преподавание которых может обеспечить понимание социальной сущности менеджмента. Даны конкретные рекомендации по выбору отдельных теории методии, технологии.

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆ ԴՊՐՈՑԸ ՀԱՄԱՅՆՔ - ԴՊՐՈՑ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՍՎԵՏԼԱՆԱ ՄԻՆԱՍՅԱՆ

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, IFES-ի աշխատակից

Ժողովրդավարական հասարակության կառուցումը երկարատև ու քննարկումների տեղիք տվող գործընթաց է:

Հասարակական գործուն դպրոցի (ՀԳԴ) ձևավորման միջոցներն ու առաջարկվող կաղապարը կփորձենք վերլուծել՝ ելնելով հենց «դեմոկրատիա»՝ «ժողովրդավարություն» բառից: «Դեմոկրատիա» բառը հուներեն նշանակում է «ժողովրդի իշխանություն»: ՀԳԴ-ի զարգացման ժողովրդավարական սկզբունքը ուշադրություն է դարձնում ինքնակառավարմանը և արտահայտում է «ժողովրդի կամքը»՝ դրանով իսկ նպաստելով քաղաքացիների գործուն մասնակցությանն ու ներգրավմանը հասարակական-քաղաքական գործընթացներին:

Հասարակության ու պետության առջև այսօր խնդիր է դրված վերակառուցել դպրոցն այնպես, որ այն բավարարի աշակերտների, ուսուցիչների, համայնքի բնակիչների պահանջները: Մեր ըմբռնմամբ դպրոցի վերակառուցում կամ բարենորոգում՝ նշանակում է համայնքի գործուն մասնակցություն դպրոցի կառավարման գործընթացին, որի հիմքն էլ ժողովրդավարական սկզբունքն է: Իսկ ուսումնադաստիարակչական գործընթացը պետք է համապատասխանի աշակերտների, ուսուցիչների, ծնողների շահերին, որտեղ ուշադրություն է դարձվում հնարավորությունների հավասարությանը, ուր հասարակությունը իրազեկ է օրենքներին, ուր ղեկավար մարմիններն ընտրվում են, և հաշվի է առնվում փոքրամասնության կարծիքը: Հենց այս տեսանկյունից էլ ընկալվում է հասարակական գործուն դպրոցը:

Ժողովրդավարական ուղով հասարակության զարգացումը ամենից առաջ ենթադրում է նոր արժեքների արմատակալում և զարգացում, սոցիալ-քաղաքական խնդիրներին հասարակական շերտի գործուն մասնակցություն, ապրելակերպի նոր կանոնների և հարաբերությունների հաստատում: Այս և նման խնդիրների լուծումը համալիր գործընթաց է, որի վերջնական հաղթահարումը կարող է լուրջ դերակատարում ունենալ անցման շրջանի հասարակության ձևավորման համար: Այս առումով առավել կարևորվում է դպրոցի դերը՝ իբրև նոր ժամանակաշրջանի քաղաքացու ձևավորման, նրա հայացքների զարգացման, աշխարհայացքի ընդլայնման հենարան: Փակ հասարակարգերում դպրոցը ծառայում է պետական գաղափարախոսության ամրապնդմանը: Հատկապես հասարակական գիտությունների դասավանդումը միտված է հասարակության գաղափարական- աշխարհայացքային համակարգի ամրապնդմանը. ցանկացած հարաբերություն կամ արժեքային երևույթ դիտարկվում է քաղաքականացված տեսանկյունից: Մինչդեռ ժողովրդավարական հարաբերությունների ամրապնդումը ամենից առաջ հրաժարվում է հանրակրթության բնագավառում ցանկացած սուբյեկտիվ դրսևորումից և դասավանդման կաղապարված մեթոդներից: Դպրոցական կյանքի վերափոխումը լի է դժվարություններով, նոր արժեքների անցումը պետք է ապահովել աստիճանաբար, հակառակ պարագայում համակարգի արագ վերափոխումը կարող է հանդիպել լուրջ դիմադրության: Դժվարություն է հարուցում հատկապես մասնագետների հարցը: Նախկին համակարգում դաստիարակված և կրթություն ստացած մասնագետները ակամայից հայտնվում են նոր հարաբերությունների

դաշտի մեջ և փորձում են իրականացնել ինչ-որ առումով իրենց համար դեռ անընդունելի փոփոխություններ: Նոր հարթության վրա են դիտարկվում ծնող-ուսուցիչ, ուսուցիչ-աշակերտ, դպրոց-համայնք հարաբերությունները: Այս խնդիրները «բարդել» միայն դպրոցի կամ կրթությունը իրականացնող այլ կառույցների վրա՝ ճիշտ չէ: Համակարգը պետք է լինի շահագրգիռ կողմերի ամենօրյա ուշադրության կենտրոնում: Մասնավորապես այս բնագավառում լուրջ անելիքներ ունի ՀԳԴ-ն:

ՀԳԴ-ն հանրամանկավարժական երևույթ է, որն ունի իր սկզբունքներն ու բաղադրիչները: Սա մի ընթացք է, որտեղ ձևավորվում են անհատի մտքերը, ձեռք են բերվում հմտություններ ինքնազարգացման համար: Իսկ ինքնակառավարումը դիտվում է որպես համակազմ բարեշրջություն, համակազմն էլ ուսուցման միջոցով ձեռք է բերում տարբեր հանրային խմբերի հետ համագործակցելու կարողություն և հմտություններ՝ այդպիսով նպաստելով որոշումների ընդունման մեջ բնակչության մասնակցությանը:

Վերը նշված սկզբունքների կիրառման համար հիմք կարող է հանդիսանալ «Կրթության մասին» ՀՀ օրենքի (1999թ. մայիս) 5-րդ հոդվածը, ուր կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքների թվում նշվում են՝

- կրթության բնագավառում ժողովրդավարության սկզբունքների ապահովումը.
- միջազգային կրթական համակարգում ինտեգրանցումը.
- ուսումնական հաստատությունների ողջամիտ ինքնավարությունը:

Պահանջարկից, հնարավորություններից, կարիքներից, նպատակներից, խնդիրներից ելնելով և հիմնվելով վերը նշված նորմատիվ-իրավական փաստաթղթի վրա՝ կարելի է մշակել ՀԳԴ-ի կառավարման տարբերակներ, կաղապարներ, մեխանիզմներ:

Նշենք երեք հիմնական բաղադրիչները՝ դպրոցի ժողովրդավարացում, կամավորություն, գործընկերություն: Յուրաքանչյուր բաղադրիչ կազմված է տարրերից, որոնք մշակվում և լրացվում են համայնքի և դպրոցի պահանջմունքներին ու կարիքներին համապատասխան: Դպրոցի ժողովրդավարացումը ներառում է դպրոցի կառավարման ժողովրդավարացում, դասի և դասընթացի ժողովրդավարացում, արտադասարանական աշխատանքների ժողովրդավարացում: Կամավորությունը՝ որպես հասարակական գործուն դպրոցի զարգացման բաղադրիչ, դպրոցի ժողովրդավարացման տարրերից մեկն է, որը փորձում է սոցիալական նշանակության հիմնախնդիրներ լուծել և մշակել նոր մոտեցումներ՝ դպրոցի և համայնքի հիմնախնդիրները համատեղ ջանքերով լուծելու համար: Կամավորական շարժումը հավասարազոր է սոցիալ-տնտեսական արդյունավետությանը, որի ներդրումը շոշափելիորեն զգալի է համայնքի և դպրոցի զարգացման համար: Երրորդ բաղադրիչը համագործակցությունն է: Համայնք-դպրոց համագործակցությունը ենթադրում է երկուստեք փոխներգործություն և աշխատանքների համակարգում: Ընդունված է տարբերակել ձևական և ոչ ձևական համագործակցություններ, միջհատվածային (ինտերսեկտորիալ) համագործակցություն և ցանցի զարգացման հիման վրա ձևավորված համագործակցություն: Միաժամանակ անհրաժեշտ է մշակել աշխատանքի կազմակերպման ձևեր ու մեխանիզմներ՝ տեղական ինքնակառավարման և կառավարման հանրապետական մարմինների մակարդակով համագործակցություն իրականացնելու համար:

Գտնվելով սոցիալ-տնտեսական ծանր վիճակում՝ ոչ բոլոր դպրոցներն են համարձակության դիմում՝ կիրառելու կրթական համակարգը և դպրոցն ամբողջությամբ բարելավելու նոր ձևեր ու կաղապարներ: Գոյություն ունեն բազմաթիվ կաղապարներ, որոնցից յուրաքանչյուրը յուրովի ուղղված է դպրոցի ժողովրդավարացմանը: Չնայած նրան, որ կան որոշ տարբերություններ ՀԳԴ-ի համակարգերում սկզբունքային մոտեցումների առումով, սակայն բաղադրիչները պահպանվում են:

Ինչ վերաբերում է կրթադաստիարակչական գործընթացի ժողովրդավարացմանը, ապա այն պայմանավորված է կառավարման ներդպրոցական և արտադպրոցական կառույցների առաջարկված կաղապարով, այն է՝ ուսուցչական և աշակերտական խոր-

հուրդների ստեղծում, որոնք առնչվում են աշակերտների, ծնողների, ուսուցիչների փոխհարաբերություններին: Անհրաժեշտ է նշել, որ ՀԳԴ-ի տարբեր մակարդակներում կրթական մեթոդների մշակման ժամանակ պետք է հետևել թափանցիկության, գործնական ուղղվածության և կամավորականության սկզբունքներին:

Դպրոցի ու համայնքի համար կամավորական գործունեությունը կարող է տնտեսական ազդեցության նշանակալի գործոն հանդիսանալ: Կամավորականությունը անհրաժեշտ է դիտարկել իբրև հասարակության ու պետության հիմնարար սկզբունք, այն է՝ ծառայել անշահախնդրորեն, առանց սպասելիքի և աջակցել սոցիալական կարևորություն ունեցող աշխատանքներին ու ծրագրերին: Կամավորական նախաձեռնության մեջ սոցիալական կարևորություն ներկայացնող տարրը կիրառելի ու որոշակի արդյունք ակնկալող բնույթ ունի, որն էլ նպաստում է համայնքի բնակիչների ու գործընկերների եռանդի ու հետաքրքրվածության բարձրացմանը: Կամավորի աշխատանքը պետք է համակարգված, հետևողական, նախաձեռնող և արդյունավետ լինի: Բնականաբար, դրա համար անհրաժեշտ են համապատասխան պայմաններ: Այդ պայմաններն ստեղծվում են դպրոցում տեղական համայնքի և շահագրգիռ/հետաքրքրված անձանց կողմից: Վերլուծելով համայնքի բնակիչների բոլոր տեսակետները՝ աշակերտական և ուսուցչական խորհուրդների հետ համատեղ կամավորները ուսումնասիրում են խնդիրները, անկախ կարծիքները, պարզում են պատճառահետևանքային հարաբերությունները, մշակում են, մեթոդներ, միջոցառումներ ՀԳԴ-ի համար: Համատեղ ուժերով ուսումնասիրում են սոցիալական պայմանները, ճշտում են անհրաժեշտ ծառայությունները, մշակութային միջոցառումները, ապահովում են փոխադարձ իրազեկային կապ:

Հետաքրքիր է այն փաստը, որ քաղաքացիական հասարակության ենթակառուցվածքների մասին խոսելիս մեր ուշադրությունը կենտրոնանում է ՀԳԴ-ի մեխանիզմների վրա. կամավորական շարժումը դիտարկում ենք իբրև սոցիալական հիմնախնդիրների լուծման հնարավորություն, իբրև տնտեսական ազդեցության գործոն պետական ու ոչ պետական կառույցների և, ընդհանուր առմամբ, հասարակության համար: Դրա օգտակար գործողության գործակիցն այնքան բարձր ու անգնահատելի է, որ պետությունն ու հասարակությունը պե՛տք է օգտագործեն այն ու նպաստավոր պայմաններ ստեղծեն դրա համար: Կամավորները մարմնավորում են այն ուժերն ու գիտելիքները, որոնք անցումային ժամանակաշրջանում հիմնականում բացակայում են զարգացող պետություններում, ուր «ուղեղների արտահոսքը» (արտագաղթ) և իրազեկային (կրթական) գործոնը զգալիորեն ազդում են քաղաքացիական հասարակության ենթակառուցվածքների ձևավորման վրա:

Հայաստանի Հանրապետությունում հանրակրթության խնդիրը ամբողջովին շաղկապված է անկախ պետության գործընթացի հետ: Որքանով դպրոցը դառնա ինքնուրույն, ինքնակառավարվող համակարգ, որքանով այն դիտվի իբրև հասարակության ապագա մասնագետների ստեղծման նախնական օջախ, այնքանով կուրվագծվի պետության ինքնուրույնությունն ապահովող բաղադրիչների ստեղծումը: Այս առումով չափազանց կարևորվում են հանրակրթության բնագավառում իրականացվող ռեֆորմների բնույթն ու էությունը: Որքան էլ ժողովրդավարական կանոնները ներմուծվեն կամ թելադրվեն դրսից, հարկ է, որ դրանք դպրոցաշինության բնագավառում կիրառվեն զգուշորեն: Որևէ բնագավառ այնքան փխրուն ու նուրբ չէ, որքան հանրակրթությունը: Եվ այստեղ նոր սկզբունքների և մեթոդների կիրառումը ենթարկվում է ավանդապաշտական խիստ կանոններին: Ուստի համակարգում սկսված բարելավման գործընթացները պետք է կիրառել՝ հիմքում հաշվի առնելով հանրակրթության ամբողջական (ծնող-ուսուցիչ-աշակերտ-համայնք) շահերն ու ցանկությունները, վերջնական հեռանկարում կարևորելով նաև ազգային դպրոցի ստեղծման անհրաժեշտությունը: Որքան էլ բաց հասարակությունը կամ ժողովրդավարությունը ենթադրում են ապրելակերպի համամարդկային նորմեր, այսուհանդերձ դպրոցը ազգային առանձնահատկությունները պահպանող և ամ-

րապնդող հաստատություն է:

Սակայն դպրոցների և համայնքների կառավարման ապակենտրոնացումը այդ գործընթացը ինքնին ժողովրդավար չի դարձնում: Որոշ դպրոցների ղեկավարներ կարող են գործել հին, արմատացած մեթոդներով և մերժել կամավորների աջակցությունը: Ինչքան ճիշտ է կազմակերպված կամավորական աշխատանքը, ինչքան նրանց մասնակցությունը և ազդեցությունը մեծ է «խորհրդի» որոշումների ընդունման ընթացքում, այնքան արդյունավետ են տարածվում «դպրոցական խորհրդի» կարևոր տեղեկությունները, որոնք քննարկվում են համայնքի անդամների և մասնակիցների կողմից: Սրա հետևանքով դպրոցի կառավարման ժողովրդավարական ձևը դառնում է շոշափելի, և դրա համար պատասխանատվություն են կրում նաև ուսուցիչները, ծնողները, աշակերտները: Որքան շատ է կազմակերպվող կամավորական ակցիաների, տարաբնույթ միջոցառումների, արտադասարանային աշխատանքների, հանրային կարևորություն ունեցող նախագծերի քանակը, այնքան ակներև է քաղաքացիական դաստիարակության և կրթության դերը, այնքան մեծանում է վստահությունը համայնքի և համագործակցողների միջև, քանզի ուշադրությունից չի վրիպում դպրոցական խորհուրդների կողմից բարձրացված խնդրի ոչ մի տարր:

Հիմնախնդիրները և դժվարությունները մեր կյանքում քիչ չեն: Նրանք հաղթահարելի են, եթե համայնքի բնակիչները դպրոցի ուժերի հետ վերափոխեն իրենց կյանքը: Տեղական համայնքը այդպիսի «ժողովրդավարական մասնակցության» միջոցով կարող է պատասխանատվություն ստանձնել իր հիմնախնդիրները և դժվարություններն ինքնուրույն լուծելու համար: Նշենք նրանցից հիմնականները՝ ընտանիքի և դպրոցի նյութական և սոցիալական հիմնախնդիրներ, նոր տեխնոլոգիաների և պետական աջակցության ծրագրերի բացակայություն, տեղական իշխանությունների նյութական և տեխնիկական օգնության ոչ գործունություն, ՀԳԴ-ի կառավարման և կազմակերպման բնագավառում մասնագիտների պակաս, ինքնաֆինանսավորման անցնելու պատճառով կազմակերպչական աշխատանքներում առաջացած դժվարություններ, վստահության բացակայություն բնակչության և համագործակիցների միջև: Անկատար օրենսդրական դաշտը, պահպանողականությունը, ժամանակի սղությունը, ցածր աշխատավարձը իրենց ազդեցությունն են ունենում ուսումնադաստիարակչական ընթացքի և քաղաքացիական հասարակության ձևավորման վրա: Կարելի է թվարկել ևս մի շարք դժվարություններ, որոնք պետք է հաղթահարել: Բայց ինչպե՞ս: Հովանավորներին, միջազգային ֆոնդերին, պետական կառույցներին աստիճանաբար մղելով սոցիալական համագործակցության՝ կարելի է հասնել խնդիրների լուծմանը:

Համագործակցությունը փոխշահավետության և փոխօգնության հարաբերությունների հաստատումն ու զարգացումն է դպրոցի, ուսուցիչների, աշակերտների, համայնքի բնակիչների և հովանավորների միջև՝ դպրոցի և համայնքի խնդիրները միասին լուծելու համար: Նման փոխհարաբերությունների հաստատումը կենսական անհրաժեշտություն է երկու կողմերի համար էլ: Կողմերը պետք է լավ պատկերացնեն իրավիճակը, լինեն իրազեկ և իմանան իրենց ներդրման կարևորությունը համայնքում, որպեսզի գործունորեն բարեփոխեն հանրային և կրթական համակարգերը:

Ուշագրավ է հոգաբարձուների խորհրդի դերը հասարակական գործուն դպրոցների ձևավորման ոլորտում: Աշխատանքի լավ կազմակերպման և կառավարման դեպքում հոգաբարձուների խորհուրդը կարող է դառնալ արտաբյուջետային միջոցների ներգրավման աղբյուր: Դպրոցական և հոգաբարձուների խորհուրդները կարևոր դեր են խաղում սոցիալ-կրթական հարցերի լուծման գործում:

Մեր առաջարկած կաղապարը և նրա զարգացման ուղղությունները հենված են խորհուրդների գործունեության վրա և, բացի այդ, կազմված են «Տնօրենների պալատից» և «Աշակերտների պալատից», որոնք լուծում են դպրոցների, պետական ու հասարակական հաստատությունների հարցեր: Յուրաքանչյուր պալատ ունի պարտավորություններ, իրավունքներ. նրանք փոխադարձ կապի մեջ են:

«Տնօրենների պալատը» կանոնակարգում և որոշում է արտաքին հարաբերու-

թյունների հետ կապված հարցեր, հաշվետու է «Աշակերտների պալատին» և ծնողներին՝ մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, նախարարությունների, կառավարության, միջազգային և տեղական կազմակերպությունների, գործարարների և ՀԼՄ-ների հետ տարվող տարվող աշխատանքների և բանակցությունների արդյունքների շուրջ: Վիճարկելի հարցերը քննարկվում են «Աշակերտների պալատի» հետ միասին: «Աշակերտների պալատը» ծնողների, ուսուցիչների, կամավորների, համայնքի բնակիչների հետ ծրագրում է հետագա գործունեությունը. այն է՝ ծնողկոմիտեների ու հարևան դպրոցների միջև կապերի հաստատում և գործունացում, փորձի փոխանակման միջոցով ուսումնադաստիարակչական գործընթացի մշակում, աշխույժ մասնակցություն համայնքի և դպրոցի սոցիալական խնդիրների լուծմանը, արտադասարանային աշխատանքների կազմակերպում (մրցույթներ, օլիմպիադաներ, մշակութային միջոցառումներ): «Աշակերտների պալատն» էլ իր հերթին տեղեկացնում է «Տնօրենների պալատին» և համայնքին կատարված աշխատանքի մասին: Երկու պալատները կարող են երաշխավորել մանկավարժական խորհուրդների ուսումնական ծրագրերը, իսկ հոգաբարձուների խորհրդին կամ դպրոցի խորհրդին՝ դպրոցական բյուջեները: Աշխատանքների գնահատականը տալիս են համայնքի բնակիչները, դպրոցները և համայնքի ավագանին: Մեր կարծիքով տվյալ մեխանիզմը կհանգեցնի համայնքի և դպրոցների սերտ համագործակցության և սոցիալական նշանակության, տեխնիկական, կազմակերպչական հարցերի արդյունավետ որոշման: Այժմ պահն է՝ ներկայացնելու իմ մոտեցումները ներդպրոցական ենթակառույցների ձևավորման և զարգացման շուրջ:

Այսօր դպրոց են մուտք գործել նոր ենթակառույցներ, որոնք փորձում են համագործակցել արդեն իսկ բարեշրջուն զարգացումներից հետ մնացած ենթակառույցների՝ ինչպիսիք են մանկավարժական խորհրդի, հոգաբարձուների խորհրդի հետ, որոնց աշխատանքները հասարակական գործուն դպրոցի ուղենիշներին անհամապատասխան են: Պայմանականորեն ներդպրոցական ենթակառույցները կբաշխեի երկու խմբի վրա՝ կախված տարիքային գործոնից՝ առաջին խումբ ներառելով դպրոցական, հոգաբարձուների, մանկավարժական, ծնողական խորհուրդներ, իսկ երկրորդ խումբ՝ աշակերտական խորհուրդ և այդ խորհրդի նախագահ, խորհրդարան, ընդհանուր ժողով, դասարանային խորհորդ և դասարանային խորհրդի նախագահ:

Ինչպե՞ս պետք է ձևավորվեն այս երկու խումբ կառույցները և ինչպե՞ս են մասնակցելու հասարակական գործուն դպրոցի կառավարմանը:

Հայաստանի պետական կրթական պահանջները, ինքնաֆինանսավորմանն անցնելու հետ կապված, գործող դպրոցներից շատերի համար օրախնդիր դարձրին դպրոցական խորհուրդների ձևավորումը: Շատ դպրոցներում այն բացակայում էր, իսկ մանկավարժական կադրերի մեծամասնությունը չէր էլ պատկերացնում այդ կառույցի դերն ու խնդիրը: Կրթության նախարարության ու համապատասխան գերատեսչությունների, ոլորտով զբաղվող հասարակական կազմակերպությունների, ՀԼՄ-ի պակաս հրապարակային աշխատանքի և նվազ լուսաբանման հետևանքով մանկավարժական կադրերի հսկա քանակ «իրազեկային սովի» մեջ հայտնվեց: Չուշացավ ձևավորված համապատասխան խորհուրդներ չունեցող դպրոցներին ցայտնոտի մեջ գցող մարզային գերատեսչությունների հրահանգը՝ հրատապ ստեղծել այն: Անհիրազեկ ուսուցիչների շրջանում նման գործընթացի իրականացումը հանգեցրեց նրան, որ դպրոցական խորհրդի ընտրությունը շատ դեպքերում անցավ սահմանված կարգերի խախտմամբ և կասկածի տակ դրեց այդ կառույցի՝ ժողովրդավար սկզբունքներով աշխատելու փաստը: Այս են վկայում մեր ունեցած «Հասարակական գործուն դպրոց» թեմայով տարբեր դպրոցների հետ ունեցած մեր քննարկումների արդյունքները:

Հոգաբարձուների խորհորդը, ընտրվելով փորձագետներից, իշխանության ներկայացուցիչներից, հեղինակություն ունեցող մարդկանցից, խնդիր ունի նպաստել դպրոցի կառավարման գործընթացին, սևեռել իշխանության օղակների, գործարար խավի և համայնքի ուշադրությունը դպ-

րոցի խնդիրներին՝ մշտապես պահպանելով գործնական կապեր նրանց հետ:

Մանկավարժական խորհրդի գործառույթները, թվում է, մանկավարժներին քաջ հայտնի են և դպրոցում գործող եռանդունկառույցներից են: Մինչդեռ նրան վստահված աշխատանքների հսկա մասը ուշադրությունից դուրս է մնացել: Այն մասնակիցը չի դառնում դպրոցական գրականության՝ դասագրքերի և ուսումնական ձեռնարկների ստեղծմանը և իր դիրքորոշումն ու գնահատականը չի տալիս դրանց՝ աշխատանքը թողնելով միայն մի քանի առանձին ուսուցիչների վրա: Հայտնի է այսօր, որ առկա են ուսումնական գործընթացում օգտագործվող շատ դասագրքեր, որ առաջացրել են ուսուցիչների դժգոհությունն ու զայրույթը, սակայն քչերն են արձագանքում և հայտնում իրենց դիրքորոշումներն ու մոտեցումները: Նախարարությունն ու գերատեսչությունը չորս ուսումնական տարով դպրոց մտած անհաջող բովանդակությամբ գրքերի վերահրատարակման փոփոխման ուղղությամբ մտածում է միայն վերջին չորրորդ տարում, մինչդեռ դասագիրք ստեղծելը շատ ավելի ծավալուն և աշխատատար ընթացք է ենթադրում: Կարծում եմ՝ սա հետևանք է նաև ուսուցիչների անհետևողականության, հարմարվողականության և մանկավարժական խորհուրդների՝ ցածր արդյունավետությամբ աշխատանքի:

Անմխիթար վիճակում են նաև ծնողական խորհուրդները: Պարբերաբար դպրոցներում աշակերտներից պահանջվող դպրոցական ֆոնդերի և այլնի համար գումար տրամադրելուց բացի՝ դժվար է տեսնել ծնողական խորհրդի գործուն մասնակցությունը հասարակական գործուն դպրոց ստեղծելու աշխատանքին: Շատերին կարող է անծանոթ լինել այն ծնողի անունը, որը ներկայացնում է դպրոցական խորհրդում ծնողական խորհուրդը և «ընտրվել է» իրենց կողմից: Համայնքի բնակչության հետ կազմակերպված երկխոսության խմբերի և նախաձեռնող խմբերի հետ հանդիպումներում ծնողների կողմից վեր են հանվել փաստեր, երբ ուղղակի դպրոցի ղեկավարությունը թույլ չի տալիս ծնողին ներկա գտնվել դասապրընթացին, չի տրամադրում դասամատյանից երեխայի գնահատականները՝ աստիճանաբար ծնողին հետ մղելով դպրոցի կյանքից, և հիշում նրան միայն անհրաժեշտ ֆինանսական աջակցության կամ աշակերտին վատաբանելու ժամանակ:

Աշակերտական խորհրդի և խորհրդի նախագահի, խորհրդարանի, ընդհանուր ժողովի, դասարանային խորհրդի և այդ խորհրդի նախագահի ինստիտուտները դպրոցական համակարգում ինքնավարության յուրահատուկ ձև են: Հասարակական գործուն դպրոցում աշակերտությանը լիազորելով մասնակի ինքնավարություն՝ հնարավոր կլինի դպրոցում աշակերտությանը աշխույժ մասնակիցը դարձնել կառավարման, դաստիարակչական, կազմակերպչական գործընթացներին, լսելի դարձնել նրանց ձայնը, հնարավորություն ընձեռել՝ ազատ ինքնադրսևորվելու և ինքնահաստատվելու, միաժամանակ հակակշռող ուժ լինելու դպրոցի տնօրինությանը: Այս ամենը կբերեն նրան, որ դպրոցը դառնա գործուն քաղաքացու ձևավորման գործընթացի մասնակիցը: Առավելությունների հետ մեկտեղ դպրոց են ներխուժում մոտեցումներ, որոնք մինչև կիրառելը պետք է մանրակրկիտ քննարկել: Փորձեմ ներկայացնել մի քանի մոտեցումներ, որոնք իմ կարծիքով կարող են հանրակրթական դպրոցում հաջողություն չունենալ: Այսպես՝ ՀՀ հանրակրթական հաստատության աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությամբ ուսումնական տարեսկզբին սահմանված է դպրոցական ընտրությունների մի ամբողջ շարք: Նմանատիպ կարևոր օղակների ձևավորման համար սահմանված սեղմ ժամկետները կասկածի տակ են առնում պատշաճ ընտրությունների իրականացման հույսերը: Պետք է հիշել, որ 2002-2003-ի՝ միմյանց հաջորդող տեղական ինքնակառավարման մարմինների, նախագահի, խորհրդարանական ընտրությունները քող գցեցին ներկայացված սահմանադրական հանրաքվեի գործընթացի վրա, և ըստ արժանվույն Սահմանադրության նախագիծը չներկայացվեց հանրության քննարկմանը: Ուստի պետք չէ հասարակական անհաջող մեխանիզմները մտցնել դպրոց: Նորամուծությունները դպրոց մտցնելու հետ մեկտեղ պետք է պահպանել հաջողված հինը և զարգացնել այն, ինչը ոչ բոլոր դեպքերում է այդպես: Խորհրդային

դպրոցից մեզ հասած հարուստ փորձը ուսումնասիրելիս կարելի է նկատել, որ ուսումնական տարվա մեջ նախօրոք պլանավորված միջոցառումները դասղեկը ներկայացնում է դասարանի քննարկմանը և համաձայնեցնելուց հետո միայն դասարանի հետ համատեղ իրականացնում այն: Ինքնավարությունը այն աստիճանի է ներկայացված, որ թվում է, թե ավելորդ է դասղեկի դերը դասարանում, քանզի դասարանական խորհուրդը, համաձայն վերը նշված կանոնադրության, կազմակերպում է դասարանի սովորողների առաջադիմությանը, առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ՝ առանց համաձայնեցնելու դասղեկի կամ տնօրինության հետ, փոխարենը համագործակցում է աշակերտական խորհրդի հանձնախմբերի հետ: Կարծում եմ՝ կրթության մեջ նորամուծությունները մանրակրկիտ քննարկումներ են պահանջում, քանզի կերտվում է մի ամբողջ սերունդ:

Այսքանից երևում է, որ խելամիտ կլինի շեշտադրել հասարակական գործուն դպրոցի գործառույթները որպես հանրային (սոցիալական) օղակ, որը կգործի հասարակայնության հետ և բնակչությանը կտրամադրի կրթական, մշակութային, սոցիալական ծառայություններ՝ այդ գործընթաց ներգրավելով բնակչության բոլոր շերտերը՝ անկախ տարիքից, սեռից, սոցիալական դրությունից: Յուրաքանչյուր կաղապար և ՀԳԴ-ի զարգացման եղանակները պետք է բխեն պետության, կառավարության և սոցիալական կառույցների քաղաքականությունից, պետական կրթական ծրագրերից:

Վերջում ուզում ենք միանալ այն գործընկերներին, որոնք գտնում են, որ նոր սոցիալ-տնտեսական պայմաններում դպրոցը պետք է ձեռք բերի նոր սոցիալ-տնտեսական գործառույթներ, կրթական միջոցներով հանրայնացնի դրանք բնակչության շրջանում: Մի կողմից՝ հասարակական գործուն դպրոցը համայնքի և դպրոցի միջև ստեղծում է փոխադարձ կապ, մյուս կողմից՝ գործարկում է տարբեր մոտեցումներ և կաղապարներ՝ դպրոցի կողմից համայնքի վրա ազդմելու համար և, ընդհակառակը, համայնքի միջոցները ներգրավելով կրթության զարգացման ոլորտ: Որքան էլ դպրոցը տուրք տա համընդհանրացման (գլոբալիզացիոն) գործընթացներին, միավորվի (ինտեգրվի) տարածաշրջանային իրողություններին, այսուհանդերձ նրա կարևորագույն դերը մնում է դաստիարակությունը և մասնագիտական կողմնորոշումը: Եվ, հետևաբար, այս բնագավառում իրականացվող բոլոր բարեփոխումներն ու սկզբունքային փոփոխությունները պետք է առաջնորդվեն հենց այս տեսանկյունից: Կարևոր է նշել, որ հասարակական գործուն դպրոցները կարող են դեմն առնել նաև այնպիսի իրողության, ինչպիսին են հասարակության շերտավորումը և պառակտումը, որոնք արդեն նկատելիորեն շոշափելի են Հայաստանում:

ACTIVE PUBLIC SCHOOL IN COMMUNITY-SCHOOL SYSTEM

SVETLANA MINASYAN

Summary

In new social-economic conditions the school must obtain new functions and publicize those among the population through education.

ՀԵՂԻՆԵ ԲԻՇԱՐՅԱՆ

Արցախի պետական համալսարանի ասպիրանտ

ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆԸ՝ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Մկրտիչ Խրիմյանի հասարակական-քաղաքական, կրթալուսավորական և իմաստասիրական միտքն ու հմայքը այնքան է հզոր, որ բազմաթիվ ուսումնասիրողներ նրա գործունեության տարբեր հատվածներ հակադրել են իրար, առավելությունը տվել կամ զուտ կրթալուսավորական կողմին, կամ էլ հասարակական-քաղաքականին: Բոլոր նմանատիպ մոտեցումները, մեր կարծիքով, միակողմանի են, և հեղինակները հաշվի չեն առել մի կարևոր հանգամանք. նա Խրիմյան Հայրիկն է, Հայոց Հայրիկը: Այդպիսի պատճառաբանություններ կային մասնավորապես Խրիմյանի կաթողիկոսական ընտրություններից առաջ, երբ որպես թերություն նշվում էր Խրիմյանի թույլ վարչարարությունը:

Նմանատիպ մի ուսումնասիրություն էր սփյուռքահայ հրապարակախոս Ե. Ֆրանգյանի «Հայ միտքը. Խրիմյան Հայրիկ»: Հեղինակը, բարձր գնահատելով Խրիմյանի իմաստասիրությունը, գրական-իմաստասիրական ժառանգությունը, գտնում էր, որ նա, կաթողիկոս դառնալով, նսեմացրեց իր ոգու և մտքի և բարոյական հզոր արժեքը: «....Կաթողիկոսանալով նա մի հայտնի չափով նվաստացավ որպես բարոյական հեղինակություն, որպես մտքի և հոգու մեծություն: Բնածին առաքյալը և գիտության դերվիշը ծնված չէր վարչական գործունեության համար»[1]: Խրիմյանի գործունեության, գրական ժառանգության և հայացքների արժեքավոր ուսումնասիրություն է կատարել հանրահայտ գրող ու հրապարակախոս-բանասեր Արշակ Չոպանյանը՝ լինելով Խրիմյանի ժամանակակիցն ու հայացքների ուղեկից-կողմնակիցը: «Արշակ Չոպանյանը երկու հատորի մեջ հավաքում է իր գրական-քննադատական հոդվածների մի որոշ մասը և դրանք հրատարակում «Դեմքեր» խորագրով՝ համապատասխանաբար 1924 և 1929 թվականներին»,- գրում է գրականագետ Կառլեն Դանիելյանը[2]: Հենց 1924 թ. հրատարակության մեջ էլ դրվում է «Ն. Վ. Մկրտիչ Խրիմյան» հոդվածը[3]: Մեր կարծիքով այդ հոդվածը Չոպանյանը նախաձեռնել էր ավելի վաղ (1906թ.)՝ Խրիմյանի կենդանության օրոք՝ հիանալով Խրիմյանի անձնուրաց ազգային գործունեությամբ և արժեքավոր գրական ժառանգությամբ:

«Այնտեղ, Հայաստանի սրբավայրի՝ էջմիածնա դարավոր հովանյաց տակ, մարդ մը կա որուն կյանքը մին եղավ ժամանակակից պատմության ամենեն ողբերգական ու ամենեն բարձրորեն գեղեցիկ կյանքերեն: Դեռ կանգուն՝ անխոնջ կորովով մը, հակառակ իր անհուն ցավերով ծանրացած ուքսունվեց տարիներուն բեռանը, Ն. Վ. Մկրտիչ Ա., Հայ եկեղեցվո Հայրապետը, ժողովրդյան պետի իր դերը կշարունակե կատարել»[4]:

Չոպանյանը, բազմակողմանի արժևորելով Խրիմյանի անդրանիկ գրական ստեղծագործությունները («Հրաւիրակ Արարատեան», «Հրաւիրակ երկրին Աւտեաց»), կատարում է կարևորագույն եզրահանգում. «Խրիմյան երբեք չէ ձգտած դեպի զուտ արվեստը. գրականությունը իրեն համար, ամեն բանե առաջ՝ գործունեության միջոց մը եղած է...»[5]:

Խրիմյան Հայրիկի գործունեության, ժառանգության և հայացքների ավելի մանրամասն նկարագրությունն ու վերլուծությունն է տրված Հայկ Աճեմյանի «Հայոց Հայրիկ» աշխատության մեջ[6]: Հեղինակը, անդրադառնալով Խրիմյանի անդրանիկ աշխատություններին՝ «Հրավիրակներին», գրում է. «Երկու «Հրաւիրակները»՝ Խրիմեանի երկու գլխաւոր զագցմունքների՝ քրիստոնէական և հայրենասիրական զգաց-

մունքների արտահայտութիւններն են»[7]:

Մահվան 50-ամյակի կապակցությամբ լույս տեսան Խրիմյանին նվիրված երկու ծանրակշիռ աշխատություններ Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի (Բուենոս Այրես) և Անդրանիկ Փոլադյանի (Նյու Յորք) հեղինակակցությամբ: Մեր հետազոտության խնդրո առումով առավել արժեքավոր է Ս. Մանուկյանի աշխատությունը[8]: Ա. Փոլադյանի աշխատությունը[9] Խրիմյանին նվիրված հանրամատչելի աշխատանք է, որը չի առանձնանում նոր մոտեցումներով և փաստերով: Ս. Մանուկյանը Խրիմյանի կյանքը քննարկում է որպես «1) ուսուցիչ-դաստիարակ, 2) վարդապետ, 3) գաւառի լուսաւորիչ, ազգային գործիչ եւ հարապարակագիր, 4) գրողհեղինակ, 5) Պատրիարք Կ. Պոլսոյ եւ 6) կաթողիկոս ամենայն հայոց»[10]:

«Ս. Գրիգոր Պարթեւը, կոչուած էր «Լուսաւորիչ Հայոց» իր հոգեւոր լուսաւորութեան համար: Մեծն Ներսէս Պարթեւ Հայրապետը կոչուած էր «Հայր Հայրենեաց» և «Լուսաւորիչ հայ սիրտերու»: Ներսէս Աշտարակեցին յորորջուած է «Պաշտպան Հայրենեաց», սակայն, ոչ մէկը ստացած էր «Հայոց Հայրիկ» պատուանունը»,- գրում է Ս. Մանուկյանը, «Խրիմեան մեծ էր վասնզի իր անձին վրայ մարմնացուց քրիստոնէական երեք մեծագոյն առաքինութիւններ.- հավատք, յոյս և սէր-, անիկա հաւատք ունէր հայ ժողովուրդի ապագային վրայ եւ մէծ յոյս կը տածէր անոր լուսաւորութեան և վերածնունդին համար»,- շարունակում է նա[11]:

Հարկ է նշել, որ մինչ 20-րդ դարի 50-ական թվականները Խրիմյանական թեման մտահոգել է բազմաթիվ պատմաբանների, առավելապես սփյուռքահայ, մասամբ և խորհրդահայ: Այդ տեսակետից կարևոր դիտարկումներ ունի նշանավոր պատմաբան Լեոն: Լեոն Խրիմյանին անդրադառնում է 1934-1935թթ. Փարիզում հրատարակված աշխատության մեջ[12], ինչպես նաև Գրիգոր Արծրունուն նվիրված իր աշխատանքում՝ հատկապես կաթողիկոսական ընտրությունների իրադարձությունների քննարկման շրջանակներում:

«Գլխավորապես այդ հասարակական տրամադրության ճնշման տակ էր, որ թուրքահայ պատգամավորները, որոնք անձամբ տեսել էին, թե ինչ ահագին ոգևորություն կա Խրիմյանի անվան շուրջ, որքան մեծ ժողովրդականություն ունի նրա կաթողիկոսանալը, վերջիվերջո համաձայնվեցին, որ իրանք ամենքը ձայն կտան Խրիմյանին»,- 1892թ. կաթողիկոսական ընտրությունների մասին գրում է Լեոն[13]:

Խրիմյան Հայրիկի մանկավարժական հայացքների ու ժառանգության վերլուծության բավականին հաջողված փորձ էր Կարապետ Պալճյանի աշխատությունը[14]: Հեղինակը, հետագայում Ամենայն Հայոց բազմավաստակ կաթողիկոս Վազգեն Ա-ն, բարձր է գնահատում, նույնիսկ գերագնահատում Խրիմյանի դերն ու նշանակությունը ազգային դաստիարակության գործում՝ նրան համարելով հայ մանկավարժության հայր:

«Հայ ժողովուրդը Ինքզինքը երջանիկ պետք է համարե, որ ուրիշ մեծերու կողքին ունի նաև իր Խրիմյան Հայրիկը, իր մշտապես կենդանի, մեծ դաստիարակը, որ այսօր ալ տակավին հոնկե, ուր որ է, տխուր աչքերով կը նայի իր սիրելի ժողովուրդին ու կը հետևի անոր քայլերուն՝ մերթ տրտմելով, մերթ զայրանալով, մերթ ուրախանալով,- գրում է Վազգեն Ա-ն[15]: Իր ուսումնասիրությունը հեղինակը բաժանել է ինը գլուխների՝ Ա-ից Թ, որոնց մեջ որոշակի հաջողությամբ քննարկել է Խրիմյանի սոցիալ-մանկավարժական հայացքները՝ ճիշտ նկատելով, որ դրանք ազգային դաստիարակի հայացքներ են և «մնայուն արժեք մըն է, որ միշտ կրնա իբր ուղեցույց ծառայել որևէ ժողովրդական դաստիարակության՝ պատշաճելով ընկերային-տնտեսական նորագույն պայմաններուն»[16]:

Բարձրարժեք վերլուծություն կատարելով հանդերձ՝ բազմավաստակ հեղինակը նշում է նաև Խրիմյանի մանկավարժական հայացքների թերի կողմերը: Մասնավորապես, ըստ հեղինակի, Խրիմյանը ուշադրությունից դուրս է թողել ժողովրդական բանահյուսության (ֆոլքլորի) դաստիարակող ձևերը: Այս հարցում մենք լիովին չենք կիսում պատվարժան հեղինակի կարծիքը: Որպես Խրիմյանի մոտեցումների թերություն՝ հեղինակը նշում է նաև առողջապահական (մարմնակրթական) և քաղաքացիական դաստիարակության հարցերին «նվազ կարևորություն» տալը:

«Խրիմյան սովորական մարդ մը չէ և ոչ ալ սովորական մանկավարժ մը: Առանց վարանումի կրնանք ըսել, թե ան մեծագույն դաստիարակներեն մին է ոչ միայն հայկա-

կան չափերով, այլ անոր գործը կրնա փառավոր տեղ մը գրավել աշխարհի մեծ մանկավարժներուն շարքին, որպես ինքնատիպ ստեղծագործ»[17]:

Ուշագրավ դիտողություն է անում հեղինակը Խրիմյանի մտածողության և մանկավարժական ընկալումների մասին. «Դժվար է Խրիմյանի մտածումը «սիսթեմի» մը վերածել, նախ, որովհետև ինքը՝ գործը, ձևականորեն սիսթեմատիկ չէ, «դրություն» մը չէ: Խրիմյան տեսակետներ սկզբունքներ չունի, անոր համար անջատ հարցեր, խնդիրներ գոյություն չունին: Մտածումը երկրաչափական չէ, ձևական օրենքներ չի ճանչնար, ոչ ալ չոր տրամաբանական դասավորումներ:

Խրիմյան կը մտածե միաժամանակ մտքով ու սրտով.... անոր միտքը կը գործե ոչ թե տարրալուծելով, այլ համադրելով:

Ձինքը առաջնորդողը վերացական գաղափարները չեն, այլ կոնկրետ իրականությունները՝ այնպես, ինչպես անոնք կան իր զգայարաններուն, իր սրտին ու դատողության առաջ»[18]:

Խրիմյանի կենդանության ժամանակից մինչև մեր օրերը Խրիմյանական թեմային (կենսագրությանը, հայացքներին, ժառանգությանը, գործունեությանը) անդրադարձել են ավելի քան 85 հեղինակներ: Այդ հեղինակների աշխատանքներում (հոդվածներ, մենագրություններ, հոբելյանական ու հիշատակի ժողովածուներ) առանձնապես աչքի է ընկնում Էմմա Կոստանդյանի «Մկրտիչ Խրիմյան. հասարակական-քաղաքական գործունեությունը» աշխատությունը[19]: Աշխատության յոթ գլուխներում գիտական բարձր մակարդակով և փաստարկումներով տրված են Խրիմյանի հասարակական գործունեության սկզբնավորումը, գործունեությունը Վասպուրականում և Տարոնում, Կ. Պոլսի պատրիարքությունն ու դրանից հրաժարվելը, կաթողիկոսությունը և իհարկե Խրիմյանական աղբյուրագիտությունը: Է. Կոստամդյանը կատարել է հսկայական ու քրտնաջան աշխատանք, ուսումնասիրել արխիվային, թանգարանային նյութեր, հայերեն ու ռուսերեն աղբյուրներ: Է. Կոստանդյանի աշխատանքի արժեքը կարելի է գնահատել մեկ մտքով՝ այն, որ նա ունի ամբողջացված աղբյուրագիտական բովանդակություն: Մեր կարծիքով գիտնականի ուշադրությունից դուրս են մնացել որոշ աշխատանքներ, մասնավորապես՝ Տիգրան Փիրումյանցի հիշատակված աշխատանքը:

Է. Կոստանդյանը, բարձր գնահատելով Խրիմյանի դերը, գրում է. «Առաջին կաթողիկոսական թեկնածուն էր, որ ընտրվեց միաձայն և աշխարհիկ, և հոգևոր պատգամավորների կողմից: Առաջին կաթողիկոսն էր, որ համարձակվեց չհնազանդվել տիրող պետության՝ ցարիզմի, անձամբ Նիկոլայ 2-րդի հրամանին՝ հայ եկեղեցու շարժական և անշարժ գույքը հարքունիս գրավելու մասին»[20]: Օրինակելի է հատկապես Է. Կոստանդյանի անաչառ, սկզբունքային և հարգալից վերաբերմունքը Խրիմյանական հեղինակներին ու նրանց աշխատանքներին: Նա կարծես «վարակվել է իր հերոսի» քրիստոնեական վարքով ու առաքինությամբ:

Է. Կոստանդյանը բավականին մանրամասն է քննարկում Խրիմյանի «Արծուի Վասպուրականի» հանդեսի գործունեությունն ու նշանակությունը արևմտահայ մամուլի զարգացման գործում: «Հայ պարբերական մամուլի պատմության մեջ «Արծուի Վասպուրականի» պոլսյան շրջանը աչքի չի ընկնում նորարարությամբ: Սակայն նա ուներ իր յուրահատուկ տեղը, որ ճանապարհ հարթեց Արևմտյան Հայաստանի տարածքում մամուլի հրատարակության համար»[21]:

Է. Կոստանդյանի աշխատության կարևորագույն կողմերից է այն, որ Խրիմյան գործչի կերպարն ու գործունեությունը տրվում է ժամանակաշրջանի իրադարձությունների օբյեկտիվ և իրական գնահատականներին զուգահեռ՝ վիճարկելով այլ հեղինակների մոտեցումները ժամանակաշրջանի ու Խրիմյանի մասին: Հեղինակը նպատակային մոտեցմամբ շրջանցում է Խրիմյանի զուտ կենսագրական վերլուծությունը, սակայն աշխատանքի շարադրանքը, ինչպես նշում էր Վազգեն Ա-ն, համադրական կառուցվածք ունի՝ Խրիմյանական մտածողությանը համահունչ: Բավականին համոզիչ են ու փաստարկված Խրիմյանի՝ պատրիարքական ու կաթողիկոսական շրջանի գործունեության վիճելի կողմերի բացատրությունները մասնավորապես Հայկական հարցի միջազգայնացման վերաբերյալ:

Ճիշտ է, Է. Կոստանդյանի աշխատությունը հիմնականում վերաբերում է Խրիմյանի հասարակական-քաղաքական գործունեությանը, սակայն գիտնականը, հետևողականորեն հիմք ընդունելով Խրիմյանի գրական ժառանգությունը, բացահայ-

տում է նաև Խրիմյանի հայացքների փիլիսոփայությունը՝ ազգային-հայրենասիրական քրիստոնեություն, քրիստոնեություն առանց սահմանների: Խրիմյանի մեծությունը շատ խրիմյանագիրների շփոթության է մատնել, ուստի և հաճախ կենսագրական ուսումնասիրություններում ակնհայտ էին հակասություններ: Մասնավորապես 1892 թ.՝ կաթողիկոսական ընտրություններից առաջ, Թիֆլիսում լույս տեսավ Խաչատուր Մալումյանի «Խրիմյան Հայրիկ» կենսագրական տեսությունը[22]: Բավականին հաջող շարադրանքով, մասամբ էլ գեղարվեստականացված աշխատանքը հարուստ նյութ է տալիս Խրիմյանի կենսագրության առանձին էջերի մասին: Մշակական հեղինակը, սակայն, արտահայտում է հակասական մտքեր Խրիմյանի կրթություն ստանալու մասին: Մի դեպքում նա նշում է, որ Ախթամար, Լիմ և Կտուց անապատները (մենաստաններ) ունեին հարուստ գրականություն և բարձրակարգ վարդապետներ, ուր հաճախ էր այցելում պատանի Մրկտիչը, նույնիսկ միառժամանակ մնաց որպես աշակերտ Լիմ և Կտուց անապատներում: Մյուս կողմից հիացական կասկած է հայտնում դպրոց չհաճախած պատանու բանիմացության և խոր գիտելիքների մասին: Հեղինակը մինչ այդ էլ փաստում է, որ «Երեսնական թվականներին Վանում ուսումնարաններ չը կային»[23]: «Ախթամար, Լիմ և Կտուց անապատները, որոնք գտնվում են Վանի ծովակի մէջ, այն ժամանակ յայտնի էին իբրև վանական նշանաւոր կենտրոններ՝ իրանց միաբանութիւններով, որոնց մէջ կային եկեղեցական գրականութեան քաջ ծանօթ վարդապետներ: Խրիմեան սիրով գնում էր դրանց մօտ: Միառժամանակ նա մնաց Լիմ և Կտուց անապատներում, աշակերտեց այդտեղ, և ստացավ, թէև միակողմանի, բայց հարուստ մտաւոր պաշար, մօտիկ ծանօթանալով եկեղեցական գրականութեան և գրաբար լեզուին»[24]:

Մալումյանի աշխատանքում բավականին օբյեկտիվ են տրված Արևմտահայ Սահմանադրական շարժումներն ու դրանց բարդությունները և Խրիմյանի դերակատարումն այդ ասպարեզում: Մեծ հիացմունքով ու սիրով են ներկայացվում Խրիմյանի գաղափարակից-աջակիցները՝ Օտյանները, Պալյանները, Մ. Փորթուգալյանը, Ն. Վարժապետյանը, Ս. Տատյանը, Ն. Ռուսինյանը: Ի դեպ. Խրիմյանի շուքի տակ բավականին մանրամասն ու աշխարհագրական-ճարտարապետական նկարագրություններ կան Վանի և մասնավորապես Վարագա Վանքի մասին:

19-րդ դարը հայ ժողովրդի համար եղել է բախտավճիռ ժամանակաշրջան և ունեցել տարբեր անվանումներ: Մեր կարծիքով այն իրավամբ կարելի է անվանել նաև Խրիմյանական դար (թեև չափազանցված): Ուստի 19-րդ դարի վերաբերյալ բոլոր ուսումնասիրությունները ուղակի կամ անուղակի վերաբերել ու առնչվել են Խրիմյանին:

Նպատակ չունենք մեր խոսքի այս հատվածում մանրամասնել բոլորը, հավուր պատշաճի կանդրադառնանք նրանց: Այսուհանդերձ կուզենայինք խոսել մի արժեքավոր հետազոտության մասին: 1988թ. լույս տեսավ հանգուցյալ պատմաբան, պրոֆեսոր Հայկազ Պողոսյանի «Վասպուրականի պատմությունից (1850-1900)» աշխատությունը[25]:

Աշխատության չորրորդ գլուխը (101-156 էջեր) նվիրված է Մ. Խրիմյանի գործունեությանը Վասպուրականում 1850-1900թթ., սակայն հեղինակը շահեկան շեղումներ է կատարում ժամանակագրական առումներով, քննարկում Խրիմյանի պատրիարքության շրջանը, ավելի մանրամասն կանգ առնում «Արծուի Վասպուրականի» հրատարակության ու նշանակության վրա:

Հ. Պողոսյանը ևս զերծ չէր հիացած հետազոտողի ոգուց, սակայն օբյեկտիվ վերաբերմունք դրսևորելով՝ նկարագրում է նաև հակախրիմյանական միտումները:

Հայկազ Պողոսյանին հատկապես հաջողվել է խորությամբ ու բազմակողմանիորեն քննել «Արծուի»-ի առանձին շահեկան հոդվածներ հայ պանդուխտների, հայ դպրոցների, ի վերջո Հայաստանի ազատագրության մասին, որ արդիական են նաև այսօր:

---

[1] *Ֆրանգյան Ե.,* Հայ միտքը. Խրիմյան Հայրիկ, Գահիրե, 1925, էջ 7:

[2] *Արշակ Չոպանյան,* երկեր, Ե., 1988, էջ 6:

[3] Նույն տեղում, էջ 435-455:

[4] *Չոպանյան Արշակ,* երկեր, Ե., 1988, էջ 435:

[5] Նույն տեղում, էջ 439:

[6] *Աճեմյան Հայկ,* Հայոց Հայրիկ, Թավրիզ, 1929:

[7] Նույն տեղում, էջ 13:

[8] *Մանուկյան Սիոն,* Հայոց Հայրիկ (1820-1907), Պու-

ենոս Այրես, 1957:
[9] *Փոլադյան Անդրանիկ,* Խրիմյան Հայրիկ, Նյու Յորք, 1957:
[10] *Մանուկյան Սիոն,* Հայոց Հայրիկ (1820-1907), Պուենոս Այրես, 1957, էջ 6:
[11] Նույն տեղում, էջ 8-9:
[12] *Լեո,* Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, Հտ. Ա., 1934, հտ. բ., 1935, Փարիզ:
[13] *Լեո,* հտ. 6, Ե, 1987, էջ 707:
[14] Վազգեն Ա. կաթողիկոս (Կարապետ Պալճյան) Գալիքի տեսիլքով, Ե., 1988, էջ 77-188, Խրիմյան Հայրիկ որպես դաստիարակ, Պուքրեշ, 1942:
[15] Վազգեն Ա կաթողիկոս, Գալիքի Տեսիլքով, Ե., 1988թ., էջ 187:
[16] Նույն տեղում:
[17] Նույն տեղում, էջ 86:
[18] *Վազգեն Ա,* Գալիքի Տեսիլքով, Ե., 1988, էջ 86-87:
[19] *Կոստանդյան Էմմա,* Խրիմյան Հայրիկ, հասարակական-քաղաքական գործունեությունը, Ե., 2000:
[20] *Կոստանդյան Էմմա,* Մկրտիչ Խրիմյան Հասարակական-քաղաքական գործունեությունը, Ե., 2000, էջ 6:
[21] Նույն տեղում, էջ 57:
[22] *Մալումյան Խաչատուր,* Խրիմեան Հայրիկ, կենսագրական տեսություն, Թիֆլիս, 1982:
[23] Նույն տեղում, էջ 4:
[24] Նույն տեղում, էջ 6-7:
[25] *Պողոսյան Հ. Մ.,* Վասպուրականի պատմությունից (1850-1900), Ե., 1988, էջ 101-156:

"APPRAISAL OF MKRTICH KHRIMYAN BY ARMENIAN PUBLIC THOUGHT"

HEGHINE BISHARYAN

Summary

The author discusses the point of views of the researchers of the activity, life and views of Catholicos of All Armenians M. Khrimyan, with the help of which to once again valuing the Catholicos.

ՀՈՒՇԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿԻՆ

Հոդվածների ընդունման կարգը

«Վասն արդարութեան» հանդեսում տպագրության համար ներկայացվող գիտական հոդվածները՝

1. խմբագրությանը հանձնվում են էլ. փոստի միջոցով կամ պնակիտով (floppy disk).
2. ունենում են համապատասխան ամփոփումներ.
3. պարունակում են գրականության ցանկ.
4. բովանդակում են անհրաժեշտ հղում-ծանոթագրություններ.
5. խմբագրությանն են ներկայացվում՝ հնարավորինս զերծ համակարգչային մուտքագրման սխալներից.
6. ռուսերեն հոդվածները համակարգիչ մուտքագրված են լինում ռուսական տառատեսակով (font) (չօգտագործել Times New Roman, Arial, Courier և այլ բազմալեզու տառատեսակներ).
7. գրաֆիկական ֆայլերը (նկարներ, գրաֆիկական օբյեկտներ և այլն) ունենում են նվազագույնը 300 dpi կետային խտություն.
8. «և» տառը ներկայացվում է մեկ գրանիշով՝ *և* (եւ-ի փոխարեն).
9. հոդվածները կից ունենում են անհրաժեշտ տվյալներ հեղինակ(ներ)ի մասին (այդ թվում՝ հեռախոսահամար):

Հոդվածների ընտրության կարգը

«Վասն արդարութեան» հանդեսի խմբագրությունում ստացված հոդվածների նախնական ընտրությունը կատարում է հանդեսի գլխավոր խմբագիրը, այնուհետև հոդվածը հնարավոր միջոցներով ուղարկվում է հանդեսի գիտական խմբագրական խորհրդի համապատասխան անդամ(ներ)ին՝ գրախոսության:

Տպագրվում են դրական գրախոսության արժանացած հոդվածները:

Գրախոսության համար խմբագրությունը կարող է դիմել նաև այլ՝ ոչ խմբագրական խորհրդի անդամ մասնագետի: Ընդունելի են նաև հոդվածի հեղինակի ուղարկած՝ իր հոդվածին վերաբերող գրախոսություններ, եթե վերջիններիս հեղինակը գիտությունների դոկտոր կամ թեկնածու է:

Գիտությունների դոկտորների և թեկնածուների հոդվածները կարող են չգրախոսվել: